

## **Օրենքը (Թարգմանություն ըստ Սթիրլինգի, 1874)**

[Այս էսսեյը հրատարակվել է ֆրանսերենով 1850թ.: Այս մասը հրատարակվել է անգլերենով՝ որպես Քաղաքական տնտեսության վերաբերյալ էսսեների մաս (Գ.Փ. Փուլնամս և որդիներ, 1874)՝ Փաթրիք Ջեյմս Սթիրլինգի կողմից արված հեղինակավոր թարգմանությամբ և Դեվիդ Վելսի կողմից կատարված փոփոխություններով: Ուղղագրությունն ըստ ամերիկյան անգլերենի է:]

Օրենքը խեղաթյուրվել է: Օրենքը, ներառյալ ազգի ամբողջ հավաքական ուժերը, ոչ միայն շեղվել է իր պատշաճ ուղղությունից, այլև հետամուտ է եղել ամբողջովին հակառակ բանում: Օրենքը դարձել է ամեն տեսակի ազահության գործիք՝ դրա զսպամիջոցը լինելու փոխարեն: Օրենքը մեղավոր է հենց այն ապօրինության մեջ, որը պատժելու առաքելությունն իրեն էր պատկանում: Իրոք, սա լուրջ փաստ է, եթե գոյություն ունի, և ես պատասխանատու եմ զգում՝ հրավիրել իմ համաքաղաքացիների ուշադրությունը:

Մենք Աստծուց պարզև ունենք, որը, որքանով մեզ հայտնի է, պարունակում է ամենը՝ ներառյալ կյանք՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական կյանք:

Բայց կյանքը չի կարող ինքն իրեն աջակցել: Նա, ով շնորհել է այն, վստահել է մեզ այն օժանդակելու, զարգացնելու և կատարելության հասցնելու համար: Այդ նպատակով նա մեզ ապահովել է հիանալի ընդունակությունների հավաքածուով, նա ներքաշել է մեզ մի շարք տարրերի մեջ: Այս տարրերի նկատմամբ մեր ընդունակությունների կիրառմամբ է, որ իրականացվում է նմանեցում և յուրացում, որով կյանքը հետևում է շրջանին, որ իրեն է նշանակվել:

Գոյություն, ընդունակություններ, նմանեցում՝ այլ կերպ ասած՝ անհատականություն, ազատություն, սեփականություն . սա է մարդը:

Հենց այս երեք բաներից է, որ կարելի է եզրակացնել, բացի բոլոր դեմագոգ նրբություններից, որ նրանք նախորդում և գերադասում են ամբողջ մարդկային օրենսդրությանը:

Բանը նրանում չէ, որ անհատականությունը, ազատությունը և սեփականությունը գոյություն ունեն, քանի որ մարդիկ ստեղծել են օրենքներ: Հակառակը՝ անհատականությունը, ազատությունը և սեփականությունը գոյություն են ունեցել նախքան մարդիկ օրենքներ կսկսեին ստեղծել: Այդ դեպքում ի՞նչ է օրենքը: Ինչպես ես մեկ այլ տեղ նշել եմ, այն օրինական պաշտպանության անհատական իրավունքի հավաքական կառուցվածքն է:

Բնությունը, ավելի ճիշտ՝ Աստված, մեզնից յուրաքանչյուրին շնորհել է իրավունք՝ պաշպանել իր անհատականությունը, ազատությունը և

սեփականությունը, քանի որ սրանք կյանքի բաղադրիչ կամ պահպանիչ երեք տարրերն են – տարրեր, որոնցից յուրաքանչյուրը ամբողջական է դառնում մյուսների հետ միասին և չի կարող հասկացվել առանց դրանց: Ինչի՞ համար են մեր ընդունակությունները, եթե ոչ մեր անհատականության ընդլայնման: Եվ ի՞նչ է սեփականությունը, եթե ոչ մեր ընդունակությունների ընդլայնում:

Եթե ցանկացած մարդ ունի իր անհատականությունը, ազատությունը և սեփականությունը պաշտպանելու իրավունք՝ նույնիսկ ուժով, մի շարք մարդիկ իրավունքն ունեն միավորվել, ընդլայնվել, կազմակերպել միասնական ուժ՝ պարբերաբար ապահովելու համար այս պաշտպանությունը:

Հավաքական իրավունքը, այնուամենայնիվ, ունի իր սկզբունքը, գոյություն ունենալու պատճառը, օրինականությունը, անհատական իրավունքը: Եվ միասնական ուժը չի կարող ռացիոնալ կերպով այլ ավարտ կամ այլ առաքելություն ունենալ, քան անհատ ուժերինը, որոնց այն փոխարինում է: Հետևաբար, քանի որ անհատի ուժը չի կարող օրինապես դիպչել մեկ այլ անհատի անհատականությանը, անկախությանը կամ սեփականությանը, հենց նույն պատճառով էլ միասնական ուժը չի կարող օրինապես օգտագործվել անհատի կամ դասակարգերի անհատականությունը, անկախությունը կամ սեփականությունը ոչնչացնելու համար:

Սրա համար ուժի այս խեղաթյուրումը, ինչպես մի դեպքում, այնպես էլ մյուս, կլինի ի հակառակ մեր նախադրյալների: Ո՞վ կհամարձակվի ասել, որ ուժը տրվել է մեզ ոչ թե մեր իրավունքները պաշտպանելու, այլ մեր եղբայրների հավասար իրավունքները ոտնահարելու համար: Եվ եթե սա ճշմարիտ չէ յուրաքանչյուր անհատ ուժի համար, որ գործում է անկախ, ինչպե՞ս կարող է այն ճշմարիտ լինել հավաքական ուժի համար, որը միայն անհատ ուժերի կազմակերպված միությունն է:

Հետևաբար, սրանից առավել ակնհայտ բան չի կարող լինել: Օրենքը օրինական պաշտպանության բնական իրավունքի կազմակերպումն է: Այն անհատական ուժերի փոխարինումն է հավաքականով՝ այն նպատակով, որ գործեն այն ոլորտներում, որտեղ իրավունք ունեն գործելու այն, ինչի իրավունքը ունեն՝ պաշտպանելու համար անհատականությունը, անկախությունը և սեփականությունը, ինչպես նաև յուրաքանչյուրին իր իրավունքի մեջ պահելու համար, որպեսզի արդարություն ստեղծվի բոլորի համար:

Եվ եթե այս հիմքի վրա հիմնված ժողովուրդ գոյություն ունենար, կարծում եմ, որ այդ կարգը կհաղթեր նրանց իրենց գործողություններում, ինչպես նաև իրենց գաղափարներում: Ինձ թվում է, որ այս ժողովուրդը կունենար ամենապարզ, ամենատնտեսող, ամենաքիչ ճնշումով, ամենաքիչ զգացմունքայնությամբ, ամենաքիչ պատասխանատվությամբ, ամենաարդարացի և, հետևաբար, ամենակայուն կառավարությունը, որը կարելի է պատկերացնել՝ անկախ իր քաղաքական ձևից:

Քանի որ նման վարչարարության ժամանակ բոլորը կզգային, որ իրենց է պատկանում ամբողջ լիակատարությունը, ինչպես նաև իրենց գոյության ամբողջ պատասխանատվությունը: Որքան անհատական անվտանգությունն ապահովված էր, այնքան էլ աշխատանքն ազատ էր, և աշխատանքի բարիքները ապահովված էին բոլոր անօրինական հարձակումներից, ոչ ոքի մոտ պետության հետ վիճաբանության մեջ մտնելու խնդիր չէր լինի: Երբ բարգավաճում ենք, ճիշտ է, պետք չէ շնորհակալություն հայտնել պետությանը մեր հաջողության համար, բայց երբ ձախողվում ենք, չպետք է այլևս մտածենք մեր աղետների հարկերի մասին, այնպես ինչպես մեր գյուղացիները մտածում են դա կարկտին կամ ցրտին վերագրելու մասին: Մենք դա պետք է իմանանք միայն անվտանգության անբեկանելի օրինությամբ:

Հետագայում կարող է հաստատվել, որ ի շնորհիվ պետության՝ մասնավոր գործերի մեջ չմիջամտելու՝ մեր ցանկություններն ու դրանց բավարարումները կզարգանան իրենց բնական հունով: Մենք չպետք է տեսնենք աղքատ ընտանիքներ, որոնք մինչև հացով ապահովվելը ձգտում են դեպի գրական ուսուցում: Մենք չպետք է տեսնենք քաղաքներ, որոնք լցվել են գյուղական շրջանների հաշվին, ոչ էլ գյուղական շրջաններ՝ լցված քաղաքների հաշվին: Մենք չպետք է տեսնենք կապիտալի, աշխատանքի և բնակչության այդ մեծ տեղաշարժերը, որոնք ունեն օրենսդրական միջոցներ: Տեղաշարժեր, որոնք հենց գոյության աղբյուրները այդքան անորոշ և վտանգավոր են դարձնում՝ այդպիսով կառավարության պատասխանատվությունը այդ աստիճան խորացնում են:

Դժբախտաբար, օրենքը ոչ մի կերպ չի սահմանափակվում իր բաժնով: Ոչ էլ պարզապես անտարբեր և վիճելի հայացքներում է, որ թողել է իր պատշաճ ոլորտը: Այն արել է ավելին, քան սա: Այն գործել է ի հակառակ իր պատշաճ ավարտին: Այն ավերել է իր սեփական մտադրությունը: Այն կիրառվել է ոչնչացնելու համար այն արդարությունը, որը պետք է իրավունքի շրջանում սահմաներ այդ չափը, որը հարգանքի իր իրական առաքելությունն էր: Այն հավաքական ուժը տվեց նրանց, ովքեր ցանկանում են զբաղվել այլ անձանց անհատականությամբ, ազատությամբ և սեփականությամբ՝ անխոչընդոտ, առանց ռիսկի և տատանումների: Այն թալանը դարձրել է իրավունք՝ փոխանակ պաշտպանելու այն, և օրինական պաշտպանությունը դարձրել է հանցագործություն՝ փոխանակ պատժելու այն:

Ինչպե՞ս է իրականացվել օրենքի այս խեղաթյուրումը: Եվ ո՞րն է եղել դրա հետևանքը:

Օրենքը խեղաթյուրվել է երկու շատ տարբեր պատճառների ազդեցությամբ՝ մերկ էգոիզմ և կեղծ մարդասիրություն:

Խոսենք առաջինից: Ինքնապահպանումը և զարգացումը բոլոր մարդկանց ընդհանուր ձգտումն է՝ այնպես, որ եթե ամեն մեկը օգտվեր իր ընդունակությունների ազատ կիրառումից և դրանց պտուղների ազատ

տնօրինումից, ապա սոցիալական առաջընթացը կլիներ անընդհատ, անդադար և անխուսափելի:

Բայց կա նաև մեկ այլ հակում, որ տարածված է նրանց մոտ: Այն է ապրել և զարգանալ մեկը մյուսի հաշվին, երբ կարող են: Սա մռայլ, անբարեխիղճ հոգուց բխող անխոհեմ մեղադրանք չէ: Պատմությունը վկայում է դրա ճշմարտության մասին` անընդհատ պատերազմներով, ցեղերի միգրացիաներով, քահանայական ճնշումներով, ստրկության համընդհանուրությամբ, առևտրային խարդախություններով և մենաշնորհներով, որի հետ զետեղվում է իր տարեգրությունը: Այս ճակատագրական հակումն իր ծագումն ունի հենց մարդու սահմանադրության մեջ` այդ հասարակ, հանընդհանուր և անպարտելի զգացմունքով, որը կոչ է անում այն իր բարօրության համար և ստիպում է խուսափել ցավից:

Մարդը կարող է կյանք և բավականություն ստանալ միայն հավերժական որոնումից և յուրացումից: Այսինքն` առարկաների նկատմամբ իր ընդունակությունների հավերժ կիրառումից կամ աշխատանքից: Սա է սեփականության ծագումը:

Սակայն նա նաև կարող է ապրել և բավականություն ստանալ` զավթելով և յուրացնելով այլ մարդկանց ընդունակությունների արդյունքները: Սա է կողոպուտի ծագումը:

Այժմ, երբ աշխատանքն ինքնին ցավ է, իսկ մարդը բնականաբար հակված է խուսափել ցավից, պատմությունն ապացուցում է, որ երբ կողոպուտը աշխատանքից առավել թեթև է, այն գերակշռում է: Եվ այս դեպքում ո՛չ կրոնը, ո՛չ էլ բարոյականությունը չեն կարող կանխել դրա գերակշռությունը:

Այդ դեպքում ե՞րբ է կողոպուտը դադարում: Երբ այն դառնում է առավել ծանր և առավել վտանգավոր, քան աշխատանքը: Ակնհայտ է, որ օրենքի պատշաճ նպատակն է հավաքական ուժի հզոր խոչընդոտով դիմադրել այս ճակատագրական միտումը: Դրա բոլոր միջոցները պետք է աշխատեն հօգուտ սեփականության և ընդդեմ կողոպուտի:

Սակայն օրենքը ընդհանուր առմամբ ստեղծվել է մեկ մարդու կամ մարդկանց մեկ դասակարգի կողմից: Եվ քանի որ օրենքը չի կարող գոյություն ունենալ առանց պատժամիջոցների և գերակա ուժի աջակցության, այն պետք է վերջապես այս ուժը հանձնի օրենսդիրներին:

Այս անխուսափելի երևույթը` զուգորդված ճակատագրական միտման հետ, որը, ինչպես ասեցինք, ապրում է մարդու սրտում, բացատրում է օրենքի գրեթե համընդհանուր խեղաթյուրումը: Հեշտ է հասկանալ, որ անարդարությունը ստուգելու փոխարեն այն դառնում է իր ամենաանպարտելի գործիքը:

Հեշտ է հասկանալ, որ ըստ օրենսդիրի ուժի` այն սեփական շահի համար համայնքի մեջ տարբեր աստիճաններով ստրուկությամբ ոչնչացնում է

սեփական անկախությունը, ճնշումով՝ ազատությունը և կողոպուտով՝ սեփականությունը:

Մարդկանց բնույթն է դեմ կանգնել անարդարությանը, որի գոհերն են: Հետևաբար՝ երբ կողոպուտը կազմակերպվում է օրենքով՝ նրանց շահի համար, ովքեր ընդունել են այն, բոլոր կողոպտված դասակարգերը հակված են որևէ ձևով մասնակցել օրենքների ստեղծմանը՝ կա՛մ խաղաղ ճանապարհով, կա՛մ հեղափոխական միջոցներով: Այս դասակարգերը, ըստ լուսավորության աստիճանի, որին նրանք հասել են, իրենք իրենց կարող են առաջարկել երկու շատ տարբեր եզրեր, երբ նրանք փորձում են հասնել իրենց քաղաքական իրավունքներին: Նրանք կա՛մ կցանկանան վերջ դնել օրինական կողոպուտին, կա՛մ կցանկանան մասնակցություն ունենալ դրա մեջ:

Վա՛յ այն ազգին, որտեղ այս վերջին միտքն է գերակշռում հասարակության մեջ այն պահին, երբ իրենք իրենց հերթին զավթում են օրենսդիր իշխանությունը:

Մինչ այդ, օրինական կողոպուտն իրականացվել է քչերի կողմից շատերի հանդեպ, ինչպես, օրինակ, այն երկրներում, որտեղ օրենսդրական իրավունքը մի քանի հոգու ձեռքերում է: Բայց այժմ այն համընդհանուր է դարձել, և հավասարակշռությունը կայանում է համընդհանուր կողոպուտի մեջ: Անարդարությունը, որ կա հասարակության մեջ, արմատախիլ արվելու փոխարեն ընդհանրացվում է: Ի՞նչ վնասված դասակարգերը վերականգնում են իրենց քաղաքական իրավունքները, նրանց առաջին միտքը լինում է ոչ թե ոչնչացնել կողոպուտը (սա ենթադրում է, որ նրանք լուսավորության շրջանն անցած լինեն, ինչը կարող է նաև չլինել), այլ կազմակերպել դա այլ դասակարգերի նկատմամբ, և ճնշման համակարգ՝ իրենց վնասի համար՝ իբրև մինչև արդարության թագավորության գալը անհրաժեշտ էր, որ բոլորը դաժան հատուցման ենթարկվեն՝ ոմանք իրենց անօրինությունների, ոմանք էլ անտեղյակության համար:

Հետևաբար՝ անհնար կլինի հասարակությանը ներկայացնել ավելի մեծ փոփոխություն և ավելի մեծ չարիք, քան սա՝ օրենքի փոխակերպումը կողոպուտի գործիքի:

Ի՞նչ կլինի նման խեղաթյուրման հետևանքը: Դրա նկարագրությունը բավական ծավալուն կլիներ: Բավարարվենք՝ միայն ամենացայտունները նշելով:

Առաջին հերթին՝ այն բոլորի խղճից կմաքրեր արդարության և անարդարության տարբերությունը: Ոչ մի հասարակություն չի կարող գոյություն ունենալ, քանի դեռ օրենքները որոշ չափով չեն հարգվում, իսկ դրանց հարգված սարքելու ամենաապահով տարբերակը դրանք հարգանքի արժանի դարձնելն է: Երբ օրենքն ու բարոյականությունը հակադրության մեջ են, քաղաքացին հայտնվում է դաժան այլընտրանքի առջև՝ կորցնել բարոյականության զգացումը, թե հարգանքը օրենքի

հանդեպ՝ հավասար մեծության երկու չարիք, որոնց միջև ըտրությունը բարդ կլինի:

Օրենքի բնույթի մեջ այնքան շատ է արդարությունն աջակցելու միտումը, որ հասարակության կողմից դրանք նույնականացվում են: Մեր բոլորի մեջ ուժեղ հակում կա օրինական ամեն ինչը համարել օրենսդիր, և սա երբեմն այնքան շատ է, որ շատերը սխալմամբ ամբողջ արդարությունը բխեցնում են օրենքից: Հետևապես՝ բավական է, որ օրենքը հաստատի կողոպուտը, և այն կարող է շատերին թվալ արդար և սուրբ: Ստրկությունը, պաշտպանությունը և մենաշնորհը գտնում են պաշտպաններ ոչ միայն նրանց մեջ, ովքեր օգուտ են քաղում դրանցից, այլև նրանց մեջ, որոնք տառապում են դրանից: Եթե կասկած հայտնես այս կառույցների բարոյականությանը, ուղիղ կերպով ասվում է. «Դու վտանգավոր նորարար ես, ուտոպիստ, տեսաբան, օրենք անարգող, դու կթուլացնես հիմքը, որի վրա հասարակությունը հենվում է»:

Եթե դու դաս ես կարդում բարոյականության կամ քաղաքական տնտեսության մասին, պաշտոնական մարմինները կառավարությանը կուղղեն հետևյալ հայցումը.

«Այսուհետ գիտությունը ուսուցանվի ոչ միայն ազատ փոխանակմանը հղում կատարելով (ազատությունը, սեփականությունը և արդարադատությունը), ինչպես եղել է մինչ օրս, այլև հատկապես փաստերին և օրենսդրությանը հղում կատարելով (հակառակ ազատության, սեփականության և արդարադատության), որոնք կարգավորում են ֆրանսիական ինդուստրիան:

Գանձապետարանի կողմից տրվող հանրային գումարներով դասախոսը ձեռնպահ է մտնում հարգանքը որևէ չափ վտանգելուց՝ ի շնորհիվ ներկայումս ուժի մեջ մտած օրենքների:»<sup>1</sup>

Այնպես որ, եթե կա օրենք, որը պատժում է ստրկությունը կամ մենաշնորհը, ճնշումը կամ թալանը՝ ցանկացած ձևով, այն չպետք է նույնիսկ հիշատակվի, քանի որ ինչպե՞ս կարող է այն նշվել առանց վնասելու հարգանքը, որն այն ներշնչում է: Դեռ ավելին՝ այս օրենքի հետ կապված պետք է ուսուցանել բարոյականություն և քաղաքական տնտեսություն: Այսինքն՝ ենթադրությունների համաձայն, որ դա պետք է լինի արդար, միայն այն պատճառով, որ դա օրենք է:

Օրենքի այս ողբալի խեղաթյուրման մեկ այլ ազդեցությունն այն է, որ այն մարդկային կրքերին ու քաղաքական պայքարներին, և, ընդհանրապես, քաղաքականությանը տալիս է, այսպես կոչված, չափազանցված գերազանցություն:

Ես այս հայտարարությունը կարող եմ ապացուցել հազար ու մի ձևով: Բայց ես կսահմանափակվեմ՝ որպես օրինակ բերելով մի թեմա, որը վերջերս գրավեց բոլորի միտքը՝ համընդհանուր ընտրական իրավունքը:

<sup>1</sup> Արտադրության, գյուղատնտեսության և առևտրի գլխավոր խորհուրդ, մայիսի 6, 1850թ.

Ինչ էլ մտածեն դրա մասին Ռուսոյի դպրոցի գիտակաները, որոնք ձևանում են, թե շատ լայն զարգացած են, և որոնց, սակայն, ես համարում եմ 20 դար հետ ընկած, համընդհանուր ընտրական իրավունքը (բառի բուն իմաստով) այն սուրբ դավանանքներից մեկը չէ, որոնց հետ կապված քննությունը և կասկածը հանցագործություններ են:

Լուրջ առարկություններ կարող են առաջ քաշվել:

Առաջին հերթին՝ համընդհանուր բառը թաքցնում է մեծ սոփեստություն: Ֆրանսիայում 36,000,000 բնակիչ կա: Ընտրական իրավունքը հանընդհանուր սարքելու համար 36,000,000 ընտրող պետք է հաշվարկել: Ամենաընդլայնված համակարգը հաշվարկում է միայն 9,000,000: Այսինքն՝ 4 անձից 3-ը դուրս են մնում, և ավելին՝ նրանք դուրս են մնում 4-րդի շնորհիվ: Ի՞նչ սկզբունքի վրա է պարզվում, թե ով է դուրս մնում: Անիրավունակության սկզբունքի հիման վրա: Այսինքն՝ համընդհանուր ընտրական իրավունք նշանակում է նրանց համընտրական իրավունքը, ովքեր իրավունակ են: Ըստ էության՝ ովքե՞ր են իրավունակ: Արդյո՞ք տարիքը, սեռը և դատապարտումները միակ պայմաններն են, որոնց կարող է կցվել իրավունակությունը:

Թեմային ավելի մոտիկից ծանոթանալով՝ մենք շուտով կարող ենք հասկանալ այն շարժառիթը, որը պատճառ է հանդիսանում, որ ընտրության իրավունքը կախված լինի անիրավունակության կանխավարկածից - ամենաընդլայնված համակարգը, որը ամենասահմանափակից տարբերվում է միայն այս առումով՝ այն պայմանների ընդունմամբ, որոնց վրա էլ հենվում է այս անիրավունակությունը, և որը կազմում է ոչ թե սկզբունքային տարբերություն, այլ աստիճան:

Այս շարժառիթն այն է, որ ընտրողը ոչ թե որոշում է իր համար, այլ բոլորի:

Եթե, ինչպես հայտարարում են հունական և հռոմեական հանրապետականները, ընտրության իրավունքը սահմանվել է ցանկացած մարդու ծննդի ժամանակ, ապա անարդարացի կլիներ, որ մեծահասակները արգելեին քվեարկել կանանց և երեխաներին: Ինչու՞ են նրանց արգելում: Որովհետև համարվում է, որ նրանք անիրավունակ են: Եվ ինչու՞ է անիրավունակությունը շարժառիթ՝ բացառման համար: Որովհետև ընտրողը միայն չէ, որ քաղում է իր քվեարկության պատասխանատվությունը, որովհետև ցանկացած քվե մեծապես ներառում է և ազդում է հասարության վրա, որովհետև հասարակությունն իրավունք ունի պահանջելու որոշ երաշխիքներ, որոնք վերաբերում են գործողություններին, որոնցից կախված է իր բարեկեցությունն ու գոյությունը:

Ես գիտեմ՝ ինչ կարող է ասվել՝ որպես սրան պատասխան: Ես գիտեմ՝ ինչը կարող է առարկվել: Բայց սա այս տեսակ հակասությունների տեղը չէ: Այն, ինչ ես ցանկանում եմ ուսումնասիրել, հետևյալն է – որ այս նույն հակասությունը (քաղաքական հարցերի մեծ մասի հետ ընդհանրությամբ),

որը ազգերին գրգռում, հուզում և անհանգստացնում է, կկորցնի գրեթե իր ամբողջ կարևորությունը, եթե օրենքը միշտ լիներ այն, ինչ պետք է լիներ:

Իրականում, եթե օրենքը սահմանափակվեր բոլոր անհատականությունների, անկախությունների և սեփականությունների հանդեպ հարգանք սերմանելով, եթե այն լիներ պարզապես անհատի իրավունքի և անհատի պաշտպանության կառույց, եթե այն լիներ բոլոր ճնշումներին և կողոպուտներին հակադարձող խաչընդոտը, արգելքը և պատիժը, արդյո՞ք հավանական է, որ մենք՝ որպես քաղաքացիներ, պետք է շատ քննարկենք ընտրական իրավունքի շատ քամ քիչ հանընդհանրության թեման: Արդյո՞ք հավանական է, որ այն փոխզիջումների կզնա առավելություններից ամենամեծի նկատմամբ՝ հանրային խաղաղության: Արդյո՞ք հավանական է, որ բացառված դասակարգերը իրենց հերթին հանգիստ չեն սպասի: Արդյո՞ք հավանական է, որ ընտրական իրավունք ունեցող դասակարգերը շատ հոգատար կլինեն իրենց տրված արտոնության նկատմամբ: Եվ արդյո՞ք պարզ չէ, որ եթե անգամ բոլորի հետաքրքրությունը միևնույնը լինի, ոմանք ամեն դեպքում մյուսների հանդեպ առավել քիչ անհարմարություններ կզգան:

Սակայն եթե ճակատագրական սկզբունքը պետք է ներկայացվի, որ կազմակերպության, կանոնակարգման, պաշտպանության կամ խրախուսման պատրվակի ներքո օրենքը կարող է մի կողմից վերցնել՝ մեկ ուրիշին տալու համար, օգտվել բոլոր դասակարգերի կողմից ձևավորած հարստությունից, որ կարող է մեծացնել մի դասակարգի աճը՝ կլինեն գյուղատնտեսներ, արտադրողներ, նավի սեփականատերեր, դերասաններ կամ կատակերգուներ: Անշուշտ, այս դեպքում չկա մի դասակարգ, որը, իհարկե, չի կարող ձևացնել իր ուժն օրենքի դեմ կիրառելը, որը գազազած չի պահանջի իր ընտրության և իրավասություն իրավունքը, և որը կկործաներ հասարակությունը՝ փոխանակ այն պաշտպանելու: Նույնիսկ մուրացկաններն ու թափառաշրջիկները կհաստատեն, որ իրենք անվերապահ կոչում ունեն: Նրանք կասեն՝

«Մենք երբեք չենք գնում գինի, ծխախոտ կամ աղ՝ առանց հարկերը մուծելու, և այս հարկի մի մասն օրենքով որպես կողմնակի եկամուտ կամ նվեր տրվում է այն մարդկանց, ովքեր մեզանից առավել հարուստ են: Մյուսներն օգտվում են օրենքից՝ ստեղծելով հացի, մսի, երկաթի կամ հագուստի գնի արհեստական բարձրացում: Քանի որ բոլորը օրենքը նենգափոխում են՝ իրենց սեփական շահի համար, մենք էլ ենք ցանանում նույն կերպ վարվել: Մենք կցանկանայինք նպաստել աջակցության իրավունքի ստեղծմանը, որը աղքատ մարդկանց թալանումն է: Սա իրականացնելու համար մենք պետք է լինենք ընտրողներ և օրենսդիրներ, որպեսզի մեծ մասշտաբով կարողանանք ողորմություն կազմակերպել մեր սեփական դասակարգի համար այնպես, ինչպես դուք եք մեծ մասշտաբով պաշտպանություն կազմակերպել ձեր դասակարգերի համար: Մի՛ ասեք մեզ, որ դուք մեր խնդրին ձեզանից շատ առաջնահերթություն կտաք, և 600,000 ֆրանկ նետեք, որպեսզի սուս մնանք այնպես, ինչպես ոսկոր



շարտելիս: Մենք այլ պահանջներ ունենք և ցանկացած գնով մենք ուզում ենք մեր շահերը պահանջել այնպես, ինչպես այլ դասակարգերն են վարվել:»

Ինչպե՞ս պետք է պատասխանել այս փաստարկին: Այո՛, քանի դեռ ընդունված է, որ օրենքը, շեղվելով իր ճշմարիտ առաքելությունից, կարող է ոտնահարել սեփականությունը՝ այն պաշտպանելու փոխարեն, բոլորը կցանկանան օրենք ստեղծել՝ կա՛մ թալանից պաշտպանելու համար, կա՛մ դա հօգուտ սեփական շահի կազմակերպելու համար: Քաղաքական հարցը միշտ կլինի կործանարար, գերակշռող և հետաքրքրաշարժ: Մեկ բառով ասած՝ Օրենսդիր մարմնի դռների մոտ կռիվ կլինի: Պայքարը ներսում ոչ պակաս կատաղի կլինի: Սրանում համոզվելու համար, դժվար թե կարիք լինի նայել, թե ինչ է կատարվում Ֆրանսիայի և Անգիայի պալատներում: Բավական է իմանալ, թե ինչպիսին է հարցադրումը:

Կարիք կա՞ ապացուցելու, որ օրենքի այս կոպտագույն խախտումը ատելության և անհամաձայնության անսպառ աղբյուր է, որը նույնիսկ հակված է սոցիալական կազմալուծման: Նայե՛ք Միացյալ Նահանգներին: Աշխարհում չկա երկիր, որտեղ օրենքն առավելագույնս պահվում է իր պատշաճ տիրույթում, այսինքն՝ բոլորին ապահովում է անկախությամբ և սեփականությամբ: Հետևաբար՝ աշխարհում չկա երկիր, որտեղ հասարակական կարգը, կարծես, դրված է ավելի ամուր հիմքերի վրա: Այնուամենայնիվ, անգամ Միացյալ Նահանգներում երկու հարց կա և միայն երկուսն են, որ սկզբից վտանգել են քաղաքական կարգը: Եվ որո՞նք են այս երկու հարցերը: Ստրկության և սակագների հարցերը: Սրանք հենց այն միակ երկու հարցերն են, որտեղ, հակառակ այս հանրապետության ընդհանուր ոգուն, օրենքը թալանի հատկանիշներ է ստացել: Ստրկությունը օրենքով նախատեսված կարգով անհատի իրավունքների ոտնահարումն է: Պաշտպանությունը օրենքով կատարված խախտումն է սեփականության իրավունքի հանդեպ: Եվ, անշուշտ, շատ ուշագրավ է, որ այսքան շատ բանավեճերի մեջ այս կրկնակի օրինական խայտառակությունը՝ Հին աշխարհի ցավալի ժառանգությունը, պետք է լինի միակը, որ կարող է և, հավանաբար, պատճառ կհանդիսանա Միության փլուզման համար: Իրոք, հասարակության սրտում սրանից առավել հրաշալի փաստ չի կարելի ենթադրել: Օրենքը պետք է անարդարության գործիք դառնար:

Մ. Մոնթալեմբերթը, ընդունելով հայտնի հռչակագրի միտքը, ասել է. «Մենք պետք է սոցիալիզմի դեմ պատերազմ մղենք»: Եվ ըստ Մ. Չարլզ Դուպինի սահմանման՝ սոցիալիզմ ասելով նա նկատի ունեն կողոպուտ: Բայց ի՞նչ կողոպուտ նկատի ունեն: Քանի որ կա երկու տեսակի կողոպուտ՝ օրենքից դուրս և օրինական:

Ինչ վերաբերում է անօրինական կողոպուտին, ինչպիսիք են գողությունը, խարդախությունը, որոնք կանխամտածված են և պատժվում են քրեական օրենսգրքով, ես չեմ կարծում՝ այն կարելի է զարդարել սոցիալիզմի անվամբ: Սա չէ, որ պարբերաբար վտանգում է հասարակության հիմքերը: Բացի այդ, այս տեսակի կողոպուտի դեմ

պատերազմը չի սպասել Մ. Մոնթալեմբերթի կամ Մ. Քարլիերի ազդանշանին: Այն եղել է աշխարհի հենց սկզբից: Ֆրանսիան այն ուներ Փետրվարյան հեղափոխությունից և սոցիալիզմի հայտնվելուց դեռ երկար ժամանակ առաջ՝ դատարանների, ոստիկանության, ժանդարմիերայի, բանտերի, գնդանների և կառավարանների բոլոր արարողությունների ժամանակ: Հենց օրենքն է վարում պատերազմը, և իմ կարծիքով պետք է օրենքը միշտ պահի այդ վերաբերմունքը կողոպուտի նկատմամբ:

Բայց սա չէ հարցը: Օրենքը երբեմն իր մասնաբաժինն է ունենում: Երբեմն այն իրականացնում է դա իր սեփական ձեռքերով, որպեսզի պաշտպանի կողմերին՝ օգտվելով ամոթից, վտանգից և կասկածից: Երբեմն այն դատարանների, ոստիկանության, ժանդարմիերայի և բանտերի բոլոր արարողությունները տեղավորում է կողոպուտի ծառայության մեջ և որպես հանցագործ սպառնում է կողոպտված կողմին, երբ այն պաշտպանվում է: Կարճ ասած՝ կա օրինական կողոպուտ, և, անկասկած, Մ. Մոնթալեմբերթը հենց սա նկատի ուներ:

Այս կողոպուտը կարող է միայն բացառիկ թերություն լինել ժողովրդի օրենսդրության մեջ, և այս դեպքում լավագույն բանը, որ կարելի է անել՝ առանց այդքան շատ ելույթների եւ ողբի, հնարավորինս շուտ վերջ դնելն է՝ հաշվի չառնելով հետաքրքրված կողմերի աղմուկը: Բայց ինչպե՞ս կարելի է այն տարբերել: Շատ հեշտությամբ: Տե՛ս, թե արդյո՞ք օրենքը որոշ անձանցից վերցնում է այն, ինչ իրենց է պատկանում, որպեսզի ուրիշներին տա այն, ինչ իրենց չի պատկանում: Տե՛ս, թե արդյո՞ք օրենքը, հոգուտ մի քաղաքացու և ի վնաս մյուսների, իրականացնում է մի գործողություն, որն այս քաղաքացին չի կարող իրականացնել առանց հանցագործության: Անհապաղ վերացնել այս օրենքը: Սա ոչ թե սոսկ անօրինություն է, սա անօրինությունների բերրի աղբյուր է, քանի որ ճնշամիջոցներ է հրահրում: Եվ եթե հոգ չտանես, բացառիկ դեպքը կընդլայնվի, կբազմապատկվի և պարբերական կդառնա: Անկասկած, շահած կողմը բարձր կգոչի և կպաշտպանի իր ձեռք բերած իրավունքները: Այն կասի, որ պետությունը պարտավոր է պաշտպանել և խրախուսել իր աշխատանքը: Այն կաղերսի, որ պետության համար լավ է հարստանալը, որ այն կարող է ծախսել ավելի շատ և այդպիսով աղքատ աշխատավորներին աշխատավարձեր տալ: Ուշադիր եղե՛ք, որ չլսեք այս կեղծիքը, քանի որ հենց այս փաստարկները համակարգելով է, որ օրինական կողոպուտը դառնում է համակարգված:

Եվ ահա թե ինչ է տեղի ունեցել: Օրվա մոլորությունն է միմյանց հաշվին բոլոր դասերը հարստացնելը: Այն կողոպուտն ընդհանրացնելու համար է՝ այն կազմակերպելու պատրանքի տակ: Հիմա օրինական կողոպուտ կարող է իրականացվել անսահման բազում ձևերով: Ուստի՝ կազմակերպման համար առաջ են գալիս անսահման բազում ծրագրեր՝ հարկացուցակներ, հովանավորություն, կողմնակի եկամուտներ, դրամաշնորհներ, դրամական օգնություններ, աճող հարկումներ, անվճար ուսուցումներ, աշխատանքի իրավունք, շահույթի իրավունք, աշխատավարձի իրավունք, օգնության իրավունք, աշխատագործիքների

իրավունք, երախտիքի պարգևատրում, և այլն, և այլն: Եվ այս բոլոր ծրագրերն են՝ որպես ամբողջություն իրենց ընդհանրության՝ օրինական կողոպուտի հետ, որ սոցիալիզմի անունն են կրում:

Հիմա սոցիալիզմը, որն, ինչպես սահմանվեց, դավանական մարմին կազմող է, դրա դեմ ի՞նչ այլ պատերազմ կիրահրեիք, եթե ոչ կրոնական: Ձեզ համար այս դավանանքը կեղծ, արքունի, անհեթեթ է: Հերքե՛ք այն: Սա կլնի ավելի հեշտ, ավելի կեղծ, ավելի արքունի և ավելի անհեթեթ: Ամենից զատ, եթե դուք ուզում եք ուժեղ լինել, սկսե՛ք ձեր օրենսդրությունից արմատախիլ անել սոցիալիզմի ցանկացած տարր, որ կարող է ներս է թափանցել: Եվ սա հեշտ գործ չի լինելու:

Մ. Մոնթալեմբերթը կշտամբվել է, քանի որ սոցիալիզմի դեմ ցանկացել է կոպիտ միջոցներ օգտագործել: Նա պետք է ազատվի այս կշտամբանքից, քանի որ նա բացահայտորեն ասել է. «Պատերազմը, որ մենք պետք է վարենք սոցիալիզմի դեմ, պիտի համատեղելի լինի օրենքի, ազնվության և արդարության հետ»:

Բայց ինչպե՞ս է, որ Մ. Մոնթալեմբերթը չի տեսնում, որ ինքն իրեն արատավոր շրջանակի մեջ է դնում: Դուք կհակադրեիք օրենքը սոցիալիզմին: Բայց օրենքն է, որ սոցիալիզմն առաջ է քաշում: Այն ձգտում է օրինական թալանի, և ոչ օնօրինական: Հենց օրենքն է, որ ինչպես բոլոր տեսակի մենաշնորհները, ցանկանում է գործիք դարձնել: Եվ երբ այն օրենքն իր կողմում լինի, ինչպե՞ս կկարողանաք օրենքը նրան հակադարձել: Ինչպե՞ս կդնեք ձեր դատարանների, ժանդարմայի և բանտերի իշխանության տակ: Ի՞նչ կանեք հետո: Դուք ցանկանում եք կանխել, որ այն որևէ մասնակցություն ունենա օրենքների ստեղծման գործընթացում: Դուք այն Օրենսդիր մարմնից դուրս կպահեիք: Ես կհամարձակվեմ մարգարեանալ՝ ասելով, որ սրանում դուք հաջողության չեք հասնի, քանի դեռ օրինական կողոպուտը օրենսդրության հիմքն է:

Բացարձակապես անհրաժեշտ է, որ օրինական կողոպուտի այս հարցը որոշվի: Եվ սրա լուծման միայն երեք տարբերակ կա՝

1. Երբ քչերը կողոպտում են շատերին
2. Երբ բոլորը կողոպտում են բոլորին
3. Երբ ոչ ոք ոչ ոքի չի կողոպտում

Մասնակի կողոպուտ, համընդհանուր կողոպուտ, կողոպուտի բացակայություն – սրանց մեջ մենք պետք է կատարենք մեր ընտրությունը: Օրենքը կարող է ունենալ այս արդյունքներից միայն մեկը:

Մասնակի կողոպուտ: Սա այն համակարգն է, որ գերիշում էր, երբ ընտրովի արտոնությունը մասնակի էր: Համակարգ, որին դիմում են սոցիալիզմի ներխուժումից խուսափելու համար:

Համընդհանուր կողոպուտ: Մենք սպառնալիքներ ենք ստացել այս համակարգից, երբ ընտրովի արտոնությունը դարձավ համընդհանուր:

Չանգվածներ, որոնք հղացրին օրենք ստեղծելու միտքը իրենց նախորդած օրենսդիրների սկզբունքով:

Կողոպուտի բացակայություն: Սա արդարության, խաղաղության, կարգ ու կանոնի, կայունության, հաշտության և առողջ մտքի սկզբունքն է, որը ես իմ թոքերի ամբողջ ներածին ուժով (ինչը, ավաղ, շատ անբավարար է) կհայտարարեմ մինչև կյանքիս վերջ:

Եվ, ամենայն անկեղծությամբ, օրենքից կարելի<sup>օ</sup> է ավել բան պահանջել: Կարո՞ղ է օրենքը, որի անհրաժեշտ պատժամիջոցն ուժն է, ողջամիտ կերպով օգտագործվի այլ բաների վրա, բացի յուրաքանչյուրի իրավունքներն ապահովելուց: Ես դեմ եմ ցանկացած մեկին, որ այս շրջանակից հանի դա առանց դրա խեղաթյուրման և, հետևաբար, ուժը հակադարձի իրավունքին: Եվ քանի որ սա ամենաճակատագրական, ամենաանտրամաբանական սոցիալական խեղաթյուրումն է, որ հնարավոր է պատկերացնել, պետք է ընդունել, որ սոցիալական խնդրի իսկական լուծումը, որ այսքան փնտրում էինք, պարունակվում է այս պարզ բառերի մեջ՝ **ՕՐԵՆՔԸ ԿԱՉՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ Է:**

Հիմա կարևոր է նշել, որ արդարադատությունը օրենքով կազմակերպելը, այսինքն՝ ուժով, բացառում է օրենքով կամ ուժով կազմակերպելու միտքը՝ մարդկային գործունեության ցանկացած դրսևորում՝ աշխատանք, բարեգործություն, գյուղատնտեսություն, առևտուր, արդյունաբերություն, ուսուցում, կերպարվեստ կամ կրոն, քանի որ այս կազմակերպություններից ցանկացածը անխուսափելիորեն կկործանի հիմնական կազմակերպությունը: Փաստացի, ինչպե՞ս կարող ենք պատկերացնել ուժ, որ ոտնձգություն է կատարում քաղաքացիների ազատության նկատմամբ՝ առանց արդարադատությունը խախտելու և այդպիսով՝ գործելով իր պատշաճ նպատակին դեմ:

Այստեղ ես բախվում եմ մեր ժամանակների ամենահայտնի նախախնամանքին: Բավարար չի համարվում, որ օրենքը արդար լինի, այն պետք է մարդակենտրոն լինի: Բավարար չէ, որ այն պետք է ցանկացած քաղաքացու երաշխավորի իր կարողությունների ազատ և անվնաս իրականացում՝ կապված իր ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացման հետ: Պահանջվում է ընդլայնել բարեկեցությունը, ուսուցումը և բարոյականությունը ուղղակիորեն ազգի նկատմամբ: Սա սոցիալիզմի հրապուրիչ մասն է:

Բայց ես կրկնում եմ՝ օրենքի այս երկու առաքելությունները հակասում են միմյանց: Մենք պետք է ընտրություն կատարենք նրանց միջև: Քաղաքացին չի կարող միաժամանակ լինել ազատ և անազատ: Մ. դը Լամարտինը մի օր ինձ գրել է. «Ձեր դավանանքը իմ ծրագրի միայն կեսն է: Դուք կանգնել եք ազատության վրա, ես ձգտում եմ եղբայրության»: Ես պատասխանեցի նրան. «Ձեր ծրագրի երկրորդ մասը կկործանի առաջինը»: Եվ, իրականում, ինձ համար անհնար է առանձնացնել եղբայրություն բառը կամավորությունից: Ես պարզապես չեմ կարող հավատալ օրինականորեն ամրագրված եղբայրությանը՝ առանց

ազատության օրինական ոչնչացման և արդարադատության օրինական ոտնահարման: Օրինական կողոպուտն ունի երկու արմատ . դրանցից մեկը, ինչպես արդեն տեսանք, մարդկային եսասիրությունն է, մյուսը կեղծ բարերարությունն է:

Մինչ առաջ անցնելը, կարծում եմ, կողոպուտ բառի բացատրություն է հարկավոր<sup>2</sup>:

Ես այն չեմ ընկալում այնպես, ինչպես սովորաբար ընկալում են՝ անորոշ, չսահմանված, հարաբերական կամ փոխաբերական իմաստով: Ես օգտագործում եմ այն իր գիտական իմաստով և սեփականության մտքին հակառակ գաղափար արտահայտելով: Երբ հարստության մի մաս առանց իր համաձայնության և առանց փոխհատուցման այն ձեռք բերողի մոտից ուժով կամ ճարպկությամբ անցնում է նրան, ով այն չի ստեղծել, ես ասում եմ, որ սեփականությունը ոտնահարված է, որ կողոպուտը կատարված է: Ես ասում եմ, որ սա հենց այն է, ինչն օրենքը պետք է ճնշի միշտ և ամենուր: Եթե օրենքն ինքը կատարում է գործողություն, որը հարկավոր է ճնշել, ես ասում եմ, որ կողոպուտը դեռ կատարվում է, և հասարակական տեսանկյունից՝ անգամ ծանրացուցիչ հանգամանքներում: Այս դեպքում, թեպետ, նա, ով օգուտ է քաղում կողոպուտից, պատասխանատու չէ դրա համար: Օրենքն է, օրենսդիրն է և հասարակությունն ինքն է պատասխանատու: Եվ ահա, թե որտեղ է քաղաքական վտանգը թաքնված:

Ցավալի է, որ բառի մեջ ինչ-որ վիրավորական բան կա: Ես ապարդյուն փնտրել եմ մեկ ուրիշը, քանի որ չեի ուզի, որ երբևէ, և հատկապես հենց հիմա, մեր քննարկումներին բորբոքող բառ ավելացնել: Հետևաբար՝ հավատաք ինձ, թե ոչ՝ ես հայտարարում եմ, որ մտադրված չեմ մեղադրելու որևէ մեկի դիտավորությունները կամ բարոյականությունը: Ես հարձակվում եմ մի գաղափարի վրա, որը ես համարում եմ կեղծ, մի համակարգ, որն ինձ անարադար է թվում: Եվ սա այնքան անկախ է դիտավորություններից, որ մեզանից յուրաքանչյուրը դրանից օգուտ է ստանում՝ առանց ցանկանալու դա, և տառապում է դրանից՝ չիմանալով պատճառը:

Ցանկացած մարդ պետք է գրի կուսակցական ոգու կամ վախի ազդեցության տակ, որը հարցականի տակ կղնի պրոտեկցիոնիզմի, սոցիալիզմի և նույնիսկ կոմունիզմի անկեղծությունը, որոնք միևնույն բանն են՝ զարգացման երեք տարբեր փուլերում: Ամենը, որ կարելի է ասել, այն է, որ կողոպուտն իր կողմնակալությամբ ավելի տեսանելի է պրոտեկցիոնիզմի ժամանակ<sup>3</sup>, իսկ համընդհանրությամբ՝ կոմունիզմի

<sup>2</sup> Ֆրանսերենով՝ բռնագրավում

<sup>3</sup> Եթե պաշտպանությունը Ֆրանսիայում տրված լիներ միայն մեկ դասակարգի, օրինակ՝ ինժեներներին, դա այնքան անհեթեթ կողոպուտ կլիներ, ինչպես ինքն իրեն պաշտպանելի չկարողանալը: Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ բոլոր պաշտպանված առևտուրները միավորվում են, ստեղծում են ընդհանուր նպատակ և նույնիսկ հավաքագրում են իրենց այնպես, որ թվում է, թե ներգրավում են ազգային աշխատանքի մի գանգված: Նրանք բնագղաբար զգում են, որ կողոպուտն ընդհանրացվելով միաձուլման է ենթարկվում:

ժամանակ: Այստեղից էլ բխում է, որ երեք համակարգերից սոցիալիզմը դեռ ամենաանորոշն է, ամենաչափավորվածը և, հետևաբար, ամենաազնիվը:

Ամեն դեպքում եզրակացնել, որ օրինական կողոպուտն իր արմատներից ձգել է կեղծ բարերարության մեջ, նույնն է, ինչ դիտավորությունները հարցից հանելը:

Այս գիտակցությամբ եկեք ուսումնասիրենք այս հայտնի մոման արժեքը, ծագումը և միտումները, որը հավատացնում է իրականացնել ընդհանուր բարեկեցություն ընդհանուր կողոպուտի միջոցով:

Սոցիալիստներն ասում են՝ քանի որ օրենքը կարգավորում է արդարադատությունը, ինչու՞ չպետք է այն կարգավորի աշխատանքը, ուսուցումը և կրոնը:

Ինչու՞: Քանի որ այն չի կարող կարգավորել աշխատանքը, ուսուցումը և կրոնը՝ առանց կազմալուծելու օրենքը:

Հիշե՛ք, որ օրենք ուժ է, և ուստի օրենքի տիրույթը չի կարող ուժի տիրույթից օրինականորեն ընդլայնվել:

Երբ օրենքն ու ուժը մարդուն պահում են արդարադատության շրջանակներում, նրանք ոչինչ չեն պարտադրում, այլ պարզապես ժխտում են: Նրանք միայն պարտավորեցնում են ձեռնպահ մնալ վնաս տալուց: Նրանք չեն խախտում ո՛չ իր անհատականությունը, ո՛չ ազատությունը և ո՛չ էլ սեփականությունը: Նրանք միայն պահպանում են մյուսների անհատականությունը, ազատությունը և սեփականությունը: Նրանք իրենց պաշտպանողական են պահում: Նրանք պաշտպանում են բոլորի հավասար իրավունքները: Նրանք իրականացնում են մի առաքելություն, որի վտանգավորությունն ակնհայտ է, որի օգտակարությունը շոշափելի է և որի օրինականությունը անառարկելի է: Սա այնքան ճիշտ է, որ, ինչպես իմ ընկերներից մեկը մի անգամ նշել է, ասել, որ օրենքի նպատակը արդարություն տիրելու համար է, նույնն է, թե օգտագործել բառակապակցություն, որը խիստ ճշգրիտ չէ: Պետք է ասվի՝ օրենքի նպատակը պայքարելն է, որ անարդարություն չտիրի: Իրականում արդարությունը չէ, որ ունի սեփական գոյություն . անարդարությունն է: Մեկը մյուսի բացակայության արդյունքն է:

Բայց երբ օրենքն իր անհրաժեշտ գործոնի՝ ուժի միջոցով պարտադրում է աշխատանքի ձև, ուսուցման մեթոդ կամ առարկա, դավանանք կամ երկրպագություն, այն այլևս բացասական չէ, այն դրական կերպով է անդրադառնում մարդկանց վրա: Այն օրենսդիր կամքը փոխարինում է իրենց սեփական կամքով և օրենսդիրի նախաձեռնությունը՝ իրենց սեփական նախաձեռնությամբ: Կարիք չկա, որ նրանք խորհրդակցեն, համեմատեն կամ կանխագուշակեն . այս ամենն իրենց փոխարեն կատարում է օրենքը: Խելքը նրանց համար անարժեք իր է, նրանք դադարում են մարդ լինելուց, կորցնում են իրենց անհատականությունը, իրենց ազատությունը, իրենց սեփականությունը:

Փորձե՛ք պատկերացնել ուժով պարտադրված աշխատանքի ձևը, ինչը ազատության խախտում է: Պատկերացրե՛ք ուժով պարտադրված հարստության փոխանցում, ինչը սեփականության խախտում է: Եթե դուք չեք հաշտվում սրա հետ, դուք հակված եք եզրակացնել, որ օրենքը չի կարող աշխատանք և արդյունաբերություն կազմակերպել՝ առանց անարդարության կազմակերպման:

Երբ իր կաբինետի մեկուսացումից քաղաքական գործիչը հաշվի է առնում հասարակության տեսակետը, նրան հարվածում է անհավասարության տեսարանը: Նա վշտանում է այն տառապանքների կապակցությամբ, որոնք մեր եղբայրներից այնքան շատերն են, տառապանքներ, որոնք ավելի վշտալի են շքեղության և հարստության հակադրությամբ:

Նա հավանաբար պետք է ինքն իրեն հարցնի, թե արդյո՞ք նման սոցիալական վիճակը չի առաջացել նվաճումների ճանապարհով իրականացված հին ժամանակների կողոպուտից և օրենքի միջոցով իրականացված ավելի ուշ ժամանակների կողոպուտից: Նա պետք է ինքն իրեն հարցնի, թե արդյո՞ք ապահովելով բոլոր մարդկանց ձգտումը բարօրության և կատարելության, արդարության թագավորությունը չի բավարարի առաջընթացի մեծագույն գործունեությունը և հավասարության մեծագույն չափը, որ համահունչ է այն անհատական պատասխանատվության հետ, որն Աստված պարզաբան է որպես առաքինության և անառակության արդար պատիժ:

Նա երբեք սրա մասին չի մտածում: Նրա միտքը դառնում է դեպի համակցությունները, համաձայնեցումները, օրինական կամ կեղծ կազմակերպությունները: Նա դեղամիջոցը փնտրում է շարունակելու և չափազանցնելու այն, ինչը չարն է ստեղծել:

Քանի որ արդարադատությունը, որը մենք տեսել ենք, միայն ժխտում է, արդյո՞ք կա այս իրավական պայմանավորվածություններից մեկը, որը չի պարունակում թալանի սկզբունքը:

Դուք ասում եք՝ «Կան մարդիկ, որոնք փող չունեն», և դուք դիմում եք օրենքին: Բայց օրենքն ինքնամատակարարվող շատրվան չէ, որտեղից յուրաքանչյուր հոսք կարող է ձեռք բերել նյութեր՝ հասրակությունից անկախ: Ոչինչ չի կարող մուտք գործել պետական գանձարան՝ հօգուտ մեկ քաղաքացու կամ մեկ դասակարգի, բայց այլ քաղաքացիներ և այլ դասակարգեր ինչեր են ստիպված եղել ուղարկել այնտեղ: Եթե ամեն մեկը դրանից հանի միայն իր ներդրածին համարժեքը, ձեր օրենքը, ճիշտ է, կողոպտիչ չէ, բայց այն ոչինչ չի անում մարդկանց համար, ովքեր փող են ուզում, այն հավասարությանը չի նպաստում: Այն կարող է հավասարեցման գործիք լինել միայն եթե այն մի կողմից վերցնում է՝ մյուսին տալու համար, և ապա այն կողոպուտի գործիք է: Այս լույսի ներքո ուսումնասիրե՛ք հարկացուցակների պաշտպանությունը, խրախուսման մրցանակները, եկամտի իրավունքը, աշխատելու իրավունքը, օգնելու իրավունքը, ուսուցման իրավունքը, առաջադեմ հարկումը, վարկի

արտոնությունը, սոցիալական սեմինարները և ներքևում միշտ կգտնեք անարդարություն կազմակերպած օրինական կողոպուտ:

Դուք ասում եք՝ «Կան մարդիկ, որոնք գիտելիք են ուզում», և դիմում եք օրենքին: Բայց օրենքն ամենուր լույս սփռող ջահ չէ, ինչն իրեն բնորոշ է: Այն տարածվում է մի հասարակության վրա, որտեղ մարդիկ են, որոնք գիտելիք ունեն, և մարդիկ, որոնք չունեն, քաղաքացիներ, որոնք ցանկանում են սովորել, և քաղաքացիներ, որոնք հակված են սովորեցնելու: Երկուսից միայն մեկը կարող է լինել՝ կա՛մ թույլ տալ այս տեսակի գործարքների ազատ ընթացք, ինչպես, օրինակ, թույլ տալ, որ այս տեսակ ցանկությունն ինքն իրեն հանգիստ բավարարի, կա՛մ այս հարցում բռնանալ ժողովրդի ուժին և նրանցից որոշներից բավարար քանակությամբ վերցնել՝ վճարելու համար ուսուցիչներին, որոնց հանձնարարվել է մյուսներին անհատույց սովորեցնել: Սակայն այս երկրորդ դեպքում չի կարող տեղի չունենալ ազատության և սեփականության խախտում օրինական կողոպուտ:

Դուք ասում եք՝ «Կան մարդիկ, որոնք ցանկանում են բարոյականություն և դավանանք», և դուք դիմում եք օրենքին: Բայց օրենքն ուժ է, և արդյո՞ք կարիք կա ասելու, թե որքան բռնի ու անհեթեթ է ձեռնարկությունը՝ այս հարցում ուժ ներդնելիս:

Որպես իր համակարգերի և իր ջանքերի արդյունք՝ կթվար, թե սոցիալիզմը, չնայած իր ինքնահավանությանը, հազիվ թե կարող է օգնել գիտակցել օրինական կողոպուտի հրեշին: Բայց ի՞նչ է այն անում: Այն խելացիորեն քողարկվում է մյուսներից, անգամ ինքն իրենից՝ եղբայրության, համերաշխության, կազմակերպության, ասոցեացիայի հրապուրիչ անունների ներքո: Քանի որ մենք օրենքից շատ բան չենք պահանջում և քանի որ մենք պահանջում ենք միայն արդարադատություն, այն ենթադրում է, որ մենք մերժում ենք եղբայրությունը, համերաշխությունը, կազմակերպությունը և ասոցեացիան: Եվ նրանք մեզ պիտակավորում են որպես անհատապաշտներ:

Մենք կարող ենք հավաստիացնել նրանց, որ այն, ինչ մենք մերժում ենք, ոչ թե բնական կազմակերպություն է, այլև հարկադրաբար ստեղծված:

Այն ազատ ասոցեացիա չէ, այլ ասոցեացիայի ձևեր, որոնք նրանք մեզ կպարտադրեն:

Այն ինքնաբուխ եղբայրություն չէ, այլ օրինական:

Այն շինծու համերաշխություն չէ, այլ արհեստական, որը պարզապես պատասխանատվության անարդար տեղաշարժ է:

Սոցիալիզմը, ինչպես հին քաղաքականությունը, որից այն ծագել է, խառնակում է կառավարությանը և հասարակությանը: Եվ այսպես՝ ամեն անգամ, երբ մենք առարկում ենք կառավարության կողմից արված որևէ բան, ենթադրվում է, որ մենք առարկում ենք դրա ընդհանրապես



իրագործմանը: Մենք հավանություն չենք տալիս պետության կողմից ներկայացված կրթությանը, ուրեմն՝ մենք դեմ ենք կրթությանն ընդհանրապես: Մենք առարկում ենք պետական կրոնին, ուրեմն՝ մենք ընդհանրապես դավանանք չունենք: Մենք առարկում ենք պետության կողմից առաջ քաշված հավասարությանը, ուրեմն մենք հակառակ ենք հավասարությանը, և այլն, և այլն: Մենք գուցե նաև մեղադրենք ինքներս մեզ՝ ցանկանալով, որ մարդիկ չուտեն, որովհետև մենք մերժում ենք պետության կողմից եգիպտացորենի մշակումը:

Ինչպե՞ս է, որ տարօրինակ գաղափարը, որ ստիպում է օրենքին արտադրել այն, ինչ չի պարունակում՝ բարգավաճում, դրական իմաստով՝ հարստություն, գիտություն, կրոն, երբևէ կարող է հող ձեռք բերած լինի քաղաքական աշխատում: Ժամանակակից քաղաքագետները՝ հատկապես սոցիալիստական դպրոցի, տարբեր թեորիաներ են գտել մեկ ընդհանուր հիփոթեզի համար: Եվ, անշուշտ, ավելի տարօրինակ, ավելի հանդուգն միտք երբեք մարդկային միտքը չէր ունենա:

Նրանք մարդկությունը բաժանում են երկու տեսակի: Ընդհանուր առմամբ մարդիկ՝ բացառությամբ մեկ հոգու, ձևավորում են առաջին տեսակը, քաղաքական գործիչը՝ երկրորդը, ինչն ամենակարևորն է:

Ըստ էության՝ նրանք սկսում են ենթադրելով, որ մարդիկ զուրկ են ցանկացած գործողության սկզբունքից և ինքնաճանաչման ցանկացած միջոցից, որ նրանք չունեն ոչ մի շարժիչ ուժ, որ նրանք իներտ մատերիա են, պասիվ մասնիկներ, ատոմներ՝ առանց խթանի, լավագույն դեպքում բուսականություն՝ անտարբեր իր գոյության սեփական եղանակից, ենթակա արտաքին կամքից և ձեռքից անսահման ձևեր ստանալու՝ քիչ թե շատ սիմետրիկ, գեղարվեստական և կատարելագործված:

Ավելին՝ այս քաղաքական գործիչներից յուրաքանչյուրը չի վարանում պատկերացնել, որ կազմակերպչի, բացահայտողի, օրենսդիրի, ուսուցանողի կամ հիմնադրի անվան տակ նա ինքն է այս կամքն ու ձեռքը, այս համընդհանուր շարժիչ ուժը, այս ստեղծարար ուժը, որի վեհ առաքելությունն է իրար գլխի հավաքել այս ցրիվ եկած նյութերը, այսինքն՝ մարդկանց՝ հասարակության մեջ:

Սկսելով այս տվյալներից՝ ինչպես այգեպանը, համաձայն իր քմահաճույքների, իր ծառերին տալիս է բուրգերի, հովանոցների, խորանարդների, կոների, ծաղկամանների, փաթաթվող բույսերի կամ հովհարների ձև, այնպես էլ սոցիալիստը, հետևելով իր ցնորքներին, խեղճ մարդկությանը դասում է ըստ խմբերի, շարքերի, շրջանակների, ենթաշրջանների, բջիջների կամ սոցիալական արտադրամասերի՝ բոլոր տեսակի փոփոխություններով: Եվ, ինչպես ծառերը տեսքի բերելու համար այգեպանին անհրաժեշտ է փոքր կացիններ, կտրատելու մանգաղներ, սղոցներ և կտրող գործիքներ, այնպես էլ հասարակությանը տեսքի բերելու համար քաղաքական գործչին անհրաժեշտ են ուժեր, որը նա միայն օրենքների մեջ կարող է գտնել՝ մաքսային օրենք, հարկերի օրենք, աջակցության օրենք և ուսուցման օրենք:

Այնքան ճշմարիտ է, որ սոցիալիստները մարդկությանը նայում են որպես հասարակական համակցությունների առարկա: Եթե պատահմամբ նրանք վստահ չեն այս համակցությունների հաջողության մեջ, ապա կպահանջեն մարդկության մի մասին՝ որպես փորձման առարկա: Հայտնի է, թե որքան տարածված է բոլոր համակարգերը փորձելու գաղափարը իր բոլոր այն բնակիչների վրա, որոնց վրա կարող են փորձարկում անել, և նրանց ղեկավարներից մեկը լրջորեն հայտնի է Հիմնադիր ժողովից եկեղեցական ծխի պահանջով:

Այսպիսով՝ գյուտարարը փոքր մեքենա կսարքի՝ նախքան սովորական չափի սարքերը: Նույն կերպ քիմիկոսը որոշ նյութեր է գոհաբերում, գյուղատնտեսը՝ որոշ սերմեր և մի անկյուն իր դաշտում՝ մի գաղափար փորձարկելու համար:

Բայց հետո մտածե՛ք այն անչափելի հեռավորության մասին, որ ընկած է այգեպանի և նրա ծառերի միջև, գյուտարարի և իր մեքենայի միջև, քիմիկոսի և իր նյութերի միջև, գյուղատնտեսի և իր սերմերի միջև: Սոցիալիստն ամենայն անկեղծությամբ կարծում է, որ իր և մարդկության միջև նույն հեռավորությունն է ընկած:

Պետք չէ զարմանալ, որ տասնիններորդ դարի քաղաքական գործիչները հասարակությանը նայում են որպես օրենսդիրի հանճարի արհեստական արտադրություն: Այս գաղափարը՝ դասական կրթության արդյունքը, տիրում է մեր երկրի բոլոր մտածողներին և մեծ գրողներին:

Բոլոր այս անձանց համար մարդկության և օրենսդիրի միջև հարաբերությունները կարծես, թե նույնն են, ինչ կավի և կավագործի միջև:

Ավելին՝ եթե նրանք համաձայնել են սրտի խորքում ճանաչել գործողությունների սկզբունքը, իսկ մտքի խորքում՝ ինքնաճանաչման սկզբունքը, նրանք Աստծո այս պարզևը ընդունել են որպես ճակատագրական, և կարծել են, որ մարդկությունն այս երկու ազդակների տակ հակված է ճակատագրական կործանման: Նրանք թերագնահատել են այն, որ եթե մեկուսանային սեփական հակումներով, մարդիկ միայն կգբաղվեին կրոնով՝ աթեիզմին հասնելու համար, ուսուցմամբ՝ անտեղյակության հասնելու համար, և աշխատանքով ու փոխանակմամբ՝ թշվառության մեջ կորելու համար:

Բարեբախտաբար՝ համաձայն այս գրողների՝ կան որոշ մարդիկ՝ կառավարիչներ և օրենսդիրներ կոչվող, որոնց երկինքը հակառակ միտումներ է շնորհել ոչ միայն իրենց համար, այլև հանուն աշխարհի մնացած մասի:

Մինչ մարդկությունը հակված է չարիքին, նրանք հակված են բարուն: Մինչ մարդկությունը առաջ է մղվում դեպի խավարը, նրանք ձգտում են լուսավորության: Մինչ մարդկությունը տարված է անառակությամբ, նրանք հրապուրված են առաքինությամբ: Եվ, այսինքն, նրանք

պահանջում են ուժի աջակցություն, որի միջոցով նրանք փոխարինելու են իրենց հակումները մարդկության համար:

Անհրաժեշտ է միայն պատահական բացել փիլիսոփայության, քաղաքականության կամ պատմության գիրք՝ տեսնելու համար, թե որքան ամուր է դասական ուսումնասիրությունների՝ երեխայի և սոցիալիզմի մոր զաղափարն արմատացած մեր երկրում, որ մարդկությունը պարզապես իներտ մատերիա է, որ կյանքը, կառուցվածքը, բարոյականությունն ու հարստությունը ստանում է իշխանությունից, կամ ավելի շուտ, և ավելի վատ, որ մարդկությունն ինքնին հակված է քայքայման և իր հակումով միայն ձերբակալված է օրենսդիր խորհրդավոր ձեռքով: Դասական պայմանականությունը մեզ ամենուր պասիվ հասարակության ետևում ցույց է տալիս թաքնված ուժ՝ օրենքի կամ օրենսդիր անվան տակ (կամ արտահայտման ձևով, որը վերաբերում է որոշ անվիճելի քաշի և հեղինակության անձի կամ անձանց, բայց անանուն), ինչը շարժում է, աշխուժացնում է, հարստացնում է և բարեփոխում է մարդկությունը:

Մեջբերում անենք Բոսուեթից.

«Եգիպտացիների մտքի վրա ամենից շատ ազդած (ու՛մ կողմից) բաներից մեկը իրենց երկրի հանդեպ սերն էր: Ոչ ոք չէր թույլատրվում անօգտակար լինել պետության համար: Օրենքը բոլորին աշխատանք էր նշանակում, ինչը հորից որդուն էր անցնում: Ոչ ոք չէր թույլատրվում երկու մասնագիտություն ունենալ, ոչ էլ նորը յուրացնել: Բայց կար մի զբաղմունք, որ հանընդհանուր պարտադրված էր բոլորին: Սա օրենքների և իմաստության ուսումնասիրությունն էր: Կրոնի և երկրի քաղաքական կարգավորումների անտեղյակությունը ոչ մի դեպքում ներելի չէր: Ավելին՝ ամեն մասնագիտություն նշանակված էր մի շրջանի (ու՛մ կողմից): Լավ օրենքների մեջ լավագույն բաներից մեկն այն էր, որ բոլորին սովորեցնում էին հետևել դրանց (ու՛մ կողմից): Եգիպտոսը հորդում էր հիասքանչ հայտնագործություններով, և չէր անտեսվում ոչինչ, որ կարող էր կյանքը հարմարավետ և հանգիստ դարձնել:»

Այսպիսով՝ ըստ Բոսուեթի՝ մարդիկ իրենցից ոչինչ չեն ներկայացնում: Հայրենասիրություն, հարստություն, հայտնագործություններ, հողագործություն, գիտություն՝ բոլորը գալիս են օրենքի շահագործմամբ կամ թագավորների կողմից: Նրանց մնում է պարզապես պասիվ լինել: Հենց սրա վրա հիմնվելով է, որ Բոսուեթը բացառություն է անում, երբ Դիոդորոսը մեղադրում է եգիպտացիներին ըմբռամարտը և երաժշտությունը մերժելու մեջ: «Ինչպե՞ս է դա հնարավոր, - ասում է նա, - չէ՞ որ այս արվեստները հորինել է Տրիսմեգիստոսը»:

Նույնը պարսիկների մոտ է.

«Արքայազնի ամենաառաջին մտածումներից մեկը գյուղատնտեսության խրախուսումն էր . . . Ինչպես պաշտոններ են ստեղծվել բանակները կարգավորելու համար, այնպես էլ գրասենյակներ են ստեղծվել գյուղական աշխատանքների գերշահագործման համար . . .

Հարգանքը, որով պարսիկները ոգևորված էին թագավորական իշխանությամբ, չափազանց մեծ էր:»

Հույները, թեև ամբողջովին գիտակից, պակաս անձանոթ չէին իրենց պարտականություններին – այն աստիճան, որ իրենք ինքնուրույն ոչակի չէին դիմի անգամ ամենապարզ խաղերի ժամանակ, ինչպես ծին և շունը: Դասական իմաստով անվիճելի բան է, որ ամեն ինչ դրսից է գալիս մարդկանց:

«Հույները, ի ծնե հարուստ ոգով և խիզախությամբ, սկզբում զարգացում են ապրել եգիպտոսից եկած թագավորների և գաղութների կողմից: Նրանցից իրենք սովորել են մարմնի վարժություններ, ոտքի մրցավազքեր, ձիերի և մարտակառքերի մրցավազքեր: Լավագույն բանը, որ եգիպտացիները սովորեցրին նրանց հնագանդ դառնալն է և թույլ տալը, որ իրենք կազմակերպվեն օրենքով՝ հանուն հանրային բարիքի:»

Ֆենելոն – Կրթվելով հին ժամանակների ուսումնասիրմամբ ու հիացմունքով և լինելով Լուի 14-րդի իշխանության վկան՝ Ֆենելոնը, բնականաբար, ընդունել է այն միտքը, որ մարդկությունը պետք է պասիվ լինի, և որ իր դժբախտություններն ու բարգավաճումները, իր արժանիքները և արատները հետևանք են արտաքին ազդեցությունների՝ կյանքի կոչված օրենքի կամ օրենսդիրների միջոցով: Այսպիսով՝ իր Սալենտոմի Ուտոպիայի մեջ նա մարդկանց առաջ է քաշում իրենց հետաքրքրություններով, իրենց ընդունակություններով, ցանկություններով և ունեցվածքով՝ օրենսդիրի բացարձակ ուղղորդմամբ: Անկախ նրանից, թե ինչ թեմա կարող է լինել, նրանք դրանում իրենց ձայնը չունեն – արքայազնն է իրենց տեղը հարցը լուծում: Ազգը պարզապես անձև զանգված է, որի հոգին արքայազնն է: Նրա մեջ է ապրում միտքը, հեռատեսությունը, բոլոր կազմակերպությունների և առաջընթացների սկզբունքը: Հետևաբար՝ ամբողջ պատասխանատվությունը նրա վրա է ընկնում:

Որպես այս հայտարարության ապացույց՝ ես կարող եմ արտագրել Տելեմախի ամբողջ 10-րդ գիրքը: Ես ընթերցողին դրա հղումն եմ տալիս և ինքս ինձ կգոհացնեմ՝ մեջբերելով այս նշանավոր աշխատանքից պատահական վերցված որոշ հատվածներ, որի հանդեպ ցանկացած առումով ես առաջինն եմ արդարություն դրսևորելու համար:

Դասականներին բնորոշ զարմանալի դյուրահավատությամբ Ֆենելոնը, ի հակառակ փաստերի և փաստարկների հեղինակության, ընդունում է եգիպտացիների ընդհանուր երջանկությունը և վերագրում է դա ոչ թե սեփական իմաստությանը, այլ իրենց թագավորների:

«Մենք չկարողացանք աչքի տակ պահել երկու ափերը՝ առանց ընկալելու համապատասխան տեղակայված հարուստ քաղաքները և տեղական վայրերը, դաշտերը, որոնք ամեն տարի անդադար ծածկված էին ոսկե մշակաբույսերով, երամներով հարուստ մարգագետինները, աշխատողները, որոնք ծովել են մրգերի ծանրությունից, որը երկիրը

շռայլել է իր հողագործներին, և հովիվները, ովքեր արձագանքում էին՝ կրկնելով սրինգի և ֆլեյտայի փափուկ հնչյունները: «Երջանկությունը այն է,- ասաց Ուսուցիչը,- որ մարդիկ ղեկավարվում են իմաստուն թագավորի կողմից»: Ուսուցիչն այնուհետև ցանկացավ, որ ես նկատեմ երջանկությունն ու առատությունը, որը տարածված էր ամբողջ Եգիպտոսով մեկ, որտեղ 22 հազար քաղաք կարելի էր հաշվել: Նա հիանում էր քաղաքների գերազանց ոստիկանական կարգավորումներով, արդարադատությամբ, որն իրականացվում է հօգուտ աղքատների և ոչ հարուստների, երեխաների լավ կրթությունը, որոնք սովոր էին հնազանդության, աշխատանքի, արվեստի և տառերի հանդեպ տածած սիրո, ճշգրտությունը, որով կրոնական բոլոր արարողությունները կատարվում էին, անշահախնդրությունը, պատվի ցանկությունը, մարդկանց հավատարմությունը և աստվածների հանդեպ վախը, որոնցով յուրաքանչյուր հայր ոգևորում էր իր զավակներին: Նա չէր կարողանում բավարար չափով հիանալ երկրի բարգավաճ վիճակով: «Երջանկությունն այն է,- նա ասել է,- որ մարդկանց նման ձևով է ղեկավարում իմաստուն թագավորը»:

Ֆենելոնի հովվերգությունը Կրետեում առավել քան հետաքրքրաշարժ է: Ուսուցիչն ասում է .

«Ամբողջը, որ կարելի է տեսնել այս հիասքանչ կղզում, Մինոսի օրենքների արդյունքն են: Կրթությունը, որ երեխաները ստանում են, մարմինը առողջ և ամուր է պահում: Նրանք առաջին հերթին սովոր են համեստ և դժվար կյանքին: Ենթադրվում է, որ զգացմունքային բոլոր հաճույքները ջլատում են մարմինը և միտքը: Նրանց բացի մեծ փառք ձեռք բերելու համար արժանիքներով անհաղթ լինելուց ոչ մի այլ հաճույք չի ներկայացվում: Այնտեղ պատժում են երեք չարիքներ, որոնք անպատիժ են մնացել այլ ազգերի մեջ՝ ապերախտություն, կեղծիք, ազահություն: Ինչ վերաբերում է շքեղությանը և շռայլությանը՝ կարիք չկա սրանք պատժելու, քանի որ սրանց մասին Կրետեում ոչ ոք չգիտի: Չի թույլատրվում ոչ մի թանկարժեք կահույք, վեհաշուք հագուստ, համեղ տոներ կամ ոսկեգույն պալատներ:»

Այսպիսով, Ուսուցիչը նախապատրաստում է իր գիտնականին, որպեսզի նա կարողանա ձևավորել և մանիպուլացնել Իթաքայի ժողովրդին, անշուշտ, ամենաբարեգործական մտադրություններով, և նրան այդ գաղափարներում հաստատելու համար նա բերում է Սալենտոմի օրինակը:

Այսպիսով, մենք ստանում ենք մեր առաջին քաղաքական պատկերացումները: Մենք սովորում ենք մարդկանց հետ վարվել այնպես, ինչպես Օլիվեր դը Սերրենը ֆերմերներին սովորեցնում է կարգավորել և խառնել ցեխը:

Մոնտեսքյու: - «Պահպանելու համար առևտրի ոգին՝ անհրաժեշտ է, որ բոլոր օրենքները աջակցեն դրան, որ այս նույն օրենքները, ըստ հարստությունները բաժանելու համաչափության (քանի որ առևտուրն

ընդլայնում է դրանք) կանոնակարգման, պետք է ամեն աղքատ քաղաքացուն բավականաչափ հեշտ հանգամանքներ տրամադրեն, որպեսզի նա աշխատի մյուսների պես, և ամեն հարուստ քաղաքացուն այնպիսի միջակություն տրամադրեն, որ նա ստիպված լինի աշխատել՝ պահպանելու կամ ձեռք բերելու համար:»

Այսպիսով, օրենքները պետք է տնօրինեն բոլոր հարստությունները:

«Թեպետ ժողովրդավարության մեջ իրական հավասարությունը պետության եռությունն է, միևնույն է, այնքան դժվար է սահմանել, որ այս հարցում ծայրահեղ ճշգրտությունը միշտ չէ, որ ցանկալի է: Բավական է, որ մարդահամար սահմանվի, որպեսզի որոշ չափով տարբերությունները նվազեցվեն կամ ամրագրվեն: Դրանից հետո, որոշակի օրենքներ, այսպես ասած, հավասարեցնում են անհավասարությունը՝ հարուստներին պարտադրված բեռների և աղքատներին տրված օգնության միջոցով:»

Այստեղ մենք կրկին ականատես ենք լինում հարստությունների հավասարեցում՝ օրենքի միջոցով, այսինքն՝ ուժով:

«Հոնաստանում երկու տեսակի հանրապետություններ կային: Մեկը զինվորական էր, ինչպես, օրինակ, Լակեդամոնը, մյուսն առևտրային էր, ինչպես, օրինակ, Աթենքը: Մեկում ցանկալի էր, որ քաղաքացիները լինեն անգործ, մյուսում աշխատանքի հանդեպ սերը խրախուսվում էր:

Արժե մի փոքր ուշադրություն դարձնել այս օրենսդիրների կողմից պահանջվող հանճարի չափին, որպեսզի տեսնենք, թե ինչպես, համադրելով բոլոր արժանիքները, աշխարհին ցույց տվեցին իրենց իմաստությունը: Լիկուրգոսը, խառնելով գողությունն արդարության ոգու հետ, ամենաձանր ստրկությունը՝ ծայրահեղ ազատության հետ, ամենադաժան զգացմունքները՝ ամենավեհ զսպվածության հետ, կայունություն տվեց իր քաղաքին: Նա, կարծես, զրկեց այն իր բոլոր ռեսուրսներից, արվեստից, առևտրից, գումարից և պատերից: Կար փառասիրություն՝ առանց հույսի ձգտման: Կային բնական երևույթներ, երբ անհատը ոչ երեխա էր, ոչ ամուսին, ոչ էլ հայր: Նույնիսկ ողջախոհությունն էր զրկված համեստությունից: Այս ճանապարհով Սպարտան հասավ վեհության ու փառքի:

Այս երևույթը, որ մենք դիտարկում ենք Հոնաստանի ինստիտուտներում, նկատվել է մեր ժամանակների այլասերումների և կոռուպցիայի մեջ: Ազնիվ օրենսդիրը ձևավորել է մի այնպիսի ժողովուրդ, որտեղ ազնվությունը հայտնվել է այնպես բնական, ինչպես խիզախությունը սպարտացիների շրջանում: Պարոն Փենը իսկական լիկուրգոս է, և, թեպետ, առաջինի մտադրությունը խաղաղություն էր, իսկ վերջինինը՝ պատերազմ, նրանք նման են միմյանց այն եզակի ճանապարհով, որոնցով նրանք առաջնորդել են իրենց ժողովրդին, ազատ մարդկանց վրա իրենց ազդեցությամբ, նախապաշարմունքներով, որ իրենք հաղթահարել են, կրքերով, որ ճնշել են:

Պարագվայը մեկ այլ օրինակ է ապահովում: Հասարակությունը մեղադրվել է իշխելու հաճույքին որպես կյանքի միակ բարիք վերաբերվելու հանցանքի մեջ: Բայց միշտ վսեմ արարք կլինի ղեկավարել մարդկանց՝ իրենց երջանիկ դարձնելով:

Նրանք, ովքեր ցանկանում են ձևավորել նման հաստատություններ, կհիմնադրեն սեփականության համայնք, ինչպես Պլատոնի հանրապետությունում, նույն հարգանքով, որը նա պատվիրել էր աստվածներին, օտարներից անջատումով՝ որպես բարոյականության պահպանում, ու ստիպել քաղաքին առևտրով զբաղվել և ոչ քաղաքացուն: Նրանք պետք է մեր արվեստը մատուցեն առանց մեր շքեղության, մեր ցանկությունները՝ առանց մեր պահանջների:»

Վուլգար մոլությունը կարող է բացականչել, եթե այն հավանի.  
«Մոնտեսքյուն է: Փառահեղ, շքեղ»: Ես չեմ վախենում իմ կարծիքն արտահայտել և ասել. «Ի՞նչ: Դուք դա հիանալի անվանելու երես ունե՞ք: Դա սարսափելի է: Նողկալի է: Եվ այս քաղվածքները, որոնք ես կարող եմ բազմապատկել, ցույց են տալիս, որ, ըստ Մոնտեսքյունի, անձինք, ազատությունները, սեփականությունն ու մարդկությունն ինքնին ոչինչ են՝ բացի օրենսդիրի շահարկումների համար նյութեր լինելուց:»

Ռուստ: Թեև այս քաղաքական գործիչը՝ դեմոկրատների գերագույն իշխանությունը, ստիպում է, որ սոցիալական կառուցվածքը ապավինի ընդհանուր կամքին, ոչ ոք այդքան ամբողջովին չի ընդունել մարդու բնույթի ողջ պասիվության վարկածը օրենսդիրի ներկայությամբ.

«Եթե ճշմարիտ է, որ մեծ իշխանը հազվագյուտ բան է, ապա ինչքա՞ն ավելի շատ հազվադեպ պետք է լինի մեծ օրենսդիրը: Առաջինը միայն հետևում է վերջինիս կողմից առաջարկված կաղապարին: Այս վերջինը մեխանիկն է, ով հնարում է մեքենան, իսկ առաջինը աշխատողն է, ով այն գործի է դնում:»

Եվ ի՞նչ դեր պետք է մարդիկ խաղան այս ամենի մեջ: Մեքենայի, որը գործարկվում է, կամ, ավելի շուտ, արդյո՞ք նրանք այն կոպիտ նյութը չեն, որից մեքենան պատրաստված է: Այսինքն՝ օրենսդիրի և արքայազնի միջև, արքայազնի և իր հպատակների միջև նույն հարաբերություններն են, ինչ գյուղատնտեսական գրողի և գյուղատնտեսի միջև, գյուղատնտեսի և հողի միջև: Ապա ի՞նչ բարձրության վրա է քաղաքական գործիչը, ով ղեկավարում է օրենսդիրներին և նրանց սովորեցնում իրենց առևտուրն այնպիսի հրամայական պայմաններում, ինչպես հետևյալը.

«Հետևողականություն կցուցաբերե՞ք պետության հանդեպ: Համախմբե՞ք որքան հնարավոր է շատ ծայրահեղություններ: Ո՛չ հարուստները տառապեն, ո՛չ աղքատները»: Եթե հողը աղքատ ու անբերրի է, կամ երկիրը շատ սահմանափակ է բնակիչների համար, դիմե՛ք արդյունաբերությանը և արվեստին, որոնց արտադրանքները կփոխանակեք պահանջված մթերքներով: Լավ հողի դեպքում, եթե բնակիչների պակաս կա, Ձեր ամբողջ ուշադրությունը սևեռե՛ք

գյուղատնտեսության վրա, որը բազմապատկում է մարդկանց, և արգելե՛ք արվեստը, որը միայն ծառայում է երկիրն ամայացնելուն: Ուշադրություն դարձրե՛ք ընդարձակ և հարմարավետ գոտիներին: Ծածկե՛ք ծովը նավերով և Դուք կապահովեք փայլուն ու կարճ գոյություն: Եթե Ձեր ծովերը ողողում են միայն անմատչելի ժայռերը, թող մարդիկ դաժան լինեն և ճուկ ուտեն: Նրանք կապրեն ավելի խաղաղ, հավանաբար, ավելի լավ և, անշուշտ, ավելի երջանիկ: Կարճ ասած՝ բացի այն ամենից, որոնք ընդհանուր են բոլորի համար, յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն յուրահատուկ հանգամանքներ, որոնք պահանջում են ինքնին յուրահատուկ օրենսդրություն:

«Այսպիսով՝ սկզբում եբրայեցիները, իսկ վերջերս արաբները, կրոն ունեին իրենց հիմնական նպատակի համար. արեւցիներինը գրականությունն էր, Կարթագենիսն ու Տիրինը՝ առևտուրը, Հռոդոսինը՝ ռազմածովային գործերը, Սպարտայինը՝ պատերազմը, և Հռոմինը՝ առաքինությունը: «Օրենքների ոգու» հեղինակը ցույց է տվել արվեստը, որով օրենսդիրը պետք է սահմանի իր հաստատությունները այս նպատակներից յուրաքանչյուրի նկատմամբ: Բայց եթե օրենսդիրը սխալվում է իր նպատակներում, պետք է ընդունի մի սկզբունք, որը տարբերվում է նրանից, որ բխում է իրերի բնույթից: Արդյո՞ք մեկը պետք է ձգտի ստրկության, իսկ մյուսը անկախության, արդյո՞ք մեկը՝ հարստության, իսկ մյուսը՝ բնակչության, մեկը՝ խաղաղության, իսկ մյուսը՝ նվաճումների: Օրենքներն անխուսափելիորեն կթուլանան, սահմանադրությունը կխաթարվի, և պետությունը կենթարկվի անընդհատ խռովությունների մինչև ոչնչացվի կամ փոփոխվի, և անպարտելի բնությունը վերադարձնի իր կայսրությունը:»

Բայց եթե բնությունը բավականաչափ անպարտելի է՝ վերականգնելու համար իր կայսրությունը, ինչու՞ Ռուստոն չի ընդունում, որ այն օրենսդիրի կարիք չունի՝ ի սկզբանե իր կայսրությունը ձեռք բերելու համար: Ինչու՞ նա թույլ չի տալիս, որ, իրենց սեփական ազդակներին հնազանդվելով, մարդիկ գյուղատնտեսությամբ ինքնուրույն զբաղվեն բերրի շրջաններում, և առևտրով՝ ընդարձակ ու հարմարավետ ափերին՝ առանց Լիկուրգուսի, Սոլոնի կամ Ռուստոյի միջամտության, ովքեր իրենց վրա կվերցնեին՝ նրանց խաբելու վտանգը:

Ինչ էլ, որ լինի, մենք տեսնում ենք, թե ինչպիսի սարսափելի պատասխանատվությամբ է Ռուստոն լիազորում գյուտարարներին, գործարարներին, ղեկավարներին և հասարակությունների մանիպուլյատորներին: Ուստի, նա շատ խստապահանջ է նրանց նկատմամբ:

«Նա, ով համարձակվում է հանձն առնել ժողովրդի հաստատությունները, պետք է զգա, որ կարող է, ինչպես ասում են, փոխակարպել յուրաքանչյուր անհատի, ով իրենից ներկայացնում է կատարյալ և միայնակ ամբողջություն՝ կյանք ստանալով և լինելով ավելի մեծ ամբողջությունից, որի մաս է ինքը կազմում: Նա պետք է զգա, որ կարող է փոխել մարդու սահմանադրությունը՝ այն ամրացնելու համար, և փոխարինել մասնակի և



բարոյական գոյությունը ֆիզիկական և անկախ գոյությամբ, որը մենք բոլորս ստացել ենք բնությունից: Կարճ ասած՝ նա պետք է գրկի մարդուն իր սեփական լիազորություններից, որպեսզի նրան տա իրեն անձանոթ ուրիշ լիազորություններ:»

Խեղճ մարդկային բնույթ: Ի՞նչ կլիներ նրա կոչումը, եթե այն վստահվեր Ռուստոյի հետևորդերին:

Ռայնալ: «Կլիման, այսինքն՝ օդն ու հողը, օրենսդիրի համար առաջին տարերքն է: Նրա ռեսուրսները նշանակում են իրեն իր պարտականությունները: Նախ՝ նա պետք է խորհրդակցի իր տեղական պաշտոնի մասին: Ծովափնյա վայրերում ապրող բնակչությունը պետք է նավարկության համար օրենքներ ունենա: Եթե գաղութը գտնվում է ներքին շրջանում, օրենսդիրը պետք է ապահովի հողի բնույթը և դրա պտղաբերության աստիճանը»: Ավելի կոնկրետ՝ օրենսդրության իմաստությունը հայտնվում է սեփականության բաշխման ժամանակ: Որպես ընդհանուր կանոն՝ յուրաքանչյուր երկրում, երբ ստեղծվում է նոր գաղութ, յուրաքանչյուր մարդու պետք է տրվի հող, որը բավարար է իր ընտանիքի աջակցության համար:

«Անմարդաբնակ կղզում, որը դուք բնակեցնում եք երեխաներով, անհրաժեշտ է միայն թույլ տալ, որ ճշմարտության ծիլերը ընդլայնեն մտքի զարգացումը: Բայց երբ դուք նոր երկրում ծեր մարդկանց եք բնակեցնում, հմտությունը կայանում է միայն նրանում, որ թույլ տրվի այն վնասակար կարծիքները և սովորույթները, որոնք հնարավոր չէ բուժել և ուղղել: Եթե ցանկանում եք կանխել նրանց հավերժացումը, դուք կազդեք աճող սերնդի վրա՝ երեխաների ընդհանուր և հանրային կրթությամբ: Արքայազնը, օրենսդիրը պարտավոր են երբեք գաղութ չհիմնել առանց նախապես այնտեղ խելացի մարդկանց ուղարկելու, որպեսզի սովորեցնեն երիտասարդներին: Նոր գաղութում ցանկացած հարմարություն բաց է օրենսդիրի նախազգուշացումների համար, ով ցանկանում է մաքրել ժողովրդի բնույթն ու վերաբերմունքը: Եթե նա ունի հանճար և առաքինություն, իր ենթակայության տակ գտնվող հողերը և մարդիկ կոգեշնչեն իր ոգին հասարակության ծրագրով, որին գրողը կարող է միայն անորոշ կերպով հետևել և այնպես, որ ենթակա լինի բոլոր վարկածների անկայունությանը, որոնք դժվար է կանխատեսել և համատեղել՝ բազմազան և բարդ հանգամանքների անսահմանության պատճառով»:

Կարելի է կարծել, որ գյուղատնտեսության պրոֆեսոր Էր, ով ասում էր իր աշակերտներին. «Կլիման միակ կանոնն է գյուղատնտեսի համար: Նրա ռեսուրսները թելադրում են իր պարտականությունները: Առաջին բանը, որ նա պետք է հաշվի առնի, իր տեղական պաշտոնն է: Եթե նա կավե հողի վրա է, նա պետք է այսպես կամ այնպես անի: Եթե նա ստիպված է կռվել ավազի հետ, սա է այն ճանապարհը, որով նա պետք է գործի անցնի: Յուրաքանչյուր հարմարություն բաց է գյուղատնտեսի համար, ով ցանկանում է մաքրել և բարձրացնել հողի որակը: Եթե նա միայն հմտություն ունի, իր տրամադրության տակ գտնվող գոմաղբը իրեն գործողությունների ծրագիր կառաջարկի, որին միայն պրոֆեսորը կարող

Է անորոշ կերպով հետևել և այնպես, որ ենթակա լինի բոլոր վարկածների անկայունությանը, որոնք բազմազան են և բարդ՝ դժվար կանխատեսելի և համատեղելի հանգամանքների անսահմանության պատճառով»:

Բայց, օ՛հ: Հոյակապ գրողներ... Երբեմն ոգեշնչված հիշում են, որ այս կավը, այս ավազը, այս գոմաղբը, որոնք դուք տնօրինում եք այնքան անզուսպ կերպով, մարդիկ են, ձեզ հավասարները, ձեզ նման խելացի և ազատ էակներ, ովքեր, ինչպես դուք, Աստուծոց ստացել են տեսնելու, կանխատեսելու, մտածելու և ինքնուրույն դատելու կարողություն:

Մաբլի (ևա ենթադրում է, որ օրենքները ժամանակի ընթացքում և երաշխիքների բացակայության պատճառով հնանում են, և այդպիսով շարունակում է).

«Այս պայմաններում մենք պետք է համոզված լինենք, որ կառավարության վայրիվերումները թուլացել են: Տվե՛ք նրանց նոր լարվածություն (ընթերցողին է հասցեագրված), և չարը կբուժվի: Քիչ մտածե՛ք սխալները պատժելու մասին՝ փոխանակ խրախուսեք ձեր ուզած արժանիքները: Այս մեթոդով դուք կստանաք ձեր հանրապետության երիտասարդության ուժը: Սրա մասին անտեղյակ լինելու պատճառով ազատ ժողովուրդ գրկվել է անկախությունից: Բայց եթե չարիքը հնարել է այնքան շատ ձևեր, որ սովորական դատավորները անկարող են այն արդյունավետ կերպով լուծել, դիմե՛ք արտակարգ դատավորների, որոնց ժամանակը կարճ է, իսկ ուժը՝ զգալի: Քաղաքացիների երևակայությունը տպավորված լինել է պահանջում»:

Այս ոճով ևա անցնում է քսան հատորով:

Կար ժամանակ, երբ նման կերպով ուսուցանելու ազդեցության տակ, որը դասական կրթության հիմքն է, յուրաքանչյուր ոք իրեն կարգում էր մարդկությունից առաջ և վեր՝ հանուն դա իր ձևով կարգավորելու, կազմակերպելու և սահմանելու:

Կոնդիլակ.

«Ձեզ վրա վերցրե՛ք, տե՛ր իմ, Լիկուրգուսի և Սոլոնի բնույթը: Մինչև դուք ավարտեք այս էսսեյը կարդալը, զվարճացրե՛ք ինքներդ ձեզ՝ Ամերիկայում կամ Աֆրիկայում որոշ վայրի ժողովուրդների օրենքներ նշանակելով: Տեղավորե՛ք թափառականներին բնակարաններում, սովորեցրե՛ք նրանց ապրել հոտերով: Ձգտե՛ք զարգացնել սոցիալական որակները, որոնց բնույթը արմատացել է նրանց մեջ: Ստիպե՛ք նրանց կիրառել մարդկության պարտականությունները: Այնպես արե՛ք, որ հաճույքների կրքերը նողկալի դառնան պատժամիջոցների շնորհիվ, և կտեսնեք, որ այս բարբարոսները ձեր օրենսդրության բոլոր ծրագրերով կորցնում են արատները և ձեռք բերում արժանիքներ:

Բոլոր այս ժողովուրդները ունեցել են օրենքներ: Բայց նրանցից քչերն են երջանիկ եղել: Ինչու՞: Որովհետև օրենսդիրները գրեթե միշտ անտարբեր

են եղել հասարակության նպատակի նկատմամբ, որը ընդհանուր հետաքրքրությամբ ընտանիքներ միավորելն է:

Օրենքի անաչառությունը բաղկացած է երկու բանից՝ հարստությունների և քաղաքացիների արժանապատվության հավասարեցում մտցնելուց: Օրենքներով սահմանված հավասարության աստիճանին համահունչ՝ նրանք ավելի թանկ կոռուկան յուրաքանչյուր քաղաքացու համար: Ինչպե՞ս կարող են ազահությունը, փառասիրությունը, ցնցումները, անգործությունը, ծուլությունը, նախանձը, ատելությունը, խանդը գրգռել մարդկանց, ովքեր հավասար են հարստությամբ և կոչումով, և նրանց, ում օրենքն իրենց հավասարությունը շեղելու ոչ մի հույս չի տալիս:

Այն, ինչ ձեզ պատմվել է Սպարտայի հանրապետության մասին, պետք է ձեզ լուսավորի այս հարցի կապակցությամբ: Ոչ մի ուրիշ պետություն չի ունեցել օրենքներ՝ համապատասխան հավասարության կամ բնության բնույթին»:

Չարմանալ պետք չէ, որ 17-րդ և 18-րդ դարերը պետք է մարդկային ռասսան դիտարկելին որպես իներտ նյութ՝ պատրաստ ստանալու ամեն ինչ՝ ձև, պատկեր, ազդակ, շարժ և կյանք մեծ արքայազնից կամ մեծ օրենսդիրից կամ մեծ հանճարից: Այս դարաշրջաններին մեծ տեղ է տրվել հին ժամանակների ուսումնասիրությունների մեջ: Իսկ հին ժամանակները ամենուր՝ Եգիպտոսում, Պարասկաստանում, Հունաստանում և Հռոմում, ներկայացնում են մի քանի մարդուց բաղկացած տեսաան, որոնք ձևավորում են մարդկությունը՝ ըստ իրենց երևակայության, և մարդկությունը այս նպատակով հպատակվում է ուժով կամ խարդախությամբ: Եվ ի՞նչ է սա ապացուցում: Քանի որ մարդիկ ու հասարակությունը կատարելագործելի են, սխալը, անտեղյակությունը, բռնակալությունը, ստրկությունը և սևահավատությունը պետք է ավելի գերակշռեն վաղ ժամանակներում: Վերոհիշյալ գրողների սխալը այն չէ, որ նրանք հաստատել են այս փաստը, այլ այն, որ նրանք առաջարկել են դա, որպես կանոն, ապագա սերունդների հիացմունքի և ընդօրինակման համար: Չանազանման անհասկանալի բացատրությամբ և պայմանականության երեխայության հավատով՝ նրանց սխալն այն էր, որ ընդունել են այն, ինչ անընդունելի է, այլ կերպ ասած՝ երեխայական պայմանականության հին աշխարհի արհեստական հասարակությունների շքեղությունը, կոչումը, բարոյականությունը և բարեկեցությունը: Նրանք չեն հասկացել, որ ժամանակը ստեղծում և տարածում է լուսավորություն, և որ լուսավորության աճին համաչափ իրավունքը դադարում է ուժով պաշտպանվել, և հասարակությունը վերադարձնում է ինքն իր տիրապետությունը:

Եվ իրականում, ո՞րն է քաղաքական աշխատանքը, որը մենք ձգտում ենք խթանել: Այն ոչ այլ ինչ է, քան յուրաքանչյուր ժողովրդի բնազդային ջանքերը ազատության նկատմամբ: Եվ ի՞նչ է ազատությունը, որի անունը կարող է ստիպել, որ ցանկացած սիրտ բաբախի, և որը կարող է ցնցել աշխարհը, եթե ոչ բոլոր ազատությունների միություն՝ խղճի, ուսուցման, միության, մամուլի, տեղաշարժման, աշխատանքի և փոխանակման

ազատություն: Այլ կերպ ասած՝ բոլորի անվասա ընդունակությունների կիրառում: Եվ կրկին այլ կերպ ասած՝ բոլոր բռնակալությունների ոչնչացումը՝ նույնիսկ իրավական բռնակալության, և օրենքի կրճատումը՝ իր միակ ռացիոնալ ոլորտին հասցնելու համար, որը օրինական պաշտպանության անհատական իրավունքը կարգավորելու կամ անարդարությունը ճնշելու համար է:

Մարդկային ցեղի այս միտումը, պետք է ընդունել, որ հատկապես մեր երկրում մեծապես խափանված է իրենց մարդկությունից առաջ դասելու կործանարար հակումով՝ դա ըստ իրենց երևակայության կազմակերպելու և կարգավորելու համար՝ որպես դասական ուսուցանման արդյունք և բոլոր քաղաքական գործիչների համար ընդհանուր:

Մինչդեռ հասարակությունը պայքարում է ազատության գիտակցման համար, մեծ մարդիկ, ովքեր իրենց գլուխ են նշանակում տոգորված 17-րդ և 18-րդ դարի սկզբունքներով, մտածում են միայն այն իրենց սոցիալական հորինվածքների բարեգործական բռնակալությանը ենթարկելու մասին, ինչպես նաև, ըստ Ռուսսոյի ասածի, ստիպելու հնազանդությամբ դիմանալ հանրության երջանկության լծին, ինչպես պատկերված է իրենց սեփական երևակայություններում:

Սա հատկապես բնորոշ էր 1789 թվականին: Հենց որ ոչնչացվել էին համակարգը, հասարակությանը պետք է ներկայացվել այլ արհեստական պայմանավորվածություններ՝ միշտ նույն սկզբնակետով՝ օրենքի ամենագործությամբ:

Սենթ Ջասթ. «Օրենսդիրը տնօրինում է ապագան: Սա նրա համար է, որ նա մարդկությանը բարիք ցանկանա: Սա նրա համար է, որ նա մարդկանց սարքի այնպես, ինչպես ցանկանում է, որ լինեն»:

Ռոբեսպիեր. «Կառավարության գործառույթը ժողովրդի ֆիզիկական և բարոյական ուժերը դեպի իր հաստատության նպատակն ուղղորդելն է»:

Բիլոդ Վարեն. «Ազատության վերականգնման կարիք ունեցող ժողովուրդը պետք է նորից ձևավորվի: Հին նախապաշարմունքները պետք է ոչնչացվեն, հնացած սովորույթները փոխվեն, անբարեխիղճ վերաբերմունքն ուղղվի, մոլի արատներն արմատախիլ արվեն: Սրա համար հաստատուն ուժի և վճռական ազդակի կարիք կլինի: Քաղաքացիները, Լիկուրգուսի անխախտելի խստությունը կերտեցին Սպարտիայի հանրապետության ամուր հիմքը: Սոլոնի տկար և վստահելի կարգադրությունները Աթենքը ստրկության մեջ գցեցին: Այս զուգահեռը պարունակում է կառավարության ամբողջ գիտությունը»:

Լեփելեթեր. «Հաշվի առնելով մարդկության անկման աստիճանը՝ ես համոզված եմ, որ կա ռասայի ամբողջական վերածնունդ կատարելու և, եթե կարելի է այսպես արտահայտվել, նոր մարդկանց ստեղծելու անհրաժեշտություն»:

Մարդիկ, հետևաբար, ոչինչ են, քան չմշակված նյութ: Իրենց սեփական բարելավումն ուզելը իրենց համար չէ: Նրանք ի վիճակի չեն դրան: Ըստ Մենթ Ջասթի՝ միայն օրենսդիրն է ի վիճակի: Մարդիկ լոկ այն են, ինչն օրենսդիրը ուզում է, որ նրանք լինեն: Ըստ Ռոբեսպիերի, ով բառացիորեն կրկնօրինակում է Ռուսսոյին՝ օրենսդիրը պետք է սկսի՝ հաստատելով ժողովրդի հաստատությունների նպատակը: Սրանից հետո կառավարությունը միայն այս ուղղությամբ պետք է ուղղի իր ամբողջ ֆիզիկական և բարոյական ուժերը: Այս ամբողջ ընթացքում ժողովուրդն ինքը պետք է պասիվ մնա: Իսկ Բիլոդ Վարեն մեզ կտվորեցներ, որ այն պետք է չունենա նախախնամություններ, ազդեցություններ, ցանկություններ, բայց այնսպիսին, որ վավերացված են օրենսդիրի կողմից: Նա անգամ ավելի հեռու է գնում՝ ասելով, որ մարդու անբեկանելի խստությունը հանրապետության հիմքն է:

Մենք տեսել ենք, որ այն իրավիճակներում, երբ արատն այնքան մեծ է, որ սովորական դատավորներն անկարող են այն բուժել, Մաբլին խորհուրդ է տալիս դիկտատուրա՝ առաքինություն խթանելու համար: «Դիմե՛ք, - ասում է նա, - արտակարգ դատարանին, որի ժամանակը կլինի քիչ, իսկ ուժը՝ զգալի: Ժողովրդի երևակայությունը պետք է տպավորվի»: Այս ուսմունքը չի անտեսվել: Լսե՛ք Ռոբեսպիերին.

«Հանրապետական կառավարության սկզբունքը առաքինությունն է, իսկ այն միջոցները, որոնք պետք է ընդունվեն դրա ստեղծման ընթացքում, ահաբեկչություն են: Մենք ուզում ենք մեր երկրում փոխարինել բարոյականությունը եսասիրությամբ, ազնվությունը՝ փառքով, սկզբունքները՝ սովորույթներով, պարտականությունները՝ վարվելակարգով, բանականության կայսրությունը՝ նորաձևության բռնակալությամբ, չարիքն արհամարհելը՝ դժբախտությունն արհամարհելով, հպարտությունը՝ ամբարտավանությամբ, հոգու մեծությունը՝ դատարկությամբ, փառքի հանդեպ սերը՝ գումարի հանդեպ սիրով, լավ մարդկանց՝ լավ ընկերությամբ, վաստակը՝ բանսարկությամբ, հանճարեղությունը՝ սրամտությամբ, ճշմարտությունը՝ շքեղ քայլով, երջանկության հմայքը՝ հաճույքի ձանձրույթով, մարդու մեծությունը՝ մեծության փոքրությամբ, վեհանձն, հզոր, երջանիկ մարդկանց՝ անկայուն, թեթևամիտ, այլասերված մարդկանցով: Այսինքն՝ փոխարինել հանրապետության բոլոր արժանիքներն ու հրաշքները նորաձևության միապետական բռնակալության չարիքներով ու անհեթեթություններով»:

Մարդկությունից ինչպիսի բարձրության վրա է իրեն Ռոբեսպիերն այստեղ դասում: Եվ դիտարկե՛ք ամբարտավանությունը, որով նա խոսում է: Նա չի բավարարվում մարդկային սրտի մեծ վերակառուցման ցանկությունն արտահայտելով, նա նույնիսկ նման արդյունք չի ակնկալում հերթական կառավարության կողմից: Ո՛չ: Նա մտադիր է ազդել ինքնուրույն և ահաբեկչական միջոցներով: Դիսկուրսի առարկան, որից դուրս է հանվել հակաթեզի այս երեխայական ու դժվար զանգվածը, պետք է արտահայտեր բարոյական սկզբունքները, որոնք պետք է ուղղորդեին հեղափոխական կառավարությանը: Ավելին, երբ Ռոբեսպիերը

պահանջում է բռնապետություն, այն ոչ միայն օտարերկրյա թշնամուն ետ մղելու կամ տարածայնությունները ճնշելու համար է, այլև ահաբեկչության միջոցով և որպես սահմանադրական խաղի սկիզբ՝ բարոյականության իր սկզբունքները հաստատելու համար: Նա հավանում է ոչ այլ ինչի, քան ահաբեկչության միջոցով երկրից դուրս հանելու եսասիրությունը, փառքը, սովորույթները, վարվելակարգը, նորածնությունը, գումարի հանդեպ սերը, լավ ընկերությունը, բանսարկությունը, սրամտությունը, շքեղությունը և դժբախտությունը: Միայն այն բանից հետո, երբ ինքը՝ Ռոբեսպիերը, կատարեր այս հրաշքերը, ինչպես նա արդարացիորեն կոչում է դրանց, նա թույլ կտար, որ օրենքը վերականգներ իր կայսրությունը: Իրականում, լավ կլիներ, եթե այս երագողները, ովքեր այնքան շատ մտածում են իրենց մասին և այնքան քիչ՝ մարդկության, ովքեր ցանկանում են նորացնել ամեն ինչ, միայն բավարարվեին իրենք իրենց բարեփոխելով. խնդիրը բավական դժվար կլիներ իրենց համար: Ընդհանրապես, չնայած այս պարոնայք, ռոֆորմիստները, օրենսդիրները, քաղաքական գործիչները չեն ցանկանում ուղիղ բռնակալություն գործածել մարդկության հանդեպ: Ո՛չ: Նրանք չափազանց զուսպ և մարդասեր են դրա համար: Նրանք միայն պայքարում են բռնակալության, բացարձակ իշխանության և օրենքի ամենագործության համար: Նրանք ձգտում են միայն օրենք ստեղծել:

Ցույց տալու համար, թե որքան համընդհանուր է եղել այս տարօրինակ բռնակալությունը Ֆրանսիայում, ես պետք է ոչ միայն արտագրեի Մաբլիի, Ռայնալի, Ռուստոյի, Ֆենելոնի ամբողջ աշխատանքները և մեծ քաղվածքներ հանեի Բոսուեից ու Մոնտեսքյուլից, այլև տալ Կոնվենցիայի նիստերի ամբողջ արձանագրությունները: Ես նման բան չեմ անի, թեպետ ընթերցողին միայն դրանցից հղում կտամ:

Չարմանալի չէ, որ այս գաղափարը պետք է Բոնապարտին չափազանց լավ համապատասխաներ: Նա դա ջերմորեն ընդունեց և եռանդորեն գործածեց: Քիմիկոսի դեր խաղալով՝ Եվրոպան նրա համար փորձարկումների նյութ էր: Բայց այս նյութը իրեն հակառակ ռեակցիա տվեց: Կեսից շատը ճշմարտությունն իմանալով՝ Բոնապարտը Սուրբ Հելենա կղզում կարծես ընդունեց, որ յուրաքանչյուր ժողովրդի մեջ կա նախածեռնողականություն, և նա սկսեց պակաս թշնամական վերաբերվել ազատությանը: Սակայն սա նրան չարգելեց այս դասն իր որդուն տալ իր կտակի մեջ. «Կառավարելը բարոյականություն, կրթություն և բարեկեցություն տարածելն է»:

Այս ամենից հետո դժվար, թե կարիք լինի նրբին ցիտումներով ներկայացնելու Մորելլիի, Բաբեֆի, Օուենի, Սեն Սիմոնի և Ֆուրյեի կարծիքները: Ես կսահմանափակվեմ Լուի Բլանի գրքից մի քանի հատվածներով՝ աշխատանքի կազմակերպման մասին:

«Մեր ծրագրում հասարակությունը ստանում է իշխանության խթանը»:

Ինչի՞ց է բաղկացած խթանը, որ իշխանությունը տալիս է հասարակությանը: Լուի Բլանի ծրագրի ներդրումից:

Մյուս կողմից՝ հասարակությունը մարդկային ռասսան է: Հետևաբար՝ մարդկային ռասսան պետք է խթան ստանա Լուի Բլանից:

Դա անել կամ չանելը ազատության վրա է. այսպես կասվի: Իհարկե, մարդկային ռասսան ազատ է խորհուրդ վերցնելու ցանկացած մեկից՝ ով էլ, որ լինի: Բայց Լուի Բլանն այսպես չէ, որ այն հասկանում է: Նա նկատի ունի, որ իր ծրագիրը պետք է վերածվի օրենքի և, հետևաբար, իշխանության կողմից հարկադրաբար պարտադրվի:

«Մեր ծրագրում պետությունը միայն պետք է օրենսդրությունը կարգավորի աշխատանքի համար, որի միջոցով արդյունաբերական շարժումը կարող է և պետք է իրականացվի ամբողջ ազատությամբ: Այն (պետությունը) պարզապես հասարակությանը դնում է մի թեքության վրա, որտեղից կարելի է բացարձակ ուժով և հաստատված մեխանիզմի բնականոն ընթացքով ցած ընկնել, երբ այդ թեքության վրա է»:

Բայց ինչի՞ համար է այս թեքությունը: Մեկը նշված է Լուի Բլանի կողմից: Արդյո՞ք այն չի տանում դեպի անդունդը: Ո՛չ, այն երջանկություն է բերում: Այդ դեպքում ինչու՞ հասարակությունն ինքը այնտեղ չի գնում: Որովհետև այն չգիտի, թե ինչ է ուզում, և խթանի կարիք ունի: Ի՞նչ կտա այս խթանը: Իշխանություն: Եվ ո՞վ կտա խթանն իշխանությանը: Մեքենայի հորինողը՝ Լուի Բլանը:

Մենք երբեք չպետք է դուրս գանք այս շրջանից. պասիվ մարդկություն և մեծ մարդիկ, որոնք այն շարժում են օրենքի միջամտությամբ: Այս թեքության վրա արդյո՞ք հասարակությունը կվայելի ազատությունը: Անկասկած: Եվ ի՞նչ է ազատությունը:

«Մեկընդմիջտ. ազատությունը բաղկացած է ոչ միայն շնորհված իրավունքով, այլև մարդուն տրված իշխանությամբ՝ իրականացնել, զարգացնել իր ընդունակությունները՝ արդարադատության կայսրության և օրենքի պաշտպանության ներքո:

Եվ սա անիմաստ տարբերություն չէ. խորը իմաստ կա դրա մեջ, և դրա հետևանքները չեն կարող գնահատվել: Քանի որ հենց ընդունվում է, որ մարդն իրապես ազատ լինելու համար պետք է ունենա իր ընդունակություններն իրականացնելու ու զարգացնելու իշխանություն, սրանից հետևում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ունի այնպիսի հանձնարարության պահանջ, ինչպես թույլ տալ իրեն ցուցադրել, և աշխատանքի գործիքների պահանջ, առանց որոնց մարդկային գործունեությունը չի կարող գտնել որեւէ շրջանակ: Հիմա ու՞մ միջամտությամբ պետք է հասարակությունն իր անդամներից յուրաքանչյուրին տա անհրաժեշտ հանձնարարությունը և աշխատանքի գործիքները, եթե ոչ պետության»:

Հետևաբար՝ անկախությունը իշխանություն է: Ինչի՞ց է բաղկացած այս իշխանությունը: Աշխատանքի հանձնարարություն և գործիքներ ունենալուց: Հասարակությունից, որ պարտք է դրանց: Ու՞մ միջամտությամբ պետք է հասարակությունը աշխատանքի գործիքները

տա նրանց, ովքեր չունեն: Պետության միջնորդությամբ: Ու՞մից պետք է պետությունը ձեռք բերի դրանք:

Այս հարցին պետք է պատասխանի ընթերցողը և իմանա, թե դեպի ուր է այս ամբողջը գնում:

Մեր ժամանակների ամենատարօրինակ երևույթներից մեկը, որը զարմանքի առարկա կլինի մեր ժառանգների համար, ուսմունքն է, որը հիմնված է այս եռակի վարկածների վրա՝ մարդկության արմատական պասիվությունը, օրենքի ամենագորությունը, օրենսդիրի անսխալականությունը: Սա կուսակցության սուրբ խորհրդանիշն է, որն իրեն բացարձակ ժողովրդավարական է հռչակում:

Ճիշտ է, որ այն նաև պնդում է, թե սոցիալական է:

Քանի որ ժողովրդավարական է, այն մարդկության մեջ անսահման հավատ ունի:

Քանի որ սոցիալական է, այն իրեն ցեխի տակ է թաղում:

Արդյո՞ք քաղաքական իրավունքները ենթակա են քննարկման: Օրենսդիրը պե՞տք է ընտրվի: Օհ, այդ դեպքում մարդիկ գիտությունը բնագոյով են կրում. նրանք շնորհված են սքանչելի նրբագագողությամբ, նրանց կամքը միշտ ճիշտ է, ընդհանուր կամքը չի կարող սխալվել: Ընտրական իրավունքը չի կարող չափազանց համընդհանուր լինել: Ոչ ոք հասարակության հանդեպ որևէ պատասխանատվություն չի կրում: Լավն ընտրելու կամքն ու կարողությունը այդպես էլ պիտի լինեին: Կարո՞ղ են մարդիկ սխալվել: Արդյո՞ք մենք լուսավորչության դարաշրջանում չենք ապրում: Ի՞նչ: Արդյո՞ք մարդիկ անընդհատ պետք է առաջատար տողերում լինեն: Արդյո՞ք նրանք ձեռք չեն բերել իրենց իրավունքները ջանքերի և զոհաբերության գնով: Արդյո՞ք նրանք խելացիության և իմաստության բավարար ապացույցներ չեն տվել: Արդյո՞ք նրանք չեն հասունացել: Արդյո՞ք նրանք ի վիճակի չեն ինքնուրույն դատել: Արդյո՞ք նրանք չգիտեն իրենց սեփական հետաքրքրությունները: Կա՞ մարդ կամ դասակարգ, որը կհամարձակվի պնդել, որ իրեն ժողովրդի տեղը դնեն, որ ինքը որոշի և գործի ժողովրդի փոխարեն: Ո՛չ, ո՛չ: Մարդիկ ազատ են եղել և այդպես էլ կլինեն: Նրանք ուզում են իրենք վարել իրենց գործերը, և այդպես էլ կլինի:

Բայց հենց օրենսդիրը պատշաճ ձևով ընտրվում է, իրականում իր խոսքի ոճը փոխվում է: Ազգը ետ է ուղարկվում պասիվ, իներտ, դատարկ վիճակի, և օրենսդիրն իր ձեռքն է առնում ամենագորության տիրապետությունը: Նա է հնարում, նա է ուղղություն ցույց տալիս, նա է առաջ մղում և նա է կազմակերպում: Մարդկությունը ոչինչ չի կարող անել, բացի ընդունելուց. եկել է բռնապետության ժամանակը: Եվ մենք պետք է դիտարկենք, որ սա վճռորոշ է. քանի որ առաջ այդքան լուսավորված, այդքան բարոյական, այդքան կատարյալ մարդիկ որևէ հակում չունեն կամ, եթե ունեն, ապա դրանք բոլորը դեպի անկում են տանում: Բայց, ամեն դեպքում, նրանք մի փոքր անկախություն պետք է ունենան: Բայց, ըստ Կոնստիդերանի, արդյո՞ք



մենք համոզված չենք, որ անկախությունն անխուսափելիորեն տանում է դեպի մենաշնորհի: Արդյո՞ք մեզ չեն ասել, որ անախությունը մրցակցություն է: Եվ այդ մրցակցությունը, ըստ Լուի Բլանի, մարդկանց բնաջնջման և առևտրի կործանման համակարգ է: Այս պատճառով ժողովուրդները ոչնչացվում և կործանվում են համաչափությամբ, քանի որ ազատ են: Օրինակ՝ Շվեյցարիան, Հոլանդիան, Անգլիան և ԱՄՆ-ն: Արդյո՞ք Լուի Բլանը մեզ նորից չի ասում, որ մրցակցությունը տանում է դեպի մենաշնորհ և որ նույն պատճառով Եժանությունը հանգեցնում է հսկայական գների: Որ մրցակցությունը հակված է սպառել ծախսման աղբյուրները և արտադրությունը տանում է կործանարար գործունեության: Որ մրցակցությունը ստիպում է, որ արտադրությունն աճի և սպառումը նվազի, որտեղից էլ հետևում է, որ ազատ մարդիկ արտադրում են ոչ հանուն սպառման: Որ բացի ճնշումից և մոլեգնությունից ուրիշ ոչինչ չկա նրանց միջև: Եվ որ Լուի Բլանի համար բացարձակապես անհրաժեշտ է տեսնել այն:

Ի՞նչ տեսակի ազատություն պետք է թույլատրվի մարդկանց: Խղճի՞ ազատություն: Բայց մենք կտեսնենք, թե ինչպես են բոլորը օգուտ քաղում աթեիստ դառնալու թույլտվությունից: Կրթությա՞ն ազատություն: Բայց ծնողները դասախոսներին կվճարեն իրենց երեխաներին անբարոյականություն և շեղումներ սովորեցնելու համար: Բացի այդ, եթե մենք հավատանք Մ. Թիերզին, եթե կրթությունը թողնվի ազգային անկախության վրա, ապա կդադարի լինել ազգային, և մենք կկրթենք մեր երեխաներին թուրքական կամ հնդկական գաղափարախոսություններով, որոնց փոխարեն, ի շնորհիվ համալսարանների օրինական բռնակալության, նրանք բախտ ունեն կրթվելու հռոմեացիների ազնվական գարափարախոսություններով: Աշխատանքի՞ ազատություն: Բայց սա միայն մրցակցություն է, որի ազդեցությունը բոլոր արտադրությունները անուշադրության մատնելն է, մարդկանց բնաջնջելը և արհեստավորներին կործանելը: Փոխանակմա՞ն ազատություն: Բայց հայտնի է, որ պրոտեկցիոնիստները կրկին ու կրկին ցույց են տվել, որ մարդը պետք է կործանվի, երբ ազատ փոխանակվում է, և որ հարստանալու համար անհրաժեշտ է փոխանակվել առանց ազատության: Միավորմա՞ն ազատություն: Բայց, համաձայն սոցիալիստական ուսմունքի, ազատությունն ու միավորումը բացառում են միմյանց, քանի որ մարդկանց ազատությունը հարձակման է ենթարկվում ստիպելու համար, որ միավորվեն:

Դուք պետք է տեսնեք, այնուամենայնիվ, որ սոցիալիստ դեմոկրատները չեն կարող գիտակցաբար մարդկանց որևէ ազատություն թույլ տալ, որովհետև իրենց բնույթով ամեն դեպքում հակված են բոլոր տեսակի քայքայումների ու բարոյալքումներին:

Հետևաբար՝ մեզ ամեն դեպքում մտում է միայն կռահել, թե ինչ հիմքի վրա է համընդհանուր ընտրական իրավունքը այսքան հաստատակամությամբ պահանջվում:

Կազմակերպիչների հավակնություններն այլ հարց են առաջ քաշում, որը ես հաճախ հարցրել եմ նրանց և որի պատասխանը, չեմ կարծում, որ երբևէ ստացել եմ: Քանի որ մարդկության բնական հակումները այնքան վատն են, որ ապահով չէ նրանց ազատություն թույլ տալը, ինչպե՞ս է ստացվում, որ կազմակերպիչների հակումները միշտ լավն են: Արդյո՞ք օրենսդիրներն ու իրենց ներկայացուցիչները մարդկային ռասսայի մաս չեն: Արդյո՞ք նրանք կարծում են, թե մարդկության մյուս մասից տարբերվող, այլ նյութերից են բաղկացած: Նրանք ասում են, որ հասարակությունը, երբ ինքն իրեն է թողնվում, սլանում է անխուսափելի կործանման, որովհետև իր բնագոյները սխալ են: Նրանք ձևացնում են, թե դադարեցնում են անկումը և ավելի լավ ուղղություն ցույց տալիս: Հետևաբար՝ նրանք երբևէ ստացել են խելք և արժանիքներ, որոնք իրենց մարդկությունից վեր են դասում: Թող իրենք ցույց տան իրենց կոչումը այս գերազանցությանը: Նրանք կլինեին մեր հովիվները, իսկ մենք՝ իրենց հոտը: Այս պայմանավորվածությունն իրենց մեջ բնական գերազանցություն է ենթադրում, և մենք լիովին արդարացված ենք՝ կոչ անելու նրանց ապացուցել դա:

Դուք պետք է դիտարկեք, որ ես չեմ հակադրվում սոցիալական միավորումներ հորինելու, քարոզելու, խորհուրդ տալու և իրենք իրենց վրա փորձելու իրավունքին՝ իրենց սեփական հաշվին և ռիսկով: Սակայն ես կասկածի տակ եմ դնում օրենքի միջոցով դրանք մեզ պարտադրելու իրենց իրավունքը, այսինքն՝ ուժով և հանրային հարկերով:

Ես չեի պնդի, որ կաբետիստները, ֆուրյերիստները, պրուդոնները, ակադեմիկոսները և պրոտեկցիոնիստները հրաժարվեն իրենց հատուկ գաղափարներից: Ես միայն կպնդեի, որ նրանք հրաժարվեն մի մտքից, որը բնորոշ է նրանց բոլորին: Այն է՝ մեզ ուժով ենթարկելը իրենց սեփական խմբերի և շարքերի սոցիալական սեմինարներին, անվճար բանկերին, հունահռոմեական բարոյականությանը և առևտրային սահմանափակումներին: Ես կխնդրեի նրանց մեզ թույլ տալ իրենց ծրագրերը դատելու ընդունակությունը և չպարտավորեցնեն ընդունել դրանք, եթե մենք գտնում ենք, որ դրանք վնասում են մեր շահերը և հակասում են մեր խղճին:

Իշխանությունից ու հարկումից հովանավորչություն ստանալը ենթադրելը, բացի ճնշելուց ու անարդար լինելուց, նշանակում է հետագա, վնասակար ենթադրություն, որ կազմակերպվածը անսխալական է, իսկ մարդկությունը՝ ոչ կոմպետենտ:

Իսկ եթե մարդկությունը ոչ կոմպետենտ է ինքնուրույն դատելու համար, ինչու՞ են նրանք այդքան շատ խոսում համընդհանուր ընտրական իրավունքից:

Գաղափարների այս հակասությունը, դժբախտաբար, կարելի է գտնել նաև փաստերի մեջ: Քանի դեռ ֆրանսիական ազգը նախորդում էր բոլոր մյուսներին՝ իր իրավունքները կամ, ավելի շուտ, քաղաքական հավակնությունները, գործադրելու հարցում, այն ոչ մի կերպ չի կանխել,

որ ավելի կառավարեն, ուղղորդեն ու պարտադրեն, զավթեն ու խաբեն, քան ցանկացած այլ ազգի: Այն նաև բոլոր մյուսների մեջ միակն է, որտեղ հեղափոխությունները սարսափազդու են, և կատարելապես բնական է, որ այն այսպես էլ պետք է լիներ:

Քանի դեռ պահպանվում է այս գաղափարը, որն ընդունված է մեր բոլոր քաղաքական գործիչների կողմից և այդքան ակտիվ արտահայտված է Լուի Բլանի այս տողերում՝ «Հասարակությունն իր ազդակը ստանում է իշխանությունից», մարդիկ համարում են, որ շնորհիվ են զգացմունքներով, սակայն պասիվ՝ անկարող իրենք իրենց սեփական ինքնագիտակցությամբ և էներգիայով բարձրացնել բարոյականությունը կամ բարեկեցությունը, փոխարենը նրանք ամեն ինչ ակնկալում են օրենքից: Կարճ ասած՝ երբ նրանք ընդունում են, որ իրենց հարաբերությունները պետության հետ նույնն է, ինչ հոտի և հովիվի միջև, պարզ է, որ իշխանության պատասխանատվությունը հսկայական է: Հաջողություն և դժբախտություն, հարստություն եւ աղքատություն, հավասարություն եւ անհավասարություն, բոլորը դրանից են սերում: Այն մեղադրվում է ամեն ինչում, այն հանձն է առնում ամեն ինչ, այն ամեն ինչ անում է: Հետևաբար՝ այն պետք է ամեն ինչի համար պատասխան տա: Եթե մենք երջանիկ ենք, այն իրավունք ունի պահանջել մեր երախտագիտությունը, բայց եթե մենք դժբախտ ենք, այն մենակ պետք է կրի մեղքը: Իրականում արդյո՞ք մեր անձինք և սեփականությունները իր տրամադրության տակ չեն: Արդյո՞ք օրենքը ամենակարող չի: Ստեղծելով համընդհանուր մենաշնորհ՝ այն զբաղվել է պատասխանելով այն ընտանիքների հայրերի ակնկալիքներին, որոնք զրկված են եղել ազատությունից: Եվ եթե այս ակնկալիքները հուսախաբ են արված, ու՞մ մեղքն է դա:

Կարգավորելով ոլորտը՝ այն զբաղվել է դա շենացնելով, հակառակ դեպքում անհեթեթություն կլիներ զրկել այն իր ազատությունից: Եվ եթե այն տուժի, ո՞վ է մեղավոր: Սակագների խաղով առևտրի հաշվեկշիռը հարմարեցնել ձևացնելով՝ այն զբաղվում է դա շենացնելով և, եթե բարգավաճումից հեռու լինի ու կործանվի, ու՞մ մեղքը կլինի: Իրենց ազատության դիմաց ապահովելով ծովային սպառազինությունների պաշտպանությունը՝ այն զբաղվել է դրանք շահութաբեր ներկայացնելով: Եթե դրանք ծանրաբեռնվեն, ու՞մ մեղքն է լինելու:

Հետևաբար՝ ազգի մեջ չի լինում մի դժգոհություն, որի համար կառավարությունն ինքը կամավոր պատասխանատվություն չի կրում: Արդյո՞ք զարմանալի է, որ յուրաքանչյուր ձախողում հեղափոխություն է սպառնում: Եվ ի՞նչ միջոց է առաջարկվում: Օրենքի տիրապետությունն անորոշ ժամանակով երկարացնել, ինչպես, օրինակ, կառավարության պատասխանատվությունը: Բայց եթե կառավարությունը աշխատավարձերը բարձրացնելով և կարգավորելով է զբաղվում և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե այն բոլոր կարիքավորներին օգնելով է զբաղվում և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե այն յուրաքանչյուր աշխատողին օթևան տրամադրելով է զբաղվում և ի վիճակի չէ դա

իրականացնել, եթե այն անհատույց վարկ առաջարկելով է զբաղվում բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն փոխառնելու, և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե բառերում, որոնք ափսոսալի է, որ դուրս են եկել դը Լամարտինի գրչից՝ «Պետությունը համարում է, որ իր առաքելությունն է լուսավորել, զարգացնել, մեծացնել, հզորացնել, հոգեպես սնուցել և օրհնել ժողովրդի հոգին», - եթե այն ձախողվում է սա կատարել, ակնհայտ չէ, որ յուրաքանչյուր հիասթափությունից հետո, որը, ավաղ, ավելի քան հավանական է, կլինի ոչ պակաս անխուսափելի հեղափոխություն:

Ես հիմա կվերսկսեմ թեման՝ նորից նշելով, որ անմիջապես հարցի տևտեսական մասից<sup>4</sup> հետո և քաղաքական մասը սկսելիս մի հիմնական հարց է առաջանում: Հետևյալը.

Ի՞նչ է օրենքը: Ի՞նչ պետք է այն լինի: Ո՞րն է դրա տիրույթը: Որո՞նք են դրա սահմանները: Որտե՞ղ է օրենսդիր իրավասությունը փաստացի կանգ առնում:

Ես չեմ տատանվում պատասխանել՝ օրենքը համընդհանուր ուժ է՝ կազմակերպված անարդարությունը կանխելու համար: Կարճ ասած՝ օրենքը արդարություն է:

Ճիշտ չէ, որ օրենսդիրը բացարձակ իրավունք ունի մեր անձանց և սեփականությունների հանդեպ, քանի որ դրանք նախապես գոյություն են ունեցել, և նրա գործը միայն դրանք վնասվածքներից ապահովելն է:

Ճիշտ չէ, որ օրենքի առաքելությունը մեր գիտակցությունը, մեր գաղափարները, մեր կամքը, մեր կրթությունը, մեր զգացմունքները, մեր աշխատանքները, մեր փոխանակումները, մեր նվերներն ու մեր վայելքները կարգավորելն է: Դրա առաքելությունը կայանում է նրանում, որ թույլ չտա, որ մեկի իրավունքները խանգարեն մյուսին՝ սրանցից ցանկացածի հետ կապված:

Օրենքը, քանի որ այն ուժի մեջ է իրեն անհրաժեշտ պատժամիջոցների համար, որպես օրինական տիրույթ կարող է միայն ունենալ ուժի տիրույթը, որն արդարությունն է:

Եվ ինչպես յուրաքանչյուր անձ իրավունք ունի ուժի դիմել միայն օրինական պաշտպանության ժամանակ, այնպես էլ հավաքական ուժը, որը միայն անհատական ուժերի միավորումն է, չի կարող ռացիոնալ կերպով օգտագործվել ցանկացած այլ բանի համար:

Օրենքը, հետևաբար, բացառապես անհատական իրավունքների կազմակերպումն է, որոնք գոյություն ունեին մինչ օրինական պաշտպանությունը:

Օրենքն արդարություն է:

<sup>4</sup> Քաղաքական տևտեսությունը նախորդում է քաղաքականությանը. առաջինը պետք է բացահայտի, թե արդյոք մարդկային շահերը ներդաշնակ կամ հակասական են - մի փաստ, որը պետք է որոշվեր, մինչև վերջինս կարողանար սահմանել կառավարության արտոնությունները:

Մինչ օրս չկարողանալով ժողովրդի անհատներին ճնշել կամ թալանել նրանց սեփականությունը՝ նույնիսկ բարեգործական նպատակներով, դրա առաքելությունն է պաշտպանել առաջինը և ապահովել վերջիններիս ունեցվածքը:

Պետք չէ նաև ասել, որ այն կարող է բարեգործական լինել, քանի դեռ այն ձեռնպահ է մտնում բոլոր ճնշումներից, քանի որ սա հակասություն է: Օրենքը չի կարող խուսափել մեր անձանց և սեփականությունների վրա գործելուց: Եթե այն չի ապահովում դրանց, ապա խախտում է՝ ազդելով դրանց վրա:

Օրենքն արդարություն է:

Ավելի մաքուր ու պարզ, ավելի լավ սահմանված և սահմանափակված կամ ցանկացած աչքի ավելի տեսանելի բան չի կարող լինել: Քանի որ արդարությունը որոշ քանակ է՝ անփոփոխ ու անսասան, որն ընդունում է ո՛չ աճ, ո՛չ նվազում:

Հեռացե՛ք այս կետից, օրենքը դարձրե՛ք կրոնական, եղբայրական, հավասարագոր, արդյունաբերական, գրական կամ գեղարվեստական և դուք կկորչեք անորոշության ու տարակուսանքի մեջ: Դուք կլինեք մի անձանոթ հողի վրա՝ հարկադրված ուտոպիայում, կամ ավելի վատ՝ ուտոպիաների բազմության մեջ՝ ձգտելով վերցնել օրենքի տիրապետությունը և պարտադրել ձեզ վրա, քանի որ եղբայրություն ու բարեգործությունը չունեն հաստատուն սահմաններ, ինչպես արդարությունը: Որտե՞ղ կանգ կառնես դու: Որտե՞ղ կանգ կառնի օրենքը: Մի մարդ միայն, ինչպես դր Սեն Քրիքը, կընդլայնի իր բարեգործությունը որոշ արտադրական դասերի վրա և կպահանջի, օրենքը սպառողները տնօրինեն հօգուտ արտադրողների: Մեկ ուրիշը, ինչպես Կոնսիդերանը, իր վրա կվերցնի աշխատողների դասի պատճառը և ֆիքսված արժեքով օրենքով կպահանջի հագուստ, բնակարան, սնունդ և կյանքի համար անհրաժեշտ ցանկացած բան: Մի երրորդը, ինչպես Լուի Բլանը, կասի, որ սա կլինեք անավարտ եղբայրություն, և որ օրենքը պետք է իրենց տրամադրի գործիքներ, աշխատանքի եւ ուսուցման միջոցներ: Չորրորդը կդիտարկի, որ նման պայմանավորվածությունը անհավասարության տեղ է թողնում, և որ օրենքը պարտավոր է ամենահեռավոր գյուղականեր հասցնի շքեղությունը, գրականությունը և արվեստը: Սա դեպի կոմունիզմ տանող բարձր ճանապարհն է: Այլ կերպ ասած՝ օրենսդրությունը կլինի այն, ինչ հիմա է՝ ռազմի դաշտ բոլորի երազանքների և բոլորի ազահուլթյան համար:

Օրենքն արդարություն է:

Այս պնդման մեջ մենք ներկայացնում ենք մեզ պարզ, կայուն կառավարություն: Եվ ես ձեռնոց եմ նետում ցանկացած մեկին՝ ինձ ասելու, թե որտեղից կարող է հեղափոխության, ապստամբության կամ հասարակ անհնազանդության միտք առաջանալ հասարակական ուժի դեմ՝ սահմանափակված անարդարության ճնշման տակ: Նման համակարգի

ներքո ավելի շատ բարեկեցություն կլիներ, իսկ այդ բարեկեցությունն ավելի հավասար բաշխված կլիներ: Իսկ ինչ վերաբերում է մարդկությունից անբաժան տառապանքներին՝ ոչ ոք չէր մտածի կառավարությանը մեղադրել դրանց համար, քանի որ դա կլիներ նույնքան միամիտ, որքան շերմաստիճանի տատանումները: Արդյո՞ք մարդիկ երբևէ հայտնի են եղել դատարանի դեմ պայքարներով կամ խաղաղարար դատավորների վրա հարձակումներով՝ հանուն աշխատավարձի չափի, անհատույց վարկի, աշխատանքային գործիքների, հարկացուցակների կամ սոցիալական սեմինարի առավելությունների պահանջի: Նրանք շատ լավ գիտեն, որ այս համադրությունները խաղաղության արդարադատության իրավասությունից հեռու են, և նրանք շուտով կհասկանան, որ իրենք օրենքի իրավասության շրջանակներում չեն:

Բայց եթե օրենքը ստեղծվեր եղբայրության սկզբունքի հիման վրա, եթե հռչակվեր, որ դրանից են բխում բոլոր օգուտները և բոլոր չարիքները, որ այն պատասխանատու է յուրաքանչյուր անհատական բողոքի և ցանկացած սոցիալական անհավասարության համար, ապա դուք ճանապարհ եք բացում դժգոհությունների, զայրույթների, անհանգստությունների և հեղափոխությունների անվերջ հաջորդականության:

Օրենքն արդարություն է:

Եվ շատ տարօրինակ կլիներ, եթե այն պատշաճ ձևով այլ բան լիներ: Արդյո՞ք արդարությունը ճիշտ չէ: Արդյո՞ք իրավունքները հավասար չեն: Իրավունքի ինչպիսի՞ դրսևորմամբ կարող է օրենքը միջամտել, որպեսզի ինձ ենթարկի ՄՄ սոցիալական ծրագրերին: Միմերել, դը Մելուն, Թիերս կամ Լուի Բլան, ոչ թե ենթարկել այս պարոններին իմ ծրագրերի՞ն: Կարելի՞ է ենթադրել, որ բնությունը ինձ չի շնորհել բավականաչափ երևակայությամբ, որպեսզի ես նույնպես Ուտոպիա ստեղծեմ: Արդյո՞ք օրենքը պետք է ընտրությունը կատարի այդքան շատ մտահաղացումների միջև և ծառայության ժամանակ օգտվի հասարակական ուժից:

Օրենքն արդարություն է:

Եվ թող, որ չասվի, ինչպես և շարունակվում է, որ օրենքը այս իմաստով կլիներ արեփստական, անհատական և անսիրտ, և որ այն կստիպեր մարդկությանը կրել իր սեփական իմիջը: Սա անհեթեթ եզրակացություն է՝ բավականաչափ արժանի կառավարական հրապուրանքին, որը մարդկությունն օրենքի մեջ է տեսնում:

Հետո ի՞նչ: Արդյո՞ք նշանակում է, որ եթե մենք ազատ ենք, ապա պետք է դադարենք գործել: Արդյո՞ք հետևում է, որ եթե մենք օրենքից ազդակ չենք ստանում, ապա մենք ոչ մի ազդակ չենք ստանա: Արդյո՞ք հետևում է, որ եթե օրենքը սահմանափակվում է մեզ ապահովելով մեր ընդունակությունների ազատ իրականացմամբ, ապա մեր ընդունակությունները կաթվածահար են լինելու: Արդյո՞ք հետևում է, որ եթե օրենքը մեզ չի պարտադրում կրոնի ձևեր, միավորումների

եղանակներ, ուսուցման մեթոդներ, աշխատանքի կանոններ, փոխանակման ուղղություններ և բարեգործության ծրագրեր, ապա մենք պետք է անհամբերությամբ ներքաշվենք արեիզմի, մեկուսացման, անտեղյակության, թշվառության և եսասիրության մեջ: Արդյո՞ք հետևում է, որ մենք այլևս չպետք է ճանաչենք Աստծո զորությունն ու մեծահոգությունը, որ մենք պետք է դադարենք միավորվել, օգնել միմյանց, սիրել և օգնել մեր դժբախտ եղբայրներին, սովորել բնության գաղտնիքները և ձգտել կատարելության մեր գոյության ընթացքում:

Օրենքն արդարություն է:

Եվ արդարադատության օրենքի, իրավունքի տիրապետության, ազատության, անվտանգության, կայունության և պատասխանատվության ազդեցության ներքո է, որ յուրաքանչյուր մարդ կհասնի իրեն արժանի չափի, իր գոյության ամբողջ արժանապատավությանը, և որ մարդկությունը կկատարի իր համար սահմանված առաջընթացը՝ կարգով և հանգստությամբ, ճիշտ է՝ դանդաղ, բայց վստահ:

Ես կարծում եմ իմ տեսությունը ճիշտ է, քանի որ որևէ լինի հարցը, որի շուրջ ես քննարկում եմ ծավալում կրոնական, փիլիսոփայական, քաղաքական կամ տնտեսական, ազդի բարեկեցության, բարոյականության, հավասարության, իրավունքի, բնակչության, վարկի կամ կառավարության վրա, գիտական հորիզոնի որ կետից էլ ես սկսեմ, ես անընդհատ հանգում եմ նույն բանին. սոցիալական խնդրի լուծումն ազատության մեջ է:

Եվ արդյո՞ք ես փորձ չունեմ իմ կողմում: Աչքի անցկացրե՛ք ամբողջ աշխարհը: Որո՞նք են ամենաերջանիկ, ամենաբարոյական և ամենախաղաղասեր ազգերը: Նրանք, որտեղ օրենքն ամենաքիչն է միջամտում մասնավոր գործունեությանը, որտեղ կառավարությունն ամենաքիչն է զգացվում, որտեղ անհատականությունն ամենամեծ գործունեության շրջանակն ունի, իսկ հանրային կարծիքը՝ ամենամեծ ազդեցությունը, որտեղ վարչակազմի մեքենան ամենաքիչ կարևորն է և նվազագույն բարդը, որտեղ հարկումներն ամենաթեթևն են և նվազագույն անհավասարաչափը, հանրային դժգոհությունը նվազագույն պատրաստակամություն ունի և ամենաքիչն է ենթակա արդարացման, որտեղ անհատների և դասակարգերի պատասխանատվությունը ամենաակտիվն է և որտեղ, հետևաբար, եթե բարոյականությունը կատարյալ վիճակում չէ, ապա նրանք ամեն գնով անընդհատ հակված են ուղղել իրենց, որտեղ գործարքները, հանդիպումները և ասոցիացիաները ամենաքիչ կաշկանդվածն են, որտեղ աշխատանքը, կապիտալը և արտադրությունը ամենաքիչն են տուժում արհեստական տեղահանություններից, որտեղ մարդկությունը ամբողջովին հետևում է իր բնական ընթացքին, որտեղ Աստծո միտքը գերակայում է մարդկանց հայտնագործություններին: Կարճ ասած՝ նրանք, ովքեր այս գաղափարն ամենալավն են հասկանում - իրավունքի սահմաններում բոլորը պետք է սերեն մարդու ազատ, կատարյալ և գիտակցված գործողությունից,

օրենքով կամ ուժով ոչ մի փորձ չպիտի արվի՝ բացառությամբ համընդհանուր արդարադատության իրականացումից:

Ես չեի կարող խուսափել այն եզրակացությանը հանգելուց, որ աշխարհում շատ մեծ մարդիկ կան, շատ օենսդիրներ, կազմակերպիչներ, հասարակության հրահանգիչներ, մարդկանց խմբավարներ, ազգերի հայրեր, և այլն, և այլն: Շատ մարդիկ են իրենց մարդկությունից վեր դասում կառավարելու և հովանավորելու համար, շատ մարդիկ են գործարկներ կնքում դրան մասնակցելով: Պատասխանը կլինի՝ «Դուք ինքներդ զբաղված եք սրանով այս ամբողջ ընթացքում»: Շատ ճիշտ է: Բայց պետք է ընդունել, որ դա իմ ասածից բոլորովին այլ իմաստով է, և եթե ես միանամ բարերարներին, ապա միայն նրանց հափշտակումները մեղմացնելու համար:

Ես չեմ անում այնպես, ինչպես Վոկոստն իր ավտոմատով, այլ այնպես, ինչպես ֆիզիոլոգն է անում մարդկային կմախքի կառուցվածքով: Ես կոլտումնասիրեի և կհիանայի դրանով:

Ես դա անում եմ այն ոգով, որը վերածնել է հայտնի ճանապարհորդ: Նա հայտնվել է մի վայրի ցեղի մեջ: Հենց նոր երեխա է ծնվել, և գուշակների, կախարդների ու հեքիմների բազմություն է հավաքվել նրա կողքը՝ զինված օղակներով, կեռիկներով ու պարաններով: Մեկն ասաց. «Այս երեխան երբեք չի առնի խաղաղության չիբուխի հոտը, եթե ես չձգեմ իր քթածակերը»: Մյուսն ասաց. «Նա չի ունենա լսողության զգայարան, եթե ես իր ականջները չքաշեմ իր ուսերին»: Երրորդն ասաց. «Նա երբեք արևի լույսը չի տեսնի, եթե ես իր աչքերին շեղություն չտամ»: Չորրորդն ասաց. «Նա երբեք չի լինի ուղղածիզ, եթե ես չոլորեմ իր ոտքերը»: Հինգերորդն ասաց. «Նա ի վիճակի չի լինի մտածել, եթե ես չսեղմեմ իր ուղեղը»: «Վերջ տվե՛ք», - ասաց ճանապարհորդը, - «Աստված ինչ անում է, լավ է արվում: Մի՛ ձևացրեք, թե նրանից առավել գիտեք: Եվ ինչպես նա օրգաններ է տվել այս թույլ էակին, թողե՛ք, որ այդ օրգաններն ինքնուրույն զարգանան, ուժեղանան վարժություններով, օգտագործմամբ, փորձով և ազատությամբ»:

Աստված մարդկության մեջ արմատացրել է նաև ամենը, ինչ անհրաժեշտ է այն իրենց ճակատագրերը իրականացնելու համար: Կա նախասահմանված սոցիալական ֆիզիոլոգիա, ինչպես նաև նախասահմանված մարդկային ֆիզիոլոգիա: Սոցիալական մարմինները ձևավորվում են այնպես, որ հնարավորություն ունենան ներդաշնակորեն զարգանալ մեծ ազատության մեջ: Այսինքն՝ հեռու հեքիմների և կազմակերպիչներ հետ: Հեռու իրենց օղակներով, շղթաներով, կեռիկներով ու կախիչներով: Հեռու իրենց արհեստական մեթոդներով: Հեռու իրենց սոցիալական սեմինարներով, կառավարական քմահաճույքներով, իրենց համակենտրոնացմամբ, հարկացուցակներով, համալսարաններով, պետական կրոններով, իրենց անհատույց կամ մենաշնորհող բանկերով, իրենց սահմաններով, սահմանափակումներով, բարոյականացումներով և հարկերի միջոցով հավասարեցումով: Եվ հիմա ապարդյուն կերպով այդքան շատ համակարգեր ենթարկելով



սոցիալական մարմինն՝ թող նրանք վերջ դնեն, որտեղ պետք է սկսեին, մերժե՛ք բոլոր համակարգերը և ազատություն կիրառե՛ք. ազատություն, որը Աստծո և իր գործերի հանդեպ հավատքի գործածում է:

Նույնը պարսիկների մոտ է .

«Արքայազնի ամենաառաջին մտածումներից մեկը գյուղատնտեսության խրախուսումն էր . . . Ինչպես պաշտոններ են ստեղծվել բանակները կարգավորելու համար, այնպես էլ գրասենյակներ են ստեղծվել գյուղական աշխատանքների գերշահագործման համար . . . Հարգանքը, որով պարսիկները ոգևորված էին թագավորական իշխանությամբ, չափազանց մեծ էր:»

Հույները, թեև ամբողջովին գիտակից, պակաս անձանոթ չէին իրենց պարտականություններին – այն աստիճան, որ իրենք ինքնուրույն ոչսկի չէին դիմի անգամ ամենապարզ խաղերի ժամանակ, ինչպես ծին և շունը: Դասական իմաստով անվիճելի բան է, որ ամեն ինչ դրսից է գալիս մարդկանց:

«Հույները, ի ծնե հարուստ ոգով և խիզախությամբ, սկզբում զարգացում են ապրել եգիպտոսից եկած թագավորների և գաղութների կողմից: Նրանցից իրենք սովորել են մարմնի վարժություններ, ոտքի մրցավազքեր, ձիերի և մարտակառքերի մրցավազքեր: Լավագույն բանը, որ եգիպտացիները սովորեցրին նրանց հնազանդ դառնալն է և թույլ տալը, որ իրենք կազմակերպվեն օրենքով՝ հանուն հանրային բարիքի:»

Ֆենելոն – Կրթվելով հին ժամանակների ուսումնասիրմամբ ու հիացմունքով և լինելով Լուի 14-րդի իշխանության վկան՝ Ֆենելոնը, բնականաբար, ընդունել է այն միտքը, որ մարդկությունը պետք է պասիվ լինի, և որ իր դժբախտություններն ու բարգավաճումները, իր արժանիքները և արատները հետևանք են արտաքին ազդեցությունների՝ կյանքի կոչված օրենքի կամ օրենսդիրների միջոցով: Այսպիսով՝ իր Սալեմտումի Ուտոպիայի մեջ նա մարդկանց առաջ է քաշում իրենց հետաքրքրություններով, իրենց ընդունակություններով, ցանկություններով և ունեցվածքով՝ օրենսդիրի բացարձակ ուղղորդմամբ: Անկախ նրանից, թե ինչ թեմա կարող է լինել, նրանք դրանում իրենց ձայնը չունեն – արքայազնն է իրենց տեղը հարցը լուծում: Ազգը պարզապես անձև զանգված է, որի հոգին արքայազնն է: Նրա մեջ է ապրում միտքը, հեռատեսությունը, բոլոր կազմակերպությունների և առաջընթացների սկզբունքը: Հետևաբար՝ ամբողջ պատասխանատվությունը նրա վրա է ընկնում:

Որպես այս հայտարարության ապացույց՝ ես կարող եմ արտագրել Տելեմախի ամբողջ 10-րդ գիրքը: Ես ընթերցողին դրա հղումն եմ տալիս և ինքս ինձ կգոհացնեմ մեջբերելով այս նշանավոր աշխատանքից պատահական վերցված որոշ հատվածներ, որի հանդեպ ցանկացած առումով ես առաջինն եմ արդարություն դրսևորելու համար:

Դասականներին բնորոշ զարմանալի ոյուրահավատությամբ Ֆենելոնը, ի հակառակ փաստերի և փաստարկների հեղինակության, ընդունում է եգիպտացիների ընդհանուր երջանկությունը և վերագրում է դա ոչ թե սեփական իմաստությանը, այլ իրենց թագավորների:

«Մենք չկարողացանք աչքի տակ պահել երկու ափերը՝ առանց ընկալելու համապատասխան տեղակայված հարուստ քաղաքները և տեղական վայրերը, դաշտերը, որոնք ամեն տարի անդադար ծածկված էին ոսկե մշակաբույսերով, երամներով հարուստ մարգագետինները, աշխատողները, որոնք ծովել են մրգերի ծանրությունից, որը երկիրը շռայլել է իր հողագործներին, և հովիվները, ովքեր արծագանքում էին՝ կրկնելով սրինգի և ֆլեյտայի փափուկ հնչյունները: «Երջանկությունը այն է,- ասաց Ուսուցիչը,- որ մարդիկ ղեկավարվում են իմաստուն թագավորի կողմից»: Ուսուցիչն այնուհետև ցանկացավ, որ ես նկատեմ երջանկությունն ու առատությունը, որը տարածված էր ամբողջ Եգիպտոսով մեկ, որտեղ 22 հազար քաղաք կարելի էր հաշվել: Նա հիանում էր քաղաքների գերազանց ոստիկանական կարգավորումներով, արդարադատությամբ, որն իրականացվում է հոգուտ աղքատների և ոչ հարուստների, երեխաների լավ կրթությունը, որոնք սովոր էին հնազանդության, աշխատանքի, արվեստի և տառերի հանդեպ տածած սիրո, ճշգրտությունը, որով կրոնական բոլոր արարողությունները կատարվում էին, անշահախնդրությունը, պատվի ցանկությունը, մարդկանց հավատարմությունը և աստվածների հանդեպ վախը, որոնցով յուրաքանչյուր հայր ոգևորում էր իր զավակներին: Նա չէր կարողանում բավարար չափով հիանալ երկրի բարգավաճ վիճակով: «Երջանկությունն այն է,- նա ասել է,- որ մարդկանց նման ձևով է ղեկավարում իմաստուն թագավորը»:

Ֆենելոնի հովվերգությունը Կրետեում առավել քան հետաքրքրաշարժ է: Ուսուցիչն ասում է .

«Ամբողջը, որ կարելի է տեսնել այս հիասքանչ կղզում, Միևսոսի օրենքների արդյունքն են: Կրթությունը, որ երեխաները ստանում են, մարմինը առողջ և ամուր է պահում: Նրանք առաջին հերթին սովոր են համեստ և դժվար կյանքին: Ենթադրվում է, որ զգացմունքային բոլոր հաճույքները ջլատում են մարմինը և միտքը: Նրանց բացի մեծ փառք ձեռք բերելու համար արժանիքներով անհաղթ լինելուց ոչ մի այլ հաճույք չի ներկայացվում: Այնտեղ պատժում են երեք չարիքներ, որոնք անպատիժ են մնացել այլ ազգերի մեջ՝ ապերախտություն, կեղծիք, ազահություն: Ինչ վերաբերում է շքեղությանը և շռայլությանը՝ կարիք չկա սրանք պատժելու, քանի որ սրանց մասին Կրետեում ոչ ոք չգիտի: Չի թույլատրվում ոչ մի թանկարժեք կահույք, վեհաշուք հագուստ, համեղ տոներ կամ ոսկեգույն պալատներ:»

Այսպիսով, Ուսուցիչը նախապատրաստում է իր գիտնականին, որպեսզի նա կարողանա ձևավորել և մանիպուլացնել Իթաքայի ժողովրդին, անշուշտ, ամենաբարեգործական մտադրություններով, և նրան այդ գաղափարներում հաստատելու համար նա բերում է Սալենտոմի օրինակը:

Այսպիսով, մենք ստանում ենք մեր առաջին քաղաքական պատկերացումները: Մենք սովորում ենք մարդկանց հետ վարվել այնպես,



թեպետ, առաջինի մտադրությունը խաղաղություն էր, իսկ վերջինինը՝ պատերազմ, նրանք նման են միմյանց այն եզակի ճանապարհով, որոնցով նրանք առաջնորդել են իրենց ժողովրդին, ազատ մարդկանց վրա իրենց ազդեցությամբ, նախապաշարմունքներով, որ իրենք հաղթահարել են, կրքերով, որ ճնշել են:

Պարագվայը մեկ այլ օրինակ է ապահովում: Հասարակությունը մեղադրվել է իշխելու հաճույքին որպես կյանքի միակ բարիք վերաբերվելու հանցանքի մեջ: Բայց միշտ վսեմ արարք կլինի ղեկավարել մարդկանց՝ իրենց երջանիկ դարձնելով:

Նրանք, ովքեր ցանկանում են ձևավորել նման հաստատություններ, կհիմնադրեն սեփականության համայնք, ինչպես Պլատոնի հանրապետությունում, Նույն հարգանքով, որը նա պատվիրել էր աստվածներին, օտարներից անջատումով՝ որպես բարոյականության պահպանում, ու ստիպել քաղաքին առևտրով զբաղվել և ոչ քաղաքացուն: Նրանք պետք է մեր արվեստը մատուցեն առանց մեր շքեղության, մեր ցանկությունները՝ առանց մեր պահանջների:»

Վուլգար մոլությունը կարող է բացականչել, եթե այն հավանի.  
«Մոնտեսքյուն է: Փառահեղ, շքեղ»: Ես չեմ վախենում իմ կարծիքն արտահայտել և ասել. «Ինչ: Դուք դա հիանալի անվանելու երես ունե՞ք: Դա սարսափելի է: Նողկալի է: Եվ այս քաղվածքները, որոնք ես կարող եմ բազմապատկել, ցույց են տալիս, որ, ըստ Մոնտեսքյունի, անձինք, ազատությունները, սեփականությունն ու մարդկությունն ինքնին ոչինչ են՝ բացի օրենսդիրի շահարկումների համար Նյուլթեր լինելուց:»

Ռուստ: Թեև այս քաղաքական գործիչը՝ դեմոկրատների գերագույն իշխանությունը, ստիպում է, որ սոցիալական կառուցվածքը ապավինի ընդհանուր կամքին, ոչ ոք այդքան ամբողջովին չի ընդունել մարդու բնույթի ողջ պասիվության վարկածը օրենսդիրի ներկայությամբ.

«Եթե ճշմարիտ է, որ մեծ իշխանը հազվագյուտ բան է, ապա ինչքա՞ն ավելի շատ հազվադեպ պետք է լինի մեծ օրենսդիրը: Առաջինը միայն հետևում է վերջինիս կողմից առաջարկված կաղապարին: Այս վերջինը մեխանիկն է, ով հնարում է մեքենան, իսկ առաջինը աշխատողն է, ով այն գործի է դնում:»

Եվ ի՞նչ դեր պետք է մարդիկ խաղան այս ամենի մեջ: Մեքենայի, որը գործարկվում է, կամ, ավելի շուտ, արդյո՞ք նրանք այն կոպիտ Նյուլթեր չեն, որից մեքենան պատրաստված է: Այսինքն՝ օրենսդիրի և արքայազնի միջև, արքայազնի և իր հպատակների միջև Նույն հարաբերություններն են, ինչ գյուղատնտեսական գրողի և գյուղատնտեսի միջև, գյուղատնտեսի և հողի միջև: Ապա ի՞նչ բարձրության վրա է քաղաքական գործիչը, ով ղեկավարում է օրենսդիրներին և նրանց սովորեցնում իրենց առևտուրն այնպիսի հրամայական պայմաններում, ինչպես հետևյալը.

«Հետևողականություն կցուցաբերե՞ք պետության հանդեպ: Համախմբե՞ք որքան հնարավոր է շատ ծայրահեղություններ: Ո՛չ հարուստները տառապեն, ո՛չ աղքատները»: Եթե հողը աղքատ ու անբերրի է, կամ երկիրը շատ սահմանափակ է բնակիչների համար, դիմե՛ք արդյունաբերությանը և արվեստին, որոնց արտադրանքները կփոխանակեք պահանջված մթերքներով: Լավ հողի դեպքում, եթե բնակիչների պակաս կա, Ձեր ամբողջ ուշադրությունը սևեռե՛ք գյուղատնտեսության վրա, որը բազմապատկում է մարդկանց, և արգելե՛ք արվեստը, որը միայն ծառայում է երկիրն ամայացնելուն: Ուշադրություն դարձրե՛ք ընդարձակ և հարմարավետ գոտիներին: Ծածկե՛ք ծովը նավերով և Դուք կապահովեք փայլուն ու կարճ գոյություն: Եթե Ձեր ծովերը ողողում են միայն անմատչելի ժայռերը, թող մարդիկ դաժան լինեն և ձուկ ուտեն: Նրանք կապրեն ավելի խաղաղ, հավանաբար, ավելի լավ և, անշուշտ, ավելի երջանիկ: Կարճ ասած՝ բացի այն ամենից, որոնք ընդհանուր են բոլորի համար, յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն յուրահատուկ հանգամանքներ, որոնք պահանջում են ինքնին յուրահատուկ օրենսդրություն:

«Այսպիսով՝ սկզբում եբրայեցիները, իսկ վերջերս արաբները, կրոն ունեին իրենց հիմնական նպատակի համար. արեցիներինը գրականությունն էր, Կարթագենիներն ու Տիրինը՝ առևտուրը, Հռոդոսիները՝ ռազմածովային գործերը, Սպարտայիները՝ պատերազմը, և Հռոմիները՝ առաքինությունը: «Օրենքների ոգու» հեղինակը ցույց է տվել արվեստը, որով օրենսդիրը պետք է սահմանի իր հաստատությունները այս նպատակներից յուրաքանչյուրի նկատմամբ: Բայց եթե օրենսդիրը սխալվում է իր նպատակներում, պետք է ընդունի մի սկզբունք, որը տարբերվում է նրանից, որ բխում է իրերի բնույթից: Արդյո՞ք մեկը պետք է ձգտի ստրկության, իսկ մյուսը անկախության, արդյո՞ք մեկը՝ հարստության, իսկ մյուսը՝ բնակչության, մեկը՝ խաղաղության, իսկ մյուսը՝ նվաճումների: Օրենքներն անխուսափելիորեն կթուլանան, սահմանադրությունը կխաթարվի, և պետությունը կենթարկվի անընդհատ խռովությունների մինչև ոչնչացվի կամ փոփոխվի, և անպարտելի բնությունը վերադարձնի իր կայսրությունը:»

Բայց եթե բնությունը բավականաչափ անպարտելի է՝ վերականգնելու համար իր կայսրությունը, ինչու՞ Ռուստոն չի ընդունում, որ այն օրենսդիրի կարիք չունի՝ ի սկզբանե իր կայսրությունը ձեռք բերելու համար: Ինչու՞ նա թույլ չի տալիս, որ, իրենց սեփական ազդակներին հնազանդվելով, մարդիկ գյուղատնտեսությամբ ինքնուրույն զբաղվեն բերրի շրջաններում, և առևտրով՝ ընդարձակ ու հարմարավետ ափերին՝ առանց Լիկուրգուսի, Սոլոնի կամ Ռուստոյի միջամտության, ովքեր իրենց վրա կվերցնեին՝ նրանց խաբելու վտանգը:

Ինչ էլ, որ լինի, մենք տեսնում ենք, թե ինչպիսի սարսափելի պատասխանատվությամբ է Ռուստոն լիազորում գյուտարարներին, գործարարներին, ղեկավարներին և հասարակություններին

մանիպուլյատորներին: Ուստի, նա շատ խստապահանջ է նրանց նկատմամբ:

«Նա, ով համարձակվում է հանձն առնել ժողովրդի հաստատությունները, պետք է զգա, որ կարող է, ինչպես ասում են, փոխակարպել յուրաքանչյուր անհատի, ով իրենից ներկայացնում է կատարյալ և միայնակ ամբողջություն՝ կյանք ստանալով և լինելով ավելի մեծ ամբողջությունից, որի մաս է ինքը կազմում: Նա պետք է զգա, որ կարող է փոխել մարդու սահմանադրությունը՝ այն ամրացնելու համար, և փոխարինել մասնակի և բարոյական գոյությունը ֆիզիկական և անկախ գոյությամբ, որը մենք բոլորս ստացել ենք բնությունից: Կարճ ասած՝ նա պետք է զրկի մարդուն իր սեփական լիազորություններից, որպեսզի նրան տա իրեն անձանոթ ուրիշ լիազորություններ:»

Խեղճ մարդկային բնույթ: Ի՞նչ կլիներ նրա կոչումը, եթե այն վստահվեր Ռուսոյի հետևորդերին:

Ռայնալ: «Կլիման, այսինքն՝ օդն ու հողը, օրենսդիրի համար առաջին տարերքն է: Նրա ռեսուրսները նշանակում են իրեն իր պարտականությունները: Նախ՝ նա պետք է խորհրդակցի իր տեղական պաշտոնի մասին: Ծովափնյա վայրերում ապրող բնակչությունը պետք է նավարկության համար օրենքներ ունենա: Եթե գաղութը գտնվում է ներքին շրջանում, օրենսդիրը պետք է ապահովի հողի բնույթը և դրա պտղաբերության աստիճանը»: Ավելի կոնկրետ՝ օրենսդրության իմաստությունը հայտնվում է սեփականության բաշխման ժամանակ: Որպես ընդհանուր կանոն՝ յուրաքանչյուր երկրում, երբ ստեղծվում է նոր գաղութ, յուրաքանչյուր մարդու պետք է տրվի հող, որը բավարար է իր ընտանիքի աջակցության համար:

«Ամմարդաբնակ կղզում, որը դուք բնակեցնում եք երեխաներով, անհրաժեշտ է միայն թույլ տալ, որ ճշմարտության ծիլերը ընդլայնեն մտքի զարգացումը: Բայց երբ դուք նոր երկրում ծեր մարդկանց եք բնակեցնում, հմտությունը կայանում է միայն նրանում, որ թույլ տրվի այն վնասակար կարծիքները և սովորույթները, որոնք հնարավոր չէ բուժել և ուղղել: Եթե ցանկանում եք կանխել նրանց հավերժացումը, դուք կազդեք աճող սերնդի վրա՝ երեխաների ընդհանուր և հանրային կրթությամբ: Արքայազնը, օրենսդիրը պարտավոր են երբեք գաղութ չհիմնել առանց նախապես այնտեղ խելացի մարդկանց ուղարկելու, որպեսզի սովորեցնեն երիտասարդներին: Նոր գաղութում ցանկացած հարմարություն բաց է օրենսդիրի նախազգուշացումների համար, ով ցանկանում է մաքրել ժողովրդի բնույթն ու վերաբերմունքը: Եթե նա ունի հանճար և առաքինություն, իր ենթակայության տակ գտնվող հողերը և մարդիկ կոգեշնչեն իր ոգին հասարակության ծրագրով, որին գրողը կարող է միայն անորոշ կերպով հետևել և այնպես, որ ենթակա լինի բոլոր վարկածների անկայունությանը, որոնք դժվար է կանխատեսել և համատեղել՝ բազմազան և բարդ հանգամանքների անսահմանության պատճառով»:

Կարելի է կարծել, որ գյուղատնտեսության պրոֆեսոր էր, ով ասում էր իր աշակերտներին. «Կլիման միակ կանոնն է գյուղատնտեսի համար: Նրա ռեսուրսները թելադրում են իր պարտականությունները: Առաջին բանը, որ նա պետք է հաշվի առնի, իր տեղական պաշտոնն է: Եթե նա կավե հողի վրա է, նա պետք է այսպես կամ այնպես անի: Եթե նա ստիպված է կռվել ավազի հետ, սա է այն ճանապարհը, որով նա պետք է գործի անցնի: Յուրաքանչյուր հարմարություն բաց է գյուղատնտեսի համար, ով ցանկանում է մաքրել և բարձրացնել հողի որակը: Եթե նա միայն հմտություն ունի, իր տրամադրության տակ գտնվող գոմաղբը իրեն գործողությունների ծրագիր կառաջարկի, որին միայն պրոֆեսորը կարող է անորոշ կերպով հետևել և այնպես, որ ենթակա լինի բոլոր վարկածների անկայունությանը, որոնք բազմազան են և բարդ՝ դժվար կանխատեսելի և համատեղելի հանգամանքների անսահմանության պատճառով»:

Բայց, օ՛հ: Հոյակապ գրողներ... Երբեմն ոգեշնչված հիշում են, որ այս կավը, այս ավազը, այս գոմաղբը, որոնք դուք տնօրինում եք այնքան անզուսպ կերպով, մարդիկ են, ձեզ հավասարները, ձեզ նման խելացի և ազատ էակներ, ովքեր, ինչպես դուք, Աստծուց ստացել են տեսնելու, կանխատեսելու, մտածելու և ինքնուրույն դատելու կարողություն:

Մաբլի (նա ենթադրում է, որ օրենքները ժամանակի ընթացքում և երաշխիքների բացակայության պատճառով հնանում են, և այդպիսով շարունակում է).

«Այս պայմաններում մենք պետք է համոզված լինենք, որ կառավարության վայրիվերումները թուլացել են: Տվե՛ք նրանց նոր լարվածություն (ընթերցողին է հասցեագրված), և չարը կբուժվի: Քիչ մտածե՛ք սխալները պատժելու մասին՝ փոխանակ խրախուսեք ձեր ուզած արժանիքները: Այս մեթոդով դուք կստանաք ձեր հանրապետության երիտասարդության ուժը: Սրա մասին անտեղյակ լինելու պատճառով ազատ ժողովուրդ գրկվել է անկախությունից: Բայց եթե չարիքը հնարել է այնքան շատ ձևեր, որ սովորական դատավորները անկարող են այն արդյունավետ կերպով լուծել, դիմե՛ք արտակարգ դատավորների, որոնց ժամանակը կարճ է, իսկ ուժը՝ զգալի: Քաղաքացիների երևակայությունը տպավորված լինել է պահանջում»:

Այս ոճով նա անցնում է քսան հատորով:

Կար ժամանակ, երբ նման կերպով ուսուցանելու ազդեցության տակ, որը դասական կրթության հիմքն է, յուրաքանչյուր ոք իրեն կարգում էր մարդկությունից առաջ և վեր՝ հանուն դա իր ձևով կարգավորելու, կազմակերպելու և սահմանելու:

Կոնդիլակ.

«Ձեզ վրա վերցրե՛ք, տե՛ր իմ, Լիկուրգուսի և Սոլոնի բնույթը: Մինչև դուք ավարտեք այս էսսեյը կարդալը, զվարճացրե՛ք ինքներդ ձեզ՝ Ամերիկայում կամ Աֆրիկայում որոշ վայրի ժողովուրդների օրենքներ նշանակելով: Տեղավորե՛ք թափառականներին բնակարաններում, սովորեցրե՛ք նրանց



ապրել հոտերով: Ձգտե՛ք զարգացնել սոցիալական որակները, որոնց բնույթը արմատացել է նրանց մեջ: Ստիպե՛ք նրանց կիրառել մարդկության պարտականությունները: Այնպես արե՛ք, որ հաճույքների կրքերը նողկալի դառնան պատժամիջոցների շնորհիվ, և կտեսնեք, որ այս բարբարոսները ձեր օրենսդրության բոլոր ծրագրերով կորցնում են արատները և ձեռք բերում արժանիքներ:

Բոլոր այս ժողովուրդները ունեցել են օրենքներ: Բայց նրանցից քչերն են երջանիկ եղել: Ինչու՞: Որովհետև օրենսդիրները գրեթե միշտ անտարբեր են եղել հասարակության նպատակի նկատմամբ, որը ընդհանուր հետաքրքրությամբ ընտանիքներ միավորելն է:

Օրենքի անաչառությունը բաղկացած է երկու բանից՝ հարստությունների և քաղաքացիների արժանապատվության հավասարեցում մտցնելուց: Օրենքներով սահմանված հավասարության աստիճանին համահունչ՝ նրանք ավելի թանկ կռադնան յուրաքանչյուր քաղաքացու համար: Ինչպե՞ս կարող են ազահությունը, փառասիրությունը, ցնցումները, անգործությունը, ծուլությունը, նախանձը, ատելությունը, խանդը գրգռել մարդկանց, ովքեր հավասար են հարստությամբ և կոչումով, և նրանց, ում օրենքն իրենց հավասարությունը շեղելու ոչ մի հույս չի տալիս:

Այն, ինչ ձեզ պատմվել է Սպարտայի հանրապետության մասին, պետք է ձեզ լուսավորի այս հարցի կապակցությամբ: Ոչ մի ուրիշ պետություն չի ունեցել օրենքներ՝ համապատասխան հավասարության կամ բնության բնույթին»:

Չարմանալ պետք չէ, որ 17-րդ և 18-րդ դարերը պետք է մարդկային ռասսան դիտարկեին որպես իներտ նյութ՝ պատրաստ ստանալու ամեն ինչ՝ ձև, պատկեր, ազդակ, շարժ և կյանք մեծ արքայազնից կամ մեծ օրենսդիրից կամ մեծ հանճարից: Այս դարաշրջաններին մեծ տեղ է տրվել հին ժամանակների ուսումնասիրությունների մեջ: Իսկ հին ժամանակները ամենուր՝ Եգիպտոսում, Պարասկաստանում, Հունաստանում և Հռոմում, ներկայացնում են մի քանի մարդուց բաղկացած տեսաան, որոնք ձևավորում են մարդկությունը՝ ըստ իրենց երևակայության, և մարդկությունը այս նպատակով հպատակվում է ուժով կամ խարդախությամբ: Եվ ի՞նչ է սա ապացուցում: Քանի որ մարդիկ ու հասարակությունը կատարելագործելի են, սխալը, անտեղյակությունը, բռնակալությունը, ստրկությունը և սևահավատությունը պետք է ավելի գերակշռեն վաղ ժամանակներում: Վերոհիշյալ գրողների սխալը այն չէ, որ նրանք հաստատել են այս փաստը, այլ այն, որ նրանք առաջարկել են դա, որպես կանոն, ապագա սերունդների հիացմունքի և ընդօրինակման համար: Չանազանման անհասկանալի բացատրությամբ և պայմանականության երեխայության հավատով՝ նրանց սխալն այն էր, որ ընդունել են այն, ինչ անընդունելի է, այլ կերպ ասած՝ երեխայական պայմանականության հին աշխարհի արհեստական հասարակությունների շքեղությունը, կոչումը, բարոյականությունը և բարեկեցությունը: Նրանք չեն հասկացել, որ ժամանակը ստեղծում և տարածում է լուսավորություն, և որ լուսավորության աճին համաչափ

իրավունքը դադարում է ուժով պաշտպանվել, և հասարակությունը վերադարձնում է ինքն իր տիրապետությունը:

Եվ իրականում, ո՞րն է քաղաքական աշխատանքը, որը մենք ձգտում ենք խթանել: Այն ոչ այլ ինչ է, քան յուրաքանչյուր ժողովրդի բնագոյային ջանքերը ազատության նկատմամբ: Եվ ի՞նչ է ազատությունը, որի անունը կարող է ստիպել, որ ցանկացած սիրտ բաբախի, և որը կարող է ցնցել աշխարհը, եթե ոչ բոլոր ազատությունների միություն՝ խղճի, ուսուցման, միության, մամուլի, տեղաշարժման, աշխատանքի և փոխանակման ազատություն: Այլ կերպ ասած՝ բոլորի անվնաս ընդունակությունների կիրառում: Եվ կրկին այլ կերպ ասած՝ բոլոր բռնակալությունների ոչնչացումը՝ նույնիսկ իրավական բռնակալության, և օրենքի կրճատումը՝ իր միակ ռացիոնալ ոլորտին հասցնելու համար, որը օրինական պաշտպանության անհատական իրավունքը կարգավորելու կամ անսարդարությունը ճնշելու համար է:

Մարդկային ցեղի այս միտումը, պետք է ընդունել, որ հատկապես մեր երկրում մեծապես խափանված է իրենց մարդկությունից առաջ դասելու կործանարար հակումով՝ դա ըստ իրենց երևակայության կազմակերպելու և կարգավորելու համար՝ որպես դասական ուսուցանման արդյունք և բոլոր քաղաքական գործիչների համար ընդհանուր:

Մինչդեռ հասարակությունը պայքարում է ազատության գիտակցման համար, մեծ մարդիկ, ովքեր իրենց գլուխ են նշանակում տոգորված 17-րդ և 18-րդ դարի սկզբունքներով, մտածում են միայն այն իրենց սոցիալական հորինվածքների բարեգործական բռնակալությանը ենթարկելու մասին, ինչպես նաև, ըստ Ռուսսոյի ասածի, ստիպելու հնազանդությամբ դիմանալ հանրության երջանկության լծին, ինչպես պատկերված է իրենց սեփական երևակայություններում:

Սա հատկապես բնորոշ էր 1789 թվականին: Հենց որ ոչնչացվեց հին համակարգը, հասարակությանը պետք է ներկայացվեց այլ արհեստական պայմանավորվածություններ՝ միշտ նույն սկզբնակետով՝ օրենքի ամենագործությամբ:

Սենթ Ջասթ. «Օրենսդիրը տնօրինում է ապագան: Սա նրա համար է, որ նա մարդկությանը բարիք ցանկանա: Սա նրա համար է, որ նա մարդկանց սարքի այնպես, ինչպես ցանկանում է, որ լինեն»:

Ռոբեսպիեր. «Կառավարության գործառույթը ժողովրդի ֆիզիկական և բարոյական ուժերը դեպի իր հաստատության նպատակն ուղղորդելն է»:

Բիլոդ Վարեն. «Ազատության վերականգնման կարիք ունեցող ժողովուրդը պետք է նորից ձևավորվի: Հին նախապաշարմունքները պետք է ոչնչացվեն, հնացած սովորույթները փոխվեն, անբարեխիղճ վերաբերմունքն ուղղվի, մոլի արատներն արմատախիլ արվեն: Սրա համար հաստատուն ուժի և վճռական ազդակի կարիք կլինի: Զաղաքացիները, Լիկուրգուսի անխախտելի խստությունը կերտեցին Սպարտիայի հանրապետության ամուր հիմքը: Սուլոնի տկար և վստահելի

կարգադրությունները Աթենքը ստրկության մեջ գցեցին: Այս զուգահեռը պարունակում է կառավարության ամբողջ գիտությունը»:

Լեփեյթեր. «Հաշվի առնելով մարդկության անկման աստիճանը՝ ես համոզված եմ, որ կա ռասայի ամբողջական վերածնունդ կատարելու և, եթե կարելի է այսպես արտահայտվել, նոր մարդկանց ստեղծելու անհրաժեշտություն:»

Մարդիկ, հետևաբար, ոչինչ են, քան չմշակված նյութ: Իրենց սեփական բարելավումն ուզելը իրենց համար չէ: Նրանք ի վիճակի չեն դրան: Ըստ Մենթ Ջասթի՝ միայն օրենսդիրն է ի վիճակի: Մարդիկ լոկ այն են, ինչն օրենսդիրը ուզում է, որ նրանք լինեն: Ըստ Ռոբեսպիերի, ով բառացիորեն կրկնօրինակում է Ռուսսոյին՝ օրենսդիրը պետք է սկսի՝ հաստատելով ժողովրդի հաստատությունների նպատակը: Սրանից հետո կառավարությունը միայն այս ուղղությամբ պետք է ուղղի իր ամբողջ ֆիզիկական և բարոյական ուժերը: Այս ամբողջ ընթացքում ժողովուրդն ինքը պետք է պասիվ մնա: Իսկ Բիլոդ Վարեն մեզ կտվորեցներ, որ այն պետք է չունենա նախաինսամություններ, ազդեցություններ, ցանկություններ, բայց այնպիսին, որ վավերացված են օրենսդիրի կողմից: Նա անգամ ավելի հեռու է գնում՝ ասելով, որ մարդու անբեկանելի խստությունը հանրապետության հիմքն է:

Մենք տեսել ենք, որ այն իրավիճակներում, երբ արատն այնքան մեծ է, որ սովորական դատավորներն անկարող են այն բուժել, Մաբլին խորհուրդ է տալիս դիկտատուրա՝ առաքինություն խթանելու համար: «Դիմե՛ք, - ասում է նա, - արտակարգ դատարանին, որի ժամանակը կլինի քիչ, իսկ ուժը՝ զգալի: Ժողովրդի երևակայությունը պետք է տպավորվի»: Այս ուսմունքը չի անտեսվել: Լսե՛ք Ռոբեսպիերին.

«Հանրապետական կառավարության սկզբունքը առաքինությունն է, իսկ այն միջոցները, որոնք պետք է ընդունվեն դրա ստեղծման ընթացքում, ահաբեկչություն են: Մենք ուզում ենք մեր երկրում փոխարինել բարոյականությունը եսասիրությամբ, ազնվությունը՝ փառքով, սկզբունքները՝ սովորույթներով, պարտականությունները՝ վարվելակարգով, բանականության կայսրությունը՝ նորաձևության բռնակալությամբ, չարիքն արհամարհելը՝ դժբախտությունն արհամարհելով, հպարտությունը՝ ամբարտավանությամբ, հոգու մեծությունը՝ դատարկությամբ, փառքի հանդեպ սերը՝ գումարի հանդեպ սիրով, լավ մարդկանց՝ լավ ընկերությամբ, վաստակը՝ բանասարկությամբ, հանճարեղությունը՝ սրամտությամբ, ճշմարտությունը՝ շքեղ քայլով, երջանկության հմայքը՝ հաճույքի ձանձրույթով, մարդու մեծությունը՝ մեծության փոքրությամբ, վեհանձն, հզոր, երջանիկ մարդկանց՝ անկայուն, թեթևամիտ, այլասերված մարդկանցով: Այսինքն՝ փոխարինել հանրապետության բոլոր արժանիքներն ու հրաշքները նորաձևության միապետական բռնակալության չարիքներով ու անհեթեթություններով»:

Մարդկությունից ինչպիսի բարձրության վրա է իրեն Ռոբեսպիերն այստեղ դասում: Եվ դիտարկե՛ք ամբարտավանությունը, որով նա խոսում է: Նա չի

բավարարվում մարդկային սրտի մեծ վերակառուցման ցանկությունն արտահայտելով, նա նույնիսկ նման արդյունք չի ակնկալում հերթական կառավարության կողմից: Ո՛չ: Նա մտադիր է ազդել ինքնուրույն և ահաբեկչական միջոցներով: Դիսկուրսի առարկան, որից դուրս է հանվել հակաթեզի այս երեխայական ու դժվար զանգվածը, պետք է արտահայտեր բարոյական սկզբունքները, որոնք պետք է ուղղորդեին հեղափոխական կառավարությանը: Ավելին, երբ Ռոբեսպիերը պահանջում է բռնապետություն, այն ոչ միայն օտարերկրյա թշնամուն ետ մղելու կամ տարածայնությունները ճնշելու համար է, այլև ահաբեկչության միջոցով և որպես սահմանադրական խաղի սկիզբ՝ բարոյականության իր սկզբունքները հաստատելու համար: Նա հավակնում է ոչ այլ ինչի, քան ահաբեկչության միջոցով երկրից դուրս հանելու եսասիրությունը, փառքը, սովորույթները, վարվելակարգը, նորաձևությունը, գումարի հանդեպ սերը, լավ ընկերությունը, բանսարկությունը, սրամտությունը, շքեղությունը և դժբախտությունը: Միայն այն բանից հետո, երբ ինքը՝ Ռոբեսպիերը, կատարեր այս հրաշքները, ինչպես նա արդարացիորեն կոչում է դրանց, նա թույլ կտար, որ օրենքը վերականգներ իր կայսրությունը: Իրականում, լավ կլիներ, եթե այս երազողները, ովքեր այնքան շատ մտածում են իրենց մասին և այնքան քիչ՝ մարդկության, ովքեր ցանկանում են նորացնել ամեն ինչ, միայն բավարարվեին իրենք իրենց բարեփոխելով. խնդիրը բավական դժվար կլիներ իրենց համար: Ընդհանրապես, չնայած այս պարոնայք, ռոֆորմիստները, օրենսդիրները, քաղաքական գործիչները չեն ցանկանում ուղիղ բռնակալություն գործածել մարդկության հանդեպ: Ո՛չ: Նրանք չափազանց զուսպ և մարդասեր են դրա համար: Նրանք միայն պայքարում են բռնակալության, բացարձակ իշխանության և օրենքի ամենագործության համար: Նրանք ձգտում են միայն օրենք ստեղծել:

Տույց տալու համար, թե որքան համընդհանուր է եղել այս տարօրինակ բռնակալությունը Ֆրանսիայում, ես պետք է ոչ միայն արտագրեի Մաբլիի, Ռայնալի, Ռուսսոյի, Ֆենելոնի ամբողջ աշխատանքները և մեծ քաղվածքներ հանեի Բոսուեից ու Մոնտեսքյուլից, այլև տալ Կոնվենցիայի նիստերի ամբողջ արձանագրությունները: Ես նման բան չեմ անի, թեպետ ընթերցողին միայն դրանցից հղում կտամ:

Չարմանալի չէ, որ այս գաղափարը պետք է Բոնապարտին չափազանց լավ համապատասխաներ: Նա դա ջերմորեն ընդունեց և եռանդորեն գործածեց: Քիմիկոսի դեր խաղալով՝ Եվրոպան նրա համար փորձարկումների նյութ էր: Բայց այս նյութը իրեն հակառակ ռեակցիա տվեց: Կեսից շատը ճշմարտությունն իմանալով՝ Բոնապարտը Սուրբ Հելենա կղզում կարծես ընդունեց, որ յուրաքանչյուր ժողովրդի մեջ կա նախաձեռնողականություն, և նա սկսեց պակաս թշնամական վերաբերվել ազատությանը: Սակայն սա նրան չարգելեց այս դասն իր որդուն տալ իր կտակի մեջ. «Կառավարելը բարոյականություն, կրթություն և բարեկեցություն տարածելն է»:

Այս ամենից հետո դժվար, թե կարիք լինի նրբին ցիտումներով ներկայացնելու Մորելլիի, Բաբեֆի, Օուենի, Մեն Սիմոնի և Ֆուլյոյեի կարծիքները: Ես կսահմանափակվեմ Լուի Բլանի գրքից մի քանի հատվածներով՝ աշխատանքի կազմակերպման մասին:

«Մեր ծրագրում հասարակությունը ստանում է իշխանության խթանը»:

Ինչից է բաղկացած խթանը, որ իշխանությունը տալիս է հասարակությանը: Լուի Բլանի ծրագրի ներդրումից:

Մյուս կողմից՝ հասարակությունը մարդկային ռասսան է: Հետևաբար՝ մարդկային ռասսան պետք է խթան ստանա Լուի Բլանից:

Դա անել կամ չանելը ազատության վրա է. այսպես կասվի: Իհարկե, մարդկային ռասսան ազատ է խորհուրդ վերցնելու ցանկացած մեկից՝ ով էլ, որ լինի: Բայց Լուի Բլանն այսպես չէ, որ այն հասկանում է: Նա նկատի ունի, որ իր ծրագիրը պետք է վերածվի օրենքի և, հետևաբար, իշխանության կողմից հարկադրաբար պարտադրվի:

«Մեր ծրագրում պետությունը միայն պետք է օրենսդրությունը կարգավորի աշխատանքի համար, որի միջոցով արդյունաբերական շարժումը կարող է և պետք է իրականացվի ամբողջ ազատությամբ: Այն (պետությունը) պարզապես հասարակությանը դնում է մի թեքության վրա, որտեղից կարելի է բացարձակ ուժով և հաստատված մեխանիզմի բնականոն ընթացքով ցած ընկնել, երբ այդ թեքության վրա է»:

Բայց ինչի՞ համար է այս թեքությունը: Մեկը նշված է Լուի Բլանի կողմից: Արդյո՞ք այն չի տանում դեպի անդունդը: Ո՛չ, այն երջանկություն է բերում: Այդ դեպքում ինչու՞ հասարակությունն ինքը այնտեղ չի գնում: Որովհետև այն չգիտի, թե ինչ է ուզում, և խթանի կարիք ունի: Ի՞նչ կտա այս խթանը: Իշխանություն: Եվ ո՞վ կտա խթանն իշխանությանը: Մեքենայի հորինողը՝ Լուի Բլանը:

Մենք երբեք չպետք է դուրս գանք այս շրջանից. պասիվ մարդկություն և մեծ մարդիկ, որոնք այն շարժում են օրենքի միջամտությամբ: Այս թեքության վրա արդյո՞ք հասարակությունը կվայելի ազատությունը: Անկասկած: Եվ ի՞նչ է ազատությունը:

«Մեկընդմիջտ. ազատությունը բաղկացած է ոչ միայն շնորհված իրավունքով, այլև մարդուն տրված իշխանությամբ՝ իրականացնել, զարգացնել իր ընդունակությունները՝ արդարադատության կայսրության և օրենքի պաշտպանության ներքո:

Եվ սա անիմաստ տարբերություն չէ. խորը իմաստ կա դրա մեջ, և դրա հետևանքները չեն կարող գնահատվել: Քանի որ հենց ընդունվում է, որ մարդն իրապես ազատ լինելու համար պետք է ունենա իր ընդունակություններն իրականացնելու ու զարգացնելու իշխանություն, սրանից հետևում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ունի այնպիսի հանձնարարության պահանջ, ինչպես թույլ տալ իրեն ցուցադրել,

և աշխատանքի գործիքների պահանջ, առանց որոնց մարդկային գործունեությունը չի կարող գտնել որեւէ շրջանակ: Հիմա ու՞մ միջամտությամբ պետք է հասարակությունն իր անդամներից յուրաքանչյուրին տա անհրաժեշտ հանձնարարությունը և աշխատանքի գործիքները, եթե ոչ պետության»:

Հետևաբար՝ անկախությունը իշխանություն է: Ինչի՞ց է բաղկացած այս իշխանությունը: Աշխատանքի հանձնարարություն և գործիքներ ունենալուց: Հասարակությունից, որ պարտք է դրանց: Ու՞մ միջամտությամբ պետք է հասարակությունը աշխատանքի գործիքները տա նրանց, ովքեր չունեն: Պետության միջնորդությամբ: Ու՞մից պետք է պետությունը ձեռք բերի դրանք:

Այս հարցին պետք է պատասխանի ընթերցողը և իմանա, թե դեպի ուր է այս ամբողջը գնում:

Մեր ժամանակների ամենատարօրինակ երևույթներից մեկը, որը զարմանքի առարկա կլինի մեր ժառանգների համար, ուսմունքն է, որը հիմնված է այս եռակի վարկածների վրա՝ մարդկության արմատական պասիվությունը, օրենքի ամենագործությունը, օրենսդիրի անսխալականությունը: Սա կուսակցության սուրբ խորհրդանիշն է, որն իրեն բացարձակ ժողովրդավարական է հռչակում:

Ճիշտ է, որ այն նաև պնդում է, թե սոցիալական է:

Քանի որ ժողովրդավարական է, այն մարդկության մեջ անսահման հավատ ունի:

Քանի որ սոցիալական է, այն իրեն ցեխի տակ է թաղում:

Արդյո՞ք քաղաքական իրավունքները ենթակա են քննարկման: Օրենսդիրը պե՞տք է ընտրվի: Օհ, այդ դեպքում մարդիկ գիտությունը բնազդով են կրում. նրանք շնորհված են սքանչելի նրբազգացողությամբ, նրանց կամքը միշտ ճիշտ է, ընդհանուր կամքը չի կարող սխալվել: Ընտրական իրավունքը չի կարող չափազանց համընդհանուր լինել: Ոչ ոք հասարակության հանդեպ որևէ պատասխանատվություն չի կրում: Լավն ընտրելու կամքն ու կարողությունը այդպես էլ պիտի լինեին: Կարո՞ղ են մարդիկ սխալվել: Արդյո՞ք մենք լուսավորչության դարաշրջանում չենք ապրում: Ի՞նչ: Արդյո՞ք մարդիկ անընդհատ պետք է առաջատար տողերում լինեն: Արդյո՞ք նրանք ձեռք չեն բերել իրենց իրավունքները ջանքերի և զոհաբերության գնով: Արդյո՞ք նրանք խելացիության և իմաստության բավարար ապացույցներ չեն տվել: Արդյո՞ք նրանք չեն հասունացել: Արդյո՞ք նրանք ի վիճակի չեն ինքնուրույն դատել: Արդյո՞ք նրանք չգիտեն իրենց սեփական հետաքրքրությունները: Կա՞ մարդ կամ դասակարգ, որը կհամարձակվի պնդել, որ իրեն ժողովրդի տեղը դնեն, որ ինքը որոշի և գործի ժողովրդի փոխարեն: Ո՛չ, ո՛չ: Մարդիկ ազատ են եղել և այդպես էլ կլինեն: Նրանք ուզում են իրենք վարել իրենց գործերը, և այդպես էլ կլինի:

Բայց հենց օրենսդիրը պատշաճ ձևով ընտրվում է, իրականում իր խոսքի ոճը փոխվում է: Ազգը ետ է ուղարկվում պասիվ, իներտ, դատարկ վիճակի, և օրենսդիրն իր ձեռքն է առնում ամենագործության տիրապետությունը: Նա է հնարում, նա է ուղղություն ցույց տալիս, նա է առաջ մղում և նա է կազմակերպում: Մարդկությունը ոչինչ չի կարող անել, բացի ընդունելուց. եկել է բռնապետության ժամանակը: Եվ մենք պետք է դիտարկենք, որ սա վճռորոշ է. քանի որ առաջ այդքան լուսավորված, այդքան բարոյական, այդքան կատարյալ մարդիկ որևէ հակում չունեն կամ, եթե ունեն, ապա դրանք բոլորը դեպի անկում են տանում: Բայց, ամեն դեպքում, նրանք մի փոքր անկախություն պետք է ունենան: Բայց, ըստ Կոնսիդերանի, արդյո՞ք մենք համոզված չենք, որ անկախությունն անխուսափելիորեն տանում է դեպի մենաշնորհի: Արդյո՞ք մեզ չեն ասել, որ անախությունը մրցակցություն է: Եվ այդ մրցակցությունը, ըստ Լուի Բլանի, մարդկանց բնաջնջման և առևտրի կործանման համակարգ է: Այս պատճառով ժողովուրդները ոչնչացվում և կործանվում են համաչափությամբ, քանի որ ազատ են: Օրինակ՝ Շվեյցարիան, Հոլանդիան, Անգլիան և ԱՄՆ-ն: Արդյո՞ք Լուի Բլանը մեզ նորից չի ասում, որ մրցակցությունը տանում է դեպի մենաշնորհի և որ նույն պատճառով էժանությունը հանգեցնում է հսկայական գների: Որ մրցակցությունը հակված է սպառել ծախսման աղբյուրները և արտադրությունը տանում է կործանարար գործունեության: Որ մրցակցությունը ստիպում է, որ արտադրությունն աճի և սպառումը նվազի, որտեղից էլ հետևում է, որ ազատ մարդիկ արտադրում են ոչ հանուն սպառման: Որ բացի ճնշումից և մոլեգնությունից ուրիշ ոչինչ չկա նրանց միջև: Եվ որ Լուի Բլանի համար բացարձակապես անհրաժեշտ է տեսնել այն:

Ի՞նչ տեսակի ազատություն պետք է թույլատրվի մարդկանց: Խղճի՞ ազատություն: Բայց մենք կտեսնենք, թե ինչպես են բոլորը օգուտ քաղում աթեիստ դառնալու թույլտվությունից: Կրթությամբ ազատություն: Բայց ծնողները դասախոսներին կվճարեն իրենց երեխաներին անբարոյականություն և շեղումներ սովորեցնելու համար: Բացի այդ, եթե մենք հավատանք Մ. Թիերզին, եթե կրթությունը թողնվի ազգային անկախության վրա, ապա կդադարի լինել ազգային, և մենք կկրթենք մեր երեխաներին թուրքական կամ հնդկական գաղափարախոսություններով, որոնց փոխարեն, ի շնորհիվ համալսարանների օրինական բռնակալության, նրանք բախտ ունեն կրթվելու հռոմեացիների ազնվական գարափարախոսություններով: Աշխատանքի՞ ազատություն: Բայց սա միայն մրցակցություն է, որի ազդեցությունը բոլոր արտադրությունները անուշադրության մատնելն է, մարդկանց բնաջնջելը և արհեստավորներին կործանելը: Փոխանակմամբ ազատություն: Բայց հայտնի է, որ պրոտեկցիոնիստները կրկին ու կրկին ցույց են տվել, որ մարդը պետք է կործանվի, երբ ազատ փոխանակվում է, և որ հարստանալու համար անհրաժեշտ է փոխանակվել առանց ազատության: Միավորմամբ ազատություն: Բայց, համաձայն սոցիալիստական ուսմունքի, ազատությունն ու միավորումը բացառում են միմյանց, քանի որ մարդկանց ազատությունը հարձակման է ենթարկվում ստիպելու համար, որ միավորվեն:

Դուք պետք է տեսնեք, այնուամենայնիվ, որ սոցիալսիտ դեմոկրատները չեն կարող գիտակցաբար մարդկանց որևէ ազատություն թույլ տալ, որովհետև իրենց բնույթով ամեն դեպքում հակված են բոլոր տեսակի քայքայումների ու բարոյալքումներին:

Հետևաբար՝ մեզ ամեն դեպքում մտում է միայն կռահել, թե ինչ հիմքի վրա է համընդհանուր ընտրական իրավունքը այսքան հաստատակամությամբ պահանջվում:

Կազմակերպիչների հավակնություններն այլ հարց են առաջ քաշում, որը ես հաճախ հարցրել եմ նրանց և որի պատասխանը, չեմ կարծում, որ երբևէ ստացել եմ: Քանի որ մարդկության բնական հակումները այնքան վատն են, որ ապահով չէ նրանց ազատություն թույլ տալը, ինչպե՞ս է ստացվում, որ կազմակերպիչների հակումները միշտ լավն են: Արդյո՞ք օրենսդիրներն ու իրենց ներկայացուցիչները մարդկային ռասսայի մաս չեն: Արդյո՞ք նրանք կարծում են, թե մարդկության մյուս մասից տարբերվող, այլ նյութերից են բաղկացած: Նրանք ասում են, որ հասարակությունը, երբ ինքն իրեն է թողնվում, սլանում է անխուսափելի կործանման, որովհետև իր բնագոյները սխալ են: Նրանք ձևացնում են, թե դադարեցնում են անկումը և ավելի լավ ուղղություն ցույց տալիս: Հետևաբար՝ նրանք երբևէ ստացել են խելք և արժանիքներ, որոնք իրենց մարդկությունից վեր են դասում: Թող իրենք ցույց տան իրենց կոչումը այս գերազանցությանը: Նրանք կլինեին մեր հովիվները, իսկ մենք՝ իրենց հոտը: Այս պայմանավորվածությունն իրենց մեջ բնական գերազանցություն է ենթադրում, և մենք լիովին արդարացված ենք՝ կոչ անելու նրանց ապացուցել դա:

Դուք պետք է դիտարկեք, որ ես չեմ հակադրվում սոցիալական միավորումներ հորինելու, քարոզելու, խորհուրդ տալու և իրենք իրենց վրա փորձելու իրավունքին՝ իրենց սեփական հաշվին և ռիսկով: Սակայն ես կասկածի տակ եմ դնում օրենքի միջոցով դրանք մեզ պարտադրելու իրենց իրավունքը, այսինքն՝ ուժով և հանրային հարկերով:

Ես չեմ պնդի, որ կաբետիստները, ֆուրյերիստները, պրուդոնները, ակադեմիկոսները և պրոտեկցիոնիստները հրաժարվեն իրենց հատուկ գաղափարներից: Ես միայն կպնդեմ, որ նրանք հրաժարվեն մի մտքից, որը բնորոշ է նրանց բոլորին: Այն է՝ մեզ ուժով ենթարկելը իրենց սեփական խմբերի և շարքերի սոցիալական սեմինարներին, անվճար բանկերին, հունահռոմեական բարոյականությանը և առևտրային սահմանափակումներին: Ես կխնդրեմ նրանց մեզ թույլ տալ իրենց ծրագրերը դատելու ընդունակությունը և չպարտավորեցնեն ընդունելու դրանք, եթե մենք գտնում ենք, որ դրանք վնասում են մեր շահերը և հակասում են մեր խղճին:

Իշխանությունից ու հարկումից հովանավորչություն ստանալը ենթադրելը, բացի ճնշելուց ու անարդար լինելուց, նշանակում է հետագա, վնասակար ենթադրություն, որ կազմակերպվածը անսխալական է, իսկ մարդկությունը՝ ոչ կոմպետենտ:



Իսկ եթե մարդկությունը ոչ կոմպետենտ է ինքնուրույն դատելու համար, ինչու՞ են նրանք այդքան շատ խոսում համընդհանուր ընտրական իրավունքից:

Գաղափարների այս հակասությունը, դժբախտաբար, կարելի է գտնել նաև փաստերի մեջ: Քանի դեռ ֆրանսիական ազգը նախորդում էր բոլոր մյուսներին՝ իր իրավունքները կամ, ավելի շուտ, քաղաքական հավակնությունները, գործադրելու հարցում, այն ոչ մի կերպ չի կանխել, որ ավելի կառավարեն, ուղղորդեն ու պարտադրեն, զավթեն ու խաբեն, քան ցանկացած այլ ազգի: Այն նաև բոլոր մյուսների մեջ միակն է, որտեղ հեղափոխությունները սարսափազդու են, և կատարելապես բնական է, որ այն այսպես էլ պետք է լիներ:

Քանի դեռ պահպանվում է այս գաղափարը, որն ընդունված է մեր բոլոր քաղաքական գործիչների կողմից և այդքան ակտիվ արտահայտված է Լուի Բլանի այս տողերում՝ «Հասարակությունն իր ազդակը ստանում է իշխանությունից», մարդիկ համարում են, որ շնորհված են զգացմունքներով, սակայն պասիվ՝ անկարող իրենք իրենց սեփական ինքնագիտակցությամբ և էներգիայով բարձրացնել բարոյականությունը կամ բարեկեցությունը, փոխարենը նրանք ամեն ինչ ակնկալում են օրենքից: Կարճ ասած՝ երբ նրանք ընդունում են, որ իրենց հարաբերությունները պետության հետ նույնն է, ինչ հոտի և հովիվի միջև, պարզ է, որ իշխանության պատասխանատվությունը հսկայական է: Հաջողություն և դժբախտություն, հարստություն եւ աղքատություն, հավասարություն եւ անհավասարություն, բոլորը դրանից են սերում: Այն մեղադրվում է ամեն ինչում, այն հանձն է առնում ամեն ինչ, այն ամեն ինչ անում է: Հետևաբար՝ այն պետք է ամեն ինչի համար պատասխան տա: Եթե մենք երջանիկ ենք, այն իրավունք ունի պահանջել մեր երախտագիտությունը, բայց եթե մենք դժբախտ ենք, այն մենակ պետք է կրի մեղքը: Իրականում արդյո՞ք մեր անձինք և սեփականությունները իր տրամադրության տակ չեն: Արդյո՞ք օրենքը ամենակարող չի: Ստեղծելով համընդհանուր մենաշնորհ՝ այն զբաղվել է պատասխանելով այն ընտանիքների հայրերի ակնկալիքներին, որոնք զրկված են եղել ազատությունից: Եվ եթե այս ակնկալիքները հուսախաբ են արված, ու՞մ մեղքն է դա:

Կարգավորելով ոլորտը՝ այն զբաղվել է դա շենացնելով, հակառակ դեպքում անհեթեթություն կլիներ զրկել այն իր ազատությունից: Եվ եթե այն տուժի, ո՞վ է մեղավոր: Սակագների խաղով առևտրի հաշվեկշիռը հարմարեցնել ձևացնելով՝ այն զբաղվում է դա շենացնելով և, եթե բարգավաճումից հեռու լինի ու կործանվի, ու՞մ մեղքը կլինի: Իրենց ազատության դիմաց ապահովելով ծովային սպառազինությունների պաշտպանությունը՝ այն զբաղվել է դրանք շահութաբեր ներկայացնելով: Եթե դրանք ծանրաբեռնվեն, ու՞մ մեղքն է լինելու:

Հետևաբար՝ ազգի մեջ չի լինում մի դժգոհություն, որի համար կառավարությունն ինքը կամավոր պատասխանատվություն չի կրում: Արդյո՞ք զարմանալի է, որ յուրաքանչյուր ճախողում հեղափոխություն է

սպառնում: Եվ ի՞նչ միջոց է առաջարկվում: Օրենքի տիրապետությունն անորոշ ժամանակով երկարացնել, ինչպես, օրինակ, կառավարության պատասխանատվությունը: Բայց եթե կառավարությունը աշխատավարձերը բարձրացնելով և կարգավորելով է զբաղվում և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե այն բոլոր կարիքավորներին օգնելով է զբաղվում և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե այն յուրաքանչյուր աշխատողին օթևան տրամադրելով է զբաղվում և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե այն անհատույց վարկ առաջարկելով է զբաղվում բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն փոխառնելու, և ի վիճակի չէ դա իրականացնել, եթե բառերում, որոնք ավստոսալի է, որ դուրս են եկել դը Լամարտինի գրչից՝ «Պետությունը համարում է, որ իր առաքելությունն է լուսավորել, զարգացնել, մեծացնել, հզորացնել, հոգեպես սնուցել և օրհնել ժողովրդի հոգին», - եթե այն ձախողվում է սա կատարել, ակնհայտ չէ, որ յուրաքանչյուր հիասթափությունից հետո, որը, ավաղ, ավելի քան հավանական է, կլինի ոչ պակաս անխուսափելի հեղափոխություն:

Ես հիմա կվերսկսեմ թեման՝ նորից նշելով, որ անմիջապես հարցի տևտեսական մասից<sup>5</sup> հետո և քաղաքական մասը սկսելիս մի հիմնական հարց է առաջանում: Հետևյալը.

Ի՞նչ է օրենքը: Ի՞նչ պետք է այն լինի: Ո՞րն է դրա տիրույթը: Որո՞նք են դրա սահմանները: Որտե՞ղ է օրենսդիր իրավասությունը փաստացի կանգ առնում:

Ես չեմ տատանվում պատասխանել՝ օրենքը համընդհանուր ուժ է՝ կազմակերպված անարդարությունը կանխելու համար: Կարճ ասած՝ օրենքը արդարություն է:

Ճիշտ չէ, որ օրենսդիրը բացարձակ իրավունք ունի մեր անձանց և սեփականությունների հանդեպ, քանի որ դրանք նախապես գոյություն են ունեցել, և նրա գործը միայն դրանք վնասվածքներից ապահովելն է:

Ճիշտ չէ, որ օրենքի առաքելությունը մեր գիտակցությունը, մեր գաղափարները, մեր կամքը, մեր կրթությունը, մեր զգացմունքները, մեր աշխատանքները, մեր փոխանակումները, մեր նվերներն ու մեր վայելքները կարգավորելն է: Դրա առաքելությունը կայանում է նրանում, որ թույլ չտա, որ մեկի իրավունքները խանգարեն մյուսին՝ սրանցից ցանկացածի հետ կապված:

Օրենքը, քանի որ այն ուժի մեջ է իրեն անհրաժեշտ պատժամիջոցների համար, որպես օրինական տիրույթ կարող է միայն ունենալ ուժի տիրույթը, որն արդարությունն է:

Եվ ինչպես յուրաքանչյուր անձ իրավունք ունի ուժի դիմել միայն օրինական պաշտպանության ժամանակ, այնպես էլ հավաքական ուժը,

---

<sup>5</sup> Քաղաքական տևտեսությունը նախորդում է քաղաքականությանը. առաջինը պետք է բացահայտի, թե արդյոք մարդկային շահերը ներդաշնակ կամ հակասական են - մի փաստ, որը պետք է որոշվեր, մինչև վերջինս կարողանար սահմանել կառավարության արտոնությունները:

որը միայն անհատական ուժերի միավորումն է, չի կարող ռացիոնալ կերպով օգտագործվել ցանկացած այլ բանի համար:

Օրենքը, հետևաբար, բացառապես անհատական իրավունքների կազմակերպումն է, որոնք գոյություն ունենին մինչ օրինական պաշտպանությունը:

Օրենքն արդարություն է:

Մինչ օրս չկարողանալով ժողովրդի անհատներին ճնշել կամ թալանել նրանց սեփականությունը՝ նույնիսկ բարեգործական նպատակներով, դրա առաքելությունն է պաշտպանել առաջինը և ապահովել վերջիններիս ունեցվածքը:

Պետք չէ նաև ասել, որ այն կարող է բարեգործական լինել, քանի դեռ այն ձեռնպահ է մտնում բոլոր ճնշումներից, քանի որ սա հակասություն է: Օրենքը չի կարող խուսափել մեր անձանց և սեփականությունների վրա գործելուց: Եթե այն չի ապահովում դրանց, ապա խախտում է՝ ազդելով դրանց վրա:

Օրենքն արդարություն է:

Ավելի մաքուր ու պարզ, ավելի լավ սահմանված և սահմանափակված կամ ցանկացած աչքի ավելի տեսանելի բան չի կարող լինել: Քանի որ արդարությունը որոշ քանակ է՝ անփոփոխ ու անսասան, որն ընդունում է ո՛չ աճ, ո՛չ նվազում:

Հեռացե՛ք այս կետից, օրենքը դարձրե՛ք կրոնական, եղբայրական, հավասարագոր, արդյունաբերական, գրական կամ գեղարվեստական և դուք կկորչեք անորոշության ու տարակուսանքի մեջ: Դուք կլինեք մի անձանոթ հողի վրա՝ հարկադրված ուտոպիայում, կամ ավելի վատ՝ ուտոպիաների բազմության մեջ՝ ձգտելով վերցնել օրենքի տիրապետությունը և պարտադրել ձեզ վրա, քանի որ եղբայրություն ու բարեգործությունը չունեն հաստատուն սահմաններ, ինչպես արդարությունը: Որտե՞ղ կանգ կառնես դու: Որտե՞ղ կանգ կառնի օրենքը: Մի մարդ միայն, ինչպես դր Սեն Քրիքը, կընդլայնի իր բարեգործությունը որոշ արտադրական դասերի վրա և կպահանջի, օրենքը սպառողները տնօրինեն հօգուտ արտադրողների: Մեկ ուրիշը, ինչպես Կոնսիդերանը, իր վրա կվերցնի աշխատողների դասի պատճառը և ֆիքսված արժեքով օրենքով կպահանջի հագուստ, բնակարան, սնունդ և կյանքի համար անհրաժեշտ ցանկացած բան: Մի երրորդը, ինչպես Լուի Բլանը, կասի, որ սա կլինեք անավարտ եղբայրություն, և որ օրենքը պետք է իրենց տրամադրի գործիքներ, աշխատանքի եւ ուսուցման միջոցներ: Չորրորդը կդիտարկի, որ նման պայմանավորվածությունը անհավասարության տեղ է թողնում, և որ օրենքը պարտավոր է ամենահեռավոր գյուղակներ հասցնի շքեղությունը, գրականությունը և արվեստը: Սա դեպի կոմունիզմ տանող բարձր ճանապարհն է: Այլ կերպ ասած՝ օրենսդրությունը կլինի այն, ինչ հիմա է՝ ռազմի դաշտ բոլորի երազանքների և բոլորի ազահության համար:

Օրենքն արդարություն է:

Այս պնդման մեջ մենք ներկայացնում ենք մեզ պարզ, կայուն կառավարություն: Եվ ես ձեռնոց եմ նետում ցանկացած մեկին՝ ինձ ասելու, թե որտեղից կարող է հեղափոխության, ապստամբության կամ հասարակ անհնազանդության միտք առաջանալ հասարակական ուժի դեմ՝ սահմանափակված անարդարության ճնշման տակ: Նման համակարգի ներքո ավելի շատ բարեկեցություն կլիներ, իսկ այդ բարեկեցությունն ավելի հավասար բաշխված կլիներ: Իսկ ինչ վերաբերում է մարդկությունից անբաժան տառապանքներին՝ ոչ ոք չէր մտածի կառավարությանը մեղադրել դրանց համար, քանի որ դա կլիներ նույնքան միամիտ, որքան ջերմաստիճանի տատանումները: Արդյո՞ք մարդիկ երբևէ հայտնի են եղել դատարանի դեմ պայքարներով կամ խաղաղարար դատավորների վրա հարձակումներով՝ հանուն աշխատավարձի չափի, անհատույց վարկի, աշխատանքային գործիքների, հարկացուցակների կամ սոցիալական սեմինարի առավելությունների պահանջի: Նրանք շատ լավ գիտեն, որ այս համադրությունները խաղաղության արդարադատության իրավասությունից հեռու են, և նրանք շուտով կհասկանան, որ իրենք օրենքի իրավասության շրջանակներում չեն:

Բայց եթե օրենքը ստեղծվեր եղբայրության սկզբունքի հիման վրա, եթե հռչակվեր, որ դրանից են բխում բոլոր օգուտները և բոլոր չարիքները, որ այն պատասխանատու է յուրաքանչյուր անհատական բողոքի և ցանկացած սոցիալական անհավասարության համար, ապա դուք ճանապարհ եք բացում դժգոհությունների, զայրույթների, անհանգստությունների և հեղափոխությունների անվերջ հաջորդականության:

Օրենքն արդարություն է:

Եվ շատ տարօրինակ կլիներ, եթե այն պատշաճ ձևով այլ բան լիներ: Արդյո՞ք արդարությունը ճիշտ չէ: Արդյո՞ք իրավունքները հավասար չեն: Իրավունքի ինչպիսի՞ դրսևորմամբ կարող է օրենքը միջամտել, որպեսզի ինձ ենթարկի ՄՄ սոցիալական ծրագրերին: Միմերել, դը Մելուն, Թիերս կամ Լուի Բլան, ոչ թե ենթարկել այս պարոններին իմ ծրագրերի՞ն: Կարելի՞ է ենթադրել, որ բնությունը ինձ չի շնորհել բավականաչափ երևակայությամբ, որպեսզի ես նույնպես Ուտոպիա ստեղծեմ: Արդյո՞ք օրենքը պետք է ընտրությունը կատարի այդքան շատ մտահաղացումների միջև և ծառայության ժամանակ օգտվի հասարակական ուժից:

Օրենքն արդարություն է:

Եվ թող, որ չասվի, ինչպես և շարունակվում է, որ օրենքը այս իմաստով կլիներ աթեիստական, անհատական և անսիրտ, և որ այն կստիպեր մարդկությանը կրել իր սեփական իմիջը: Սա անհեթեթ եզրակացություն է՝ բավականաչափ արժանի կառավարական հրապուրանքին, որը մարդկությունն օրենքի մեջ է տեսնում:

Հետո ի՞նչ: Արդյո՞ք նշանակում է, որ եթե մենք ազատ ենք, ապա պետք է դադարենք գործել: Արդյո՞ք հետևում է, որ եթե մենք օրենքից ազդակ չենք ստանում, ապա մենք ոչ մի ազդակ չենք ստանա: Արդյո՞ք հետևում է, որ եթե օրենքը սահմանափակվում է մեզ ապահովելով մեր ընդունակությունների ազատ իրականացմամբ, ապա մեր ընդունակությունները կաթվածահար են լինելու: Արդյո՞ք հետևում է, որ եթե օրենքը մեզ չի պարտադրում կրոնի ձևեր, միավորումների եղանակներ, ուսուցման մեթոդներ, աշխատանքի կանոններ, փոխանակման ուղղություններ և բարեգործության ծրագրեր, ապա մենք պետք է անհամբերությամբ ներքաշվենք արեհիզմի, մեկուսացման, անտեղյակության, թշվառության և եսասիրության մեջ: Արդյո՞ք հետևում է, որ մենք այլևս չպետք է ճանաչենք Աստծո գորությունն ու մեծահոգությունը, որ մենք պետք է դադարենք միավորվել, օգնել միմյանց, սիրել և օգնել մեր դժբախտ եղբայրներին, սովորել բնության գաղտնիքները և ձգտել կատարելության մեր գոյության ընթացքում:

Օրենքն արդարություն է:

Եվ արդարադատության օրենքի, իրավունքի տիրապետության, ազատության, անվտանգության, կայունության և պատասխանատվության ազդեցության ներքո է, որ յուրաքանչյուր մարդ կհասնի իրեն արժանի չափի, իր գոյության ամբողջ արժանապատավությանը, և որ մարդկությունը կկատարի իր համար սահմանված առաջընթացը՝ կարգով և հանգստությամբ, ճիշտ է՝ դանդաղ, բայց վստահ:

Ես կարծում եմ՝ իմ տեսությունը ճիշտ է, քանի որ որևէ լինի հարցը, որի շուրջ ես քննարկում եմ ծավալում կրոնական, փիլիսոփայական, քաղաքական կամ տնտեսական, ազդի բարեկեցության, բարոյականության, հավասարության, իրավունքի, բնակչության, վարկի կամ կառավարության վրա, գիտական հորիզոնի որ կետից էլ ես սկսեմ, ես անընդհատ հանգում եմ նույն բանին. սոցիալական խնդրի լուծումն ազատության մեջ է:

Եվ արդյո՞ք ես փորձ չունեմ իմ կողմում: Աչքի անցկացրե՛ք ամբողջ աշխարհը: Որո՞նք են ամենաերջանիկ, ամենաբարոյական և ամենախաղաղասեր ազգերը: Նրանք, որտեղ օրենքն ամենաքիչն է միջամտում մասնավոր գործունեությանը, որտեղ կառավարությունն ամենաքիչն է զգացվում, որտեղ անհատականությունն ամենամեծ գործունեության շրջանակն ունի, իսկ հանրային կարծիքը՝ ամենամեծ ազդեցությունը, որտեղ վարչակազմի մեքենան ամենաքիչ կարևորն է և նվազագույն բարդը, որտեղ հարկումներն ամենաթեթևն են և նվազագույն անհավասարաչափը, հանրային դժգոհությունը նվազագույն պատրաստակամությունն ունի և ամենաքիչն է ենթակա արդարացման, որտեղ անհատների և դասակարգերի պատասխանատվությունը ամենաակտիվն է և որտեղ, հետևաբար, եթե բարոյականությունը կատարյալ վիճակում չէ, ապա նրանք ամեն գնով անընդհատ հակված են ուղղել իրենց, որտեղ գործարքները, հանդիպումները և ասոցիացիաները

ամենաքիչ կաշկանդվածն են, որտեղ աշխատանքը, կապիտալը և արտադրությունը ամենաքիչն են տուժում արհեստական տեղահանություններից, որտեղ մարդկությունը ամբողջովին հետևում է իր բնական ընթացքին, որտեղ Աստծո միտքը գերակայում է մարդկանց հայտնագործություններին: Կարճ ասած՝ նրանք, ովքեր այս գաղափարն ամենալավն են հասկանում - իրավունքի սահմաններում բոլորը պետք է սերեն մարդու ազատ, կատարյալ և գիտակցված գործողությունից, օրենքով կամ ուժով ոչ մի փորձ չպիտի արվի՝ բացառությամբ համընդհանուր արդարադատության իրականացումից:

Ես չեի կարող խուսափել այն եզրակացությանը հանգելուց, որ աշխարհում շատ մեծ մարդիկ կան, շատ օեմստիքներ, կազմակերպիչներ, հասարակության հրահանգիչներ, մարդկանց խմբավարներ, ազգերի հայրեր, և այլն, և այլն: Շատ մարդիկ են իրենց մարդկությունից վեր դասում կառավարելու և հովանավորելու համար, շատ մարդիկ են գործարկներ կնքում դրան մասնակցելով: Պատասխանը կլինիսի.«Դուք ինքներդ զբաղված եք սրանով այս ամբողջ ընթացքում»: Շատ ճիշտ է: Բայց պետք է ընդունել, որ դա իմ ասածից բոլորովին այլ իմաստով է, և եթե ես միանամ բարերարներին, ապա միայն նրանց հափշտակումները մեղմացնելու համար:

Ես չեմ անում այնպես, ինչպես Վոկոստն իր ավտոմատով, այլ այնպես, ինչպես ֆիզիոլոգն է անում մարդկային կմախքի կառուցվածքով: Ես կոլտումնասիրեի և կհիանայի դրանով:

Ես դա անում եմ այն ոգով, որը վերածնել է հայտնի ճանապարհորդ: Նա հայտնվել է մի վայրի ցեղի մեջ: Հենց նոր երեխա է ծնվել, և գուշակների, կախարդների ու հեքիմների բազմություն է հավաքվել նրա կողքը՝ զինված օղակներով, կեռիկներով ու պարաններով: Մեկն ասաց.«Այս երեխան երբեք չի առնի խաղաղության չիբուխի հոտը, եթե ես չձգեմ իր քթածակերը»: Մյուսն ասաց.«Նա չի ունենա լսողության զգայարան, եթե ես իր ականջները չքաշեմ իր ուսերին»: Երրորդն ասաց.«Նա երբեք արևի լույսը չի տեսնի, եթե ես իր աչքերին շեղություն չտամ»: Չորրորդն ասաց.«Նա երբեք չի լինի ուղղածիգ, եթե ես չոլորեմ իր ոտքերը»: Հինգերորդն ասաց.«Նա ի վիճակի չի լինի մտածել, եթե ես չսեղմեմ իր ուղեղը»: «Վերջ տվե՛ք», - ասաց ճանապարհորդը, - «Աստված ինչ անում է, լավ է արվում: Մի՛ ձևացրեք, թե նրանից առավել գիտեք: Եվ ինչպես նա օրգաններ է տվել այս թույլ էակին, թողե՛ք, որ այդ օրգաններն ինքնուրույն զարգանան, ուժեղանան վարժություններով, օգտագործմամբ, փորձով և ազատությամբ»:

Աստված մարդկության մեջ արմատացրել է նաև ամենը, ինչ անհրաժեշտ է այն իրենց ճակատագրերը իրականացնելու համար: Կա նախասահմանված սոցիալական ֆիզիոլոգիա, ինչպես նաև նախասահմանված մարդկային ֆիզիոլոգիա: Սոցիալական մարմինները ձևավորվում են այնպես, որ հնարավորություն ունենան ներդաշնակորեն զարգանալ մեծ ազատության մեջ: Այսինքն՝ հեռու հեքիմների և կազմակերպիչներ հետ: Հեռու իրենց օղակներով, շղթաներով,

կեռիկներով ու կախիչներով: Հեռու իրենց արհեստական մեթոդներով:  
Հեռու իրենց սոցիալական սեմինարներով, կառավարական  
քմահաճույքներով, իրենց համակենտրոնացմամբ, հարկացուցակներով,  
համալսարաններով, պետական կրոններով, իրենց անհատույց կամ  
մենաշնորհող բանկերով, իրենց սահմաններով, սահմանափակումներով,  
բարոյականացումներով և հարկերի միջոցով հավասարեցումով: Եվ հիմա  
ապարդյուն կերպով այդքան շատ համակարգեր ենթարկելով  
սոցիալական մարմնին՝ թող նրանք վերջ դնեն, որտեղ պետք է սկսեին,  
մերժե՛ք բոլոր համակարգերը և ազատություն կիրառե՛ք. ազատություն,  
որը Աստծո և իր գործերի հանդեպ հավատքի գործածում է: